# ԿՈՐՍՎԱԾ ՎԱՇՏԸ-2



«Պաշտպանենք զինվորների իրավունքները» ծրագիր
Արմավիրի մարզ, Արագածոտնի մարզ

ԱՍՊԱՐԵԶ
ASPAREZ

NED

ԱՍՊԱՐԵԶ

ASPAREZ

NED

# ԿՈՐՍՎԱԾ ՎԱՇՏԸ-2

## «Պաշտպանենք զինվորների իրավունքները» ծրագիր

## Արմավիրի մարզ

## Արագածոտնի մարզ

Բանակում զինադադարից (1994թ. մայիսի 12) հետո մահացած, սպանված կամ ինքնասպանություն գործած զինվորների մատյան:

- Արխիվային փաստաթղթեր
- Հոդվածներ
- Առաջարկություններ
- Ցուցակներ

ԳՅՈՒՄՐԻ

«ՔԱՂԱՔԻ ԳՐԱՏՈՒՆ» 2013

Այս գրքում ի մի են բերվել եւ ամփոփվել Հայաստանի բանակում Արմավիրի եւ Արագածոտնի մարզերից զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած այն զինվորականների մասին տեղեկությունները եւ ցուցակները, որոնք զանազան հանգամանքներում մահացել են. առողջական պատճառներ, սահմանային միջադեպ, դիվերսիոն հարձակում, հրազենի եւ զինամթերքի սխալ օգտագործում, սպանություն, ինքնասպանություն, վթար եւ այլն: Անցած տարի լույս տեսած համանման գրքում ի մի էինք բերել ահմանման տեղեկությունները Շիրակի մարզի մասով: Այս ժողովածու-հուշամատյանը վերաբերվում է Արմավիրի եւ Արագածոտնի մարզերին:

Ջանքեր են ներդրվել գրքում ի մի բերելու հանրությանը հայտնի բոլոր դեպքերը, սակայն զանազան պատճառներով այս մատյանում բերված ցանկը ամբողջական համարել չի կարելի, այդպես էլ չի հաջողվել գտնել մի քանի զոհվածների հարազատներին՝ տեղեկությունները ճշտելու համար:

Այս հրատարակության եւ ամբողջ ծրագրի նպատակը հանրության եւ իշխանությունների ուշադրությունը խնդրին եւս մեկ անգամ հրավիրելն է, բանակային խնդիրների կարգավորման համար ավելի եռանդուն ջանքերի անհրաժեշտության շեշտադրումը, եւ հավաստիացումը, թե բանակային մահերի խնդիրը նոր չէ, այն շարունակաբար առկա է զինադադարից սկսած: Գիրքը նախատեսված է մասնագիտական շրջանակների եւ զոհերի մերձավորների համար:

Գիրքը լույս է ընծայվել «Պաշտպանենք զինվորների իրավունքները-2» ծրագրի շրջանակներում, ամերիկյան Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (National Endowment for Democracy) օժանդակությամբ:

© 2013, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

# ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը 2012 թվի հոկտեմբերից մինչեւ 2013 թվի սեպտեմբերն իրականացրեց «Պաշտպանենք զինվորների իրավունքները-2» ծրագիրը, հետազոտելով, հավաքելով եւ ամփոփելով տեղեկություններ Արմավիրի եւ Արագածոտնի մարզերից բանակ գնացած, ժամկետային կամ պայմանագրային ծառայության անցած, բայց տարբեր պատճառներով մահացած զինվորականների մասին: Մեկ տարի առաջ իրականացվել էր համանման մեկ այլ ծրագիր Շիրակի մարզում, որի արդյունքներով լույս էր ընծայվել «Կորսված վաշտը» ժողովածու-հուշամատյանը:

Ծրագիրն իրականացվում է ամերիկյան Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (National Endowment for Democracy) օժանդակությամբ:

Այս ծրագրի նպատակներից էր բացահայտել եւ համակարգել տեղեկություններ Արմավիրի եւ Արագածոտնի մարզերից բանակ զորակոչված եւ այնտեղ մահացած զինվորների եւ զինվորականների մահացությունների պատմությունները, վերլուծել եւ համակարգել պատճառները, հրապարակայնություն ապահովել այդ ծավալուն ուսումնասիրության եւ բանակում տեղի ունեցած սպանությունների եւ ինքնասպանությունների մասին, ինչպես նաեւ այդ ուսումնասիրության եւ վերլուծությունների հիման վրա կազմել բանակում զինծառայողների ծառայության պայմանների բարելավման առաջարկություններ՝ ուղղված ՀՀ իշխանություններին:

Ծրագրի երկարաժամկետ ազդեցության ակնկալիքն այն է, որ բանակային ռեֆորմների վրա կգործի այնպիսի ազդեցություն, ինչի արդյունքում բանակում ոչ մարտական իրավիճակներում զինվորականների եւ զինվորների սպանությունների եւ ինքնասպանությունների թիվը կնվազի եւ այդ դեպքերը իսպառ կվերանան:

### Կարիքի հիմնավորումը

Չնայած Հայաստանը արդեն 22 տարի է, ինչ ժողովրդավարացում է հայտարարել, սակայն երկիրը ժողովրդավարությունից մնում է բավականաչափ հեռու. բազմիցս խախտվում են մարդկանց խոսքի ազատության, տեղաշարժման, հանրահավաքների, կյանքի, աշխատանքի, սոցիալական, արդար դատավարության եւ այլ իրավունքները: Ի տարբերություն հայաստանյան հասարակական կյանքի եւ իշխանությունների գործողությունների բազմաթիվ ոլորտների, որոնք հնարավոր է հասարակական մոնիտորինգի ենթարկել, Հայաստանի բանակը մնում է քաղաքացիական հասարակության կառույցների համար համեմատաբար նվազ մատչելի, որոշ դեպքերում՝ փակ, ուղղակի անմատչելի կառույց: Իշխանությունները բանակի ներսում տեղի ունեցող անօրինական փոխհարաբերությունները, զինվորների եւ սպաների սպանություններն ու ինքնասպանությունների դեպքերի դրդապատճառքները ջանում են հնարավորինս փակ պահել հասարակությունից, հասարակական կազմակերպությունների մուտքը բանակ՝ հնարավորինս սահմանափակել, իսկ ավելի շատ՝ արգելել, հաճախ այս արգելքները մեկնաբանելով այնպես, որ Հայաստանը շրջապատված է մի քանի թշնամի պետություններով, գտնվում է սառեցված կոնֆլիկտի գոտում ու բանակի ներսում տիրող կացության ուսումնասիրությունները եւ մանավանդ դրանց մասին հրապարակումներն ու քննադատությունները զինվորականների եւ իշխանությունների հացցեին, իբր, վտանգում են Հայաստանի ազգային անվտանգությունը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբի նախնական դիտարկումների արդյունքում, որոնք արվել են ավելի քան 11 տարի շարունակ՝ ակումբի ստեղծման ժամանակնե-

րից, պարզվել է, որ ղարաբաղյան պատերազմի 1994 թվի մայիսի 12-ի հրադադարից հետո բանակում մահացել, սպանվել կամ ինքնասպանություն է գործել ավելի քան հազար զինվորական, հիմնականում ժամկետային զինծառայող զինվորներ, որոնք զորակոչվում են բանակ երկու տարով, ինչպես նաեւ՝ սպաներ, ենթասպաներ, որոնք պայմանագրային ծառայողներ են եղել:

2009 թվականի ընթացքում Հայաստանի բանակում զոհվել է 42 հոգի, որոնցից 6-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման պատճառով, 2010-ին՝ 54 զինծառայող, որոնցից 11-ը՝ ըստ պաշտոնական հաղորդագրությունների, զոհվել են Ադրբեջանի հետ ղարաբաղյան եւ հայաստանյան շփման գծում՝ զինված ուժերի հետ տեղային բախումների արդյունքում, նշանառուների կրակոցներից եւ դիվերսանտների գործողություններից, իսկ մյուս 43 զինվորականները սպանվել են կամ ինքնասպանություն են գործել բանակում առկա փոխհարաբերությունների, ապօրինությունների, հանցագործությունների, բարոյահոգեբանական իրավիճակի պատճառով ծագած վեճերի, դժբախտ պատահարների արդյունքում:

**Անցած 5 տարիների վիճակագրությունը հետեւյալն է.**

| | Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի տվյալներով | ՀՀ եւ ԼՂՀ պաշտոնական տվյալներով | Այդ թվում հրադադարի ռեժիմի խախտման պատճառով |
|---|---|---|---|
| 2009 | 42 | 42 | 6 |
| 2010 | 54 | 54 | 11 |
| 2011 | 39 | 36 | 11 |
| 2012 | 49 | 49 | 12 |
| 2013 | 31 | 31 | 5 |
| Ընդամենը | **215** | **212** | **45** |

Զինադադարից հետո Արմավիրի մարզից բանակ զորակոչված եւ մահացած զինվորների եւ սպաների թիվը զանազան տվյալներով գերազանցում է 100 հոգին, իսկ Արագածոտնի մարզի դեպքում՝ մոտ 80: Խաղաղ պայմաններում՝ անցած 18 տարիներին բանակում մահացածների ընդհանուր, կամ որեւէ մարզային թվի մասին չկա որեւէ պաշտոնական տեղեկություն: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբին եւ իրավապաշտպան մի շարք կազմակերպություններին հայտնի են բազմաթիվ գործեր, երբ բանակում սպանվածների կամ մահացածների հարազատները դատարաններում վիճարկել են եւ վիճարկում են սպանության կամ մահվան պատճառները, կամ չեն ընդունել այդ գործերով մեղադրված, դատված եւ դատապարտված անձանց մեղավորությունը եւ այլն: Պաշտոնական եզրակացությամբ՝ ինքնասպանություններ գործած զինվորականների ծնողները կամ հարազատները հիմնականում չեն ընդունում այդ պատճառը, որպես զինվորականի մահվան իրական պատճառ: Մի շարք լրագրողներ եւ հասարակական գործիչներ, ովքեր ակտիվորեն մասնակցել են ինքնասպանություններ որակված գործերով դատաքննություններին, պարբերաբար կասկածներ են հայտնում, որ այդ որակումները կեղծ են լինում, այս կամ այն սպայից կամ ծառայակցին մեղադրանքից հեռու պահելու եւ մահացած զինվորականի ընտանիքներին փոխհատուցման գումարների նվազեցման համար:

Խնդրի կարգավորման համար հարկավոր է տեղեկատվության, դեպքերի դասակարգման, պատճառների ուսումնասիրման, վերլուծությունների, հանրային իրազեկման եւ իշխանություններին այսօրինակ ուսումնասիրությունների հիման վրա համակարգային փոփոխությունների առաջարկ ներկայացնել: Խնդիրը մտահոգում է շատ շատերին եւ մանրամասն ուսումնասիրման, վերլուծման ու լուծման կոնկրետ առաջարկությունների կարիք ունի: Միայն անցած 18 տարիների ընթացքում եւ մեր օրերում տեղի ունեցող այս եւ համանման դեպքերի համակողմանի ուսումնասիրությունն ու դրանցից քաղված դասերը կարող են դառնալ հրապարակայնության հիման վրա ամրապնվող ազգային անվտանգության բաղադրիչ:

**Ծրագրի հեռահար նպատակը.**

Հետազոտական, հանրային իրազեկման, եւ շահերի պաշտպանության հնարավոր գործիքների միջոցով հասնել նրան, որ բանակում զինվորականների սպանությունների, ինքնասպանությունների եւ մահվան դեպքերը նվազեն եւ այդ երեւույթները իսպառ կվերանան:

**Ծրագրային գործողությունները.**

1. Որոնել, գտնել եւ հետազոտել Արմավիրի եւ Արագածոտնի մարզերից բանակում 1994 թվի մայիսի 12-ից մինչեւ ծրագրի իրականացման պահը սպանված, մահացած կամ ինքնասպանություն գործած բոլոր զինվորների եւ զիվորականների մասին բոլոր հնարավոր տեղեկությունները. բերանացի վկայություններ, մահվան մասին տեղեկություններ, դատական եւ այլ փաստթղթեր, լուսանկարներ, գծագրեր, նկարագրեր: Յուրաքանչյուր մահացածի կամ սպանվածի մասին կազմել առանձին գործ՝ թղթապանակ, իսկ համակարգչում ունենալ դրանց էլեկտրոնային տարբերակներ:

Տեղեկատվության հավաքման համար օգտագործվել են հետեւյալ գործիքները.

- Հայտարարություններ տեղական ԶԼՄ-ների միջոցով, որոնցով իրազեկվել է, որ բանակում սպանվածների ընտանիքների անդամները կարող են դիմել Ակումբ՝ ակումբի մասնագետների այցելությունները կազմակերպելու համար:

- Իրավապաշտպան ՀԿ-ներից, իրավաբաններից եւ փաստաբաններից հավաքվել են իրենց ունեցած տեղեկությունները տուժածների ընտանիքների եւ դեպքերի մասին:

- Պետական եւ պաշտոնական ատյաններին հղվել են տեղեկության հարցումներ՝ տուժածների թիվը եւ հասցեները իմանալու համար:

- Ծրագրի իրավաբաններն ու նրանց օգնականները այցելություններ են իրականացրել Արմավիրի եւ Արագածոտնի մարզի ավելի քան 130 համայնքներ՝ համայնքի տարեցների, ակտիվ բնակիչների հետ հանդիպումների եւ նրանցից նախնական տեղեկություններ ստանալու համար: Ապա իրականացվել են հիմնական այցելությունները՝ բանակում սպանվածների ընտանիքներ: Այս հանդիպումների ընթացքում հավաքվել են ծրագրի հիմնական տեղեկությունները, որոնք են.

- Բանակում սպանության, մահվան կամ ինքնասպանության դեպքերի ժամկետները, հանգուցյալի անուն-ազգանունը, հասցե,

- Մահվան ժամանակի, վայրի, պատճառի պաշտոնական նկարագիրը, որ հաղորդվել է ազգականին,
- Մահվան ժամանակի, վայրի, պատճառի ոչ պաշտոնական նկարագիրը, որ ունի ազգականը, եթե համաձայն չէ պաշտոնական վարկածի հետ,
- Զինվորականի մահվանն առնչվող բոլոր առկա փաստաթղթերի, նկարների, լուսանկարների պատճենները,
- Կոնկրետ դեպքի հետ հնարավոր առնչություն ունեցած պաշտոնական հետաքննության, դատական գործի նյութերի պատճենները, եթե այդպիսիք կան,
- ԶԼՄ հրապարակումները կոնկրետ դեպքի մասին, եթե դրանք կան ազգականների մոտ կամ համացանցում:

Համակարգվել եւ դասակարգվել են ստացված տեղեկությունները՝ ըստ մահվան տեսակների, ժամանակների, զինվորականների ազգանունների այբբենական կարգի, պաշտոնական եւ ոչպաշտոնական վարկածների, ժամանակագրության, աշխարհագրության, տուժածների զինվորական, սոցիալական կարգավիճակների եւ այլն: Կազմվել են հատուկ աղյուսակներ մատյաններ, որոնք հրապարակվել են ակումբի համացանցային կայքում եւ հրապարակվում են այս գրքում:

Այս հետազոտության արդյունքում ստացվել են մոտ 2200 էջ փաստաթուղթ, որի մեծ մասը զետեղվել է «Ասպարեզ» ակումբի www.asparez.am կայքում.

Արմավիրի մարզ. http://www.asparez.am/wp-content/uploads/2013/04/armavir-zinvor-2.11.2013.pdf

Արագածոտնի մարզ. http://www.asparez.am/wp-content/uploads/2013/04/aragatsotn-zinvor-2.11.2013.pdf

Ծրագրի ընթացքում մանրամասնությամբ ուսումնասիրվել է 174 դեպք, որոնք բոլորը ներկայացված են այս մատյանում: (116՝ Արմավիրի մարզում եւ 58 դեպք՝ Արագածոտնի մարզում):

Այս գրքում զետեղված բոլոր տեղեկությունները հրապարակվում են զոհվածների հարազատների համաձայնությամբ: Միայն երկու դեպքի մասին զոհվածների հարազատները տեղեկությունները հաղորդելու հետ մեկտեղ խնդրել են դրան չհրապարակել, այդ տեղեկությունները տեղ չեն գտել ոչ այդ գրքում, ոչ էլ կայքում:

Չնայած ծրագրի պաշտոնական ավարտին, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը շարունակելու է իր ուսումնասիրությունները եւ կայքի համապատասխան բաժինը շարունակ լրացվելու նոր տեղեկություններով: Լրացուցիչ տեղեկություններ ունեցողներին խնդրվում է տեղեկացնել Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ՝ իրավաբաններին, հեռախոս. +374 312 50622:

Ծրագրի իրականացման արդյունքում ստացված ինտերակտիվ աղյուսակները յուրաքանչյուր զինվորականի գործի մանրամասներով եւ փաստաթղթերի որոշակի ծավալներով այստեղ են. http://www.asparez.am/project/defend-soldiers-rights-2/

Ծրագրի իրականացման արդյունքում ստացված աղյուսակը դասակարգման ակտիվ կարգավորմամբ այստեղ է. http://www.asparez.am/shirakactive/base.html

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Այս մատյանում զետեղվել են հետեւյալ տեղեկությունները**


1. Հայաստանի բանակում Արմավիրի մարզից զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած եւ զինադադարի ընթացքում զոհված զինվորականների մասին տեղեկությունները եւ լուսանկարները ........................................................ 9

2. Հայաստանի բանակում Արագածոտնի մարզից զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած եւ զինադադարի ընթացքում զոհված զինվորականների մասին տեղեկությունները եւ լուսանկարները ........................... 71

3. Խնդրի մասին տարբեր հրապարակումներից քաղվածքներ ..............................103

4. Խնդրի կարգավորմանն ուղղված եւ բարեփոխումների մասին առաջարկություններ................................................................... ..................135

5. Ծրագրի, տեղեկություններ հավաքելու հարցաթերթիկի օրինակը ....................141

6. Ծրագրի բյուջեն ..........................................................................................142

7. Հայաստանի բանակում Արմավիրի մարզից զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած եւ զինադադարի ընթացքում զոհված զինվորականների մասին տեղեկությունների աղյուսակ .......................................145

8. Հայաստանի բանակում Արագածոտնի մարզից զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած եւ զինադադարի ընթացքում զոհված զինվորականների մասին տեղեկությունների աղյուսակ .......................................146

# Արմավիրի մարզից

## զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած եւ  զինադադարի ընթացքում զոհված զինվորականների մասին տեղեկությունները եւ լուսանկարները



## ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1993թ. մարտի 3-ին, Արմավիրի մարզի Հայթաղ գյուղում, բնակվել է նույն գյուղում: Արման Կարապետյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է ութնամյա կրթություն, ապրել է ծնողների եւ եղբոր հետ:

2007թ. մայիսի 5-ին Արմանը զորակոչվել է Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում՝ Մարտակերտում:

Զոհվել է 2009թ. դեկտեմբերի 14-ին, Մարտակերտի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած, նշվում է որովայնի շրջանում հրազենային վիրավորումը, զինվորներից մեկը ցանկացել է կրակել մեկ այլ զինվորի՝ սխալմամբ կրակել է Արմանին: Մահվան պաշտոնական վարկածի հետ ծնողները համամիտ են, քրեական գործ չի հարուցվել, քանի որ կրակողն ինքնասպան է եղել:

Կարապետյանների ընտանիքը ՊՆ-ից ստացել է միանվագ՝ 2.700.000 ՀՀ դրամ, 10.000 դրամ փոխհատուցում եւ ամենամսյա թոշակ/ամսական՝ 20.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 001-Արմավիր:



## ԶՈՀՐԱԲ ԺԻՐԱՅՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1981թ. ապրիլի 26-ին, Արմավիրի մարզի Հայթաղ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Զոհրաբ Ավետիսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է ութնամյա կրթություն:

1999թ. մայիսին Զոհրաբը զորակոչվել է բանակ՝ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Խոջալուի N զորամասում:

Մահացել է 1999թ. հուլիսի 6-ին՝ զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է շնչահեղձության ասֆեկցիան, ըստ Զոհրաբի մոր՝ տիկին Հեղինեի, մահվան պատճառը սպաների հետ ունեցած վիճաբանությունն է եղել:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.000 ԱՄՆ դոլար եւ 150.000 ՀՀ դրամ, 10.000 դրամ ամսական փոխհատուցում եւ 20.000 դրամ ամենամսյա թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 002-Արմավիր:

## ԳԵՎՈՐԳ ԺՈՐԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Ծնվել է 1979թ. հոկտեմբերի 26-ին, Արմավիրի մարզի Հայթաղ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ հողագործ ծնողների, երկու քույրերի եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է ոչ այնքան բարվոք: Գեւորգ Մանուկյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն, զբաղվել է սպորտով՝ ծանրամարտով:

1997թ. հոկտեմբերի 28-ին Գեւորգը զորակոչվել է բանակ՝ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում, Մատաղիսում:

Զոհվել է 1998թ. ապրիլի 4-ին՝ Մատաղիսի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է հրազենային վնասվածքը, ներքին արյունահոսությունը:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Ժորա Մանուկյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 199.000 ՀՀ դրամ եւ 200.000 դրամ՝ թաղման ծախսերի համար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 003-Արմավիր:

## ՄՀԵՐ ԱՐԱՐՈՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Ծնվել է 1977թ. աշնանը, Արմավիրի մարզի Հայթաղ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, կնոջ, երեք եղբայրների եւ քրոջ հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Մհեր Մարգարյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. հունիսին Զոհրաբը զորակոչվել է բանակ՝ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Նոյեմբերյանի N զորամասում:

Մահացել է 1995թ. հունիսի 29-ին՝ զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է կայծակնահարությունը:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 7.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 004-Արմավիր:



## ԱՐԹՈՒՐ ՆՈՐԱՅՐԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ծնվել է 1991թ. նոյեմբերի 3-ին, Արմավիրի մարզի Արագած գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Մայրը հացթուխ է եղել: Արթուր Մխիթարյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է ութնամյա կրթություն:

2009թ. նոյեմբերի 17-ին Գեւորգը զորակոչվել է բանակ՝ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Իջեւանի զորամասում:

Զոհվել է 2010թ. սեպտեմբերի 25-ին՝ նույն զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է հրազենային գնդակի միջանցիկ, թափանցող վիրավորումը:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Քննիչներ՝ Վեցերորդ կայազորային քննչական բաժնի քննիչ՝ Ա.Ա.Սեւինյան, մեղադրող դատախազ՝ Թ.Ն.Միրզաբեկյան: Գործը քննվել է Իջեւանի դատարանում: Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1 մասով 8 տարի ազատազրկման է դատապարտվել Գրիգոր Գառնիկի Հովակիմյանը, ով իր պատիժը կրում է Վանաձորի քրեակատարողական հիմնարկում:

Ըստ մոր՝ Աննա Մխիթարյանի, մեղադրանքը եղել է արդարացի:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.000.000 ՀՀ դրամից ավել, եւ 20.000 դրամ՝ ամենամսյա նպաստ եւ 10.000 դրամ ամենամսյա փոխհատուցում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 005-Արմավիր:

## ՄԵՆՈՒԱ ՄԵԽԱԿԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Ծնվել է 1987թ. հոկտեմբերի 11-ին, Արմավիրի մարզի Արագած գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ երկու քույրերի հետ: Մենուա Մեխակյանը, բանակ զորակոչվելիս, ուսանող է եղել:

2007թ. մայիսին Մենուան զորակոչվել է բանակ՝ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Էջմիածնի զորամասում:

Մահացել է 2008թ. սեպտեմբերի 26-ին՝ Էջմիածին-Գյումրի ավտոմայրուղու վրա՝ ավտովթարից, որն էլ նշվում է որպես մահվան պաշտոնական վարկած:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել, մահացել է նաեւ վարորդը:

Ըստ մոր՝ Մարինեի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.000.000 ՀՀ դրամից ավել գումար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 006-Արմավիր:

## ՀԱՅԿ ԱՎԱԳԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



Ծնվել է 1979թ.ն, Արմավիրի մարզի Արագած գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ երկու քույրերի հետ: Հայկ Համբարձումյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է ութնամյա կրթություն:

1997թ. գարնանը Հայկը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հադրութում:

Զոհվել է 1997թ. հոկտեմբերի 28-ին՝ Հադրութի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած, նշվում է հրազենային վնասվածքը՝ կրակոցից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հորաքրոջ՝ Սոնա Մկրտչյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 200.000 ՀՀ դրամ եւ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 007-Արմավիր:

## ՀԱՅԿ ՎԱՍԻԼԻ ՄԿՐՏՉՅԱՆ



Ծնվել է 1992թ.ն, Արմավիրի մարզի Ամբերդ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ երկու քույրերի հետ: Հայկ Մկրտչյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2010թ. դեկտեմբերի 11-ին Հայկը զորակոչվել է բանակ՝ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ասկերանի զորամասում:

Զոհվել է 2011թ. սեպտեմբերի 7-ին՝ Ասկերանի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած, նշվում է՝ դիտավորյալ սպանություն, հեմոռագիկ շոկ, հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2 մասով եւ 359 հոդվածի 3 մասով: Գործը լսվում է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր՝ Հ.Դավթյան: Մեղադրվում է համածառայակից Լենդրուշ Նազլուխանյանը:

Ըստ եղբոր՝ Ռուբիկի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 2.800.000 ՀՀ դրամ եւ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 008-Արմավիր:



## ԱՐՏԱԿ ԱՇՈՏԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1976թ. նոյեմբերի 28-ին, Արմավիրի մարզի Ամբերդ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եւ երկու քույրերի հետ: Արտակ Ղազարյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. նոյեմբերին Արտակը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Գորիսում:

Զոհվել է 1996թ. մայիսի 1-ին՝ Մարտակերտի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ականի պայթյունից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Մայրը՝ Մարջիկը, ստացած դրամական փոխհատուցումների մասին տեղեկություններ չի ունեցել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 009-Արմավիր:

## ՎՌԱՄ ԳԱՐԵԳԻՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծնվել է 1957թ. օգոստոսին, Արմավիրի մարզի Ամբերդ գյուղում, բնակվել է նույն գյուղում: Վռամ Մնացականյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի բարձրագույն կրթություն:

1990-ականներին Վռամը կամավոր մեկնել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հադրութում, եղել է հրամանատար:

Զոհվել է 1997թ. ապրիլի 11-ին՝ Հորադիզի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, դատապարտել են ժամկետային զինծառայողի՝ 6 տարի ժամկետով, սակայն, ըստ տեղեկության աղբյուր Համլետի, դատապարտվածը 1 տարի անց դուրս է եկել բանտից, ազատվել է:

Դրամական փոխհատուցումների մասին տեղեկություններ չկան:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 010-Արմավիր:

## ՌՈՒԲԵՆ ԲՈՐԻՍԻ ՀԱԿՈԲՅԱՆ



Ծնվել է 1981թ. հունիսի 2-ին, Արմավիրի մարզի Այգեշատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Ռուբեն Հակոբյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1999թ. ամռանը Հայկը զորակոչվել է բանակ՝ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Արարատում:

Զոհվել է 1999թ. դեկտեմբերի 26-ին Արարատի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Դատական նիստերը տեղի են ունեցել Արարատում, սակայն ծնողները դատական նիստերին չեն մասնակցել:

Ըստ եղբոր՝ Բորիս Հակոբյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց չափը չի հիշում, ներկայումս ստանում են 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 011-Արմավիր:

## ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ



Ծնվել է 1959թ. դեկտեմբերի 7-ին, Արմավիրի մարզի Այգեշատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ կնոջ, դստեր եւ որդու հետ: Հակոբ Ղարիբյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1990-ականներին Հակոբը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում:

Զոհվել է 1994թ. նոյեմբերի 11-ին Մարտակերտի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Կինը՝ Գոհար Արշակյանը, ստացած միանվագ դրամական փոխհատուցման չափը չի հիշել, այժմ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 012-Արմավիր:



## ԱՐԱՐԱՏ ԺՈՐԱՅԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1975թ. հունվարի 1-ին, Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Արարատ Թադեւոսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն, աշխատել է կահույքի արտադրամասում:

1993թ. դեկտեմբերի 3-ին Արարատը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հորադիզում:

Զոհվել է 1994թ. օգոստոսի 6-ին Հորադիզի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից, մարտական գործողություններ կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Մարիամ Թադեւոսյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է, բայց ինքը չափը չգիտի, իսկ այժմ ստանում է 30.000 դրամ ամսական նպաստ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 013-Արմավիր:



## ԱԼԲԵՐՏ ԵՐՋԱՆԻԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (ՄՆՈ)

Ծնվել է 1967թ. նոյեմբերի 5-ին, Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ կնոջ, որդու եւ դստեր հետ: Ալբերտ Աբրահամյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է բարձրագույն կրթություն:

1990թ.ն Ալբերտը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է 339 մոտոհրաձգային գումարտակում, որպես վաշտի հրամանատար:

Մահացել է 2007թ. հուլիսի 13-ին Մեղրիում՝ կոլեգիայի նիստի ժամանակ: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է ինֆարկտը:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր՝ Վարդան Աբրահամյանի, ընտանիքին փոխհատուցում տրվել է բնակարանի համար, երեխաները ստանում են նաեւ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 014-Արմավիր:

## ՆԻԿՈԼԱՅ ՀՐԱՉԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ



Ծնվել է 1950թ.ն, ՌԴ Ալթայի շրջանում, բնակվել է Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ:

1993թ. սեպտեմբերին Նիկոլայը կամավոր մեկնել է պատերազմ՝ մտնելով Գագիկի ջոկատը: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ֆիզուլիի շրջանում, եղել է ենթասպա:

Մահացել է 1999թ. հուլիսի 10-ին Սոթք-Քարվաճառ (Քելբաջար) ճանապարհին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ավտովթար:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, վարորդին դատապարտել են 4 տարով, դատաքննությունն իրականացվել է Վարդենիսի դատարանում:

Ըստ կնոջ՝ Մարիամ Ավետիսյանի, երեւի թե դատապարտել են ճիշտ մարդու:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է մոտ 700.000 ՀՀ դրամ եւ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 015-Արմավիր:

## ԲԱԳՐԱՏ ԳԵՎՈՐԳԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ



Ծնվել է 1985թ. նոյեմբերի 13-ին, Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Բագրատ Կիրակոսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է բարձրագույն կրթություն:

2006թ. հունիսի 17-ին Բագրատը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Նոյեմբերյանի զորամասում:

Մահացել է 2007թ. հունիսի 2-ին, ժամը 12-ի սահմաններում՝ զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է ինքնասպանությունը, ըստ Բագրատի մոր՝ տիկին Արաքսյայի, սպանել են դիտավորյալ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց տիկին Արաքսյան չափը չի հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 016-Արմավիր:

## ՎԱԼԵՐԻԿ ՂԱԶԱՐԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1984թ. նոյեմբերի 20-ին, Արմավիրի մարզի Գեղակերտ (Սամաղար) գյուղում, բնակվել նույն գյուղում, մոր հետ՝ տնակում: Մայրն աշխատել է տեղի գործարանում: Վալերիկ Ղազարյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2002թ. նոյեմբերի Վալերիկը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Կապանում:

Մահացել է 2004թ. սեպտեմբերի 1-ին Կապանի դիրքերի ճանապարհին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ավտովթար:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ տատի՝ Արուս Մովսիսյանի, երեւի ընտանիքը ստանում 30.000 դրամ ամենամսյա թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 017-Արմավիր:



## ԹԵՄՈՒՐ ՉՈԼՈՅԻ ԱՋԱՄՅԱՆ

Ծնվել է 1982թ. հուլիսի 6-ին, Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ երկու քույրերի հետ: Թեմուր Աջամյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է ութնամյա կրթություն:

2000թ. դեկտեմբերին Թեմուրը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ստեփանակերտում:

Մահացել է 2001թ. հունվարի 30-ին Ստեփանակերտի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ վազքի ժամանակ շնչահեղձ է եղել, պարզվել է, որ թոքերի հիվանդություն է ունեցել:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հորեղբոր կնոջ Այայի՝ ընտանիքը ոչ միանվագ օգնություն է ստացել, ոչ էլ թոշակ/ամսական է ստանում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 018-Արմավիր:

## ԿԱՄՈ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԻՆՋԻՂՈՒԼՅԱՆ



Ծնվել է 1976թ. հուլիսի 3-ին, Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, երկու եղբայրների եւ երկու քույրերի հետ: Կամո Ինջիղուլյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է ութնամյա կրթություն:

1993թ. դեկտեմբերի 3-ին Կամոն զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Սիսիանում:

Զոհվել է 1996թ. մայիսի 30-ի երեկոյան Սիսիանում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր կնոջ Նունեի, ընտանիքը 30.000 դրամ թոշակ/ամսական է ստանում, իսկ միանվագ օգնություն ստանալու մասին որեւէ բան չի հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 019-Արմավիր:

## ՈՒՍՈՎ (ՀՈՒՍԻԿ) ԶՈՐԲԱՅԻ ՀԱՍՈՅԱՆ



Ծնվել է 1978թ. հուլիսի 17-ին, Արմավիրի մարզի Առատաշեն գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, երեք եղբայրների եւ չորս քույրերի հետ: Ուսով Հասոյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1996թ. ամռանը Ուսովը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Չինարում:

Զոհվել է 1997թ. փետրվարի 4-ին Չինարի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ինքնասպանություն, հրազենային վնասվածք: Ծնողները պաշտոնական վարկածի հետ համաձայն չեն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր տիկին Աորսորի՝ ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է մոտ 800 ԱՄՆ դոլար եւ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 020-Արմավիր:



## ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1976թ. հոկտեմբերի 5-ին, Էջմիածնում, բնակվել է Արմավիրի մարզի Առատաշեն գյուղում՝ ծնողների հետ: Ռաֆիկ Մանուկյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի բարձրագույն կրթություն:

1994թ. դեկտեմբերի 23-ին Ռաֆիկը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Լուսակերտում, Ստեփանակերտում:

Զոհվել է 1995թ. հունիսի 23-ին Մարտունու դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ պատահական հրազենային վնասվածք: Ծնողները պաշտոնական վարկածի հետ համաձայն չեն, ըստ նրանց, մահվան պատճառը դիտավորյալ սպանությունն է:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, բայց ծնողները չեն կարողացել մասնակցել դատաքննությանը, քանի որ այն տեղի է ունեցել ԼՂ-ում:

Ըստ մոր՝ Ջուլիետ Մանուկյանի, ընտանիքը ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական, մեկ անգամ էլ ալյուր են ստացել որպես օգնություն:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 021-Արմավիր:



## ՍԱՄՎԵԼ ՍԼԱՎԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ծնվել է 1975թ. սեպտեմբերի 26-ին, Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, երկու եղբայրների եւ քրոջ հետ: Սամվել Կիրակոսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է ութնամյա կրթություն:

1990-ականներին Սամվելը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ֆիզուլիում:

Զոհվել է 1994թ. օգոստոսի 23-ին Ֆիզուլիում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից, մարտական գործողություններ կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Աստղիկ Կիրակոսյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումարի չի ստացել, ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 022-Արմավիր:

## ՍԱՄՎԵԼ ՌՈՄԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1972թ. հոկտեմբերի 18-ին, Երեւանում, Նորքի 4-րդ զանգվածում, բնակվել Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղում՝ ծնողների, երկու եղբոր, քրոջ, կնոջ եւ երկու դուստրերի հետ: Սամվել Թադեւոսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1993թ. դեկտեմբերի 3-ին Սամվելը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Խարբերդի զորամասում: Մահացել է 1997թ. հոկտեմբերի 17-ին զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գանգրենա, մահացել է վիրահատության ժամանակ, վիրահատել են 3 անգամ: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ քեռակնոջ՝ Լենա Կիրակոսյանի, ինքը տեղյակ չէ ՊՆ-ից միանվագ գումարի ստացման կամ չափի մասին, իսկ 30.000 դրամ թոշակ/ամսական՝ երեւի ստանում են:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 023-Արմավիր:

## ՍԱՐԻԲԵԿ ՕԹԱՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ



Ծնվել է 1976թ. հուլիսի 4-ին, Արմավիրի մարզի Գայ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ երկու եղբայրների հետ: Սարիբեկ Գալստյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն, եղել է քանդակագործ:

1994թ. նոյեմբերի 11-ին Սարիբեկը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Սիսիանում:

Մահացել է 1994թ. դեկտեմբերի 17-ին Գորիս-Սիսիան ճանապարհին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ավտոդթար:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հորեղբոր՝ Գալուստ Գալստյանի, ինքը տեղյակ չէ ՊՆ-ից ստացած միանվագ գումարի չափի մասին, ընտանիքը ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 024-Արմավիր:



## ՆՇԱՆ ԳՐԻՇԱՅԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ծնվել է 1980թ. ապրիլի 12-ին, Արմավիրի մարզի Լենուղի (Խորոնք) գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ քրոջ հետ: Նշան Գաբրիելյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է բարձրագույն կրթություն:

1998թ. Նշանը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Շամշադինում:

Զոհվել է 1999թ. ապրիլի 13-ին Տավուշի մարզի սահմանամերձ գոտում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք թշնամու գնդակից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ քրոջ՝ Նարինեի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է մոտ 500.000 ՀՀ դրամ միանվագ գումար, ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 025-Արմավիր:

## ԱՆԴՐԱՆԻԿ ՎԵԼԻԽԱՆԻ ՇՄՈՅԱՆ

Ծնվել է 1962թ. նոյմեբերի 22-ին, Արմավիրի մարզի Պտղունք գյուղում, բնակվել նույն գյուղում՝ կնոջ եւ երեք որդիների հետ: Անդրանիկ Շմոյանը կամավոր բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. հունիսի 2-ին Անդրանիկը կամավոր մեկնել է բանակ, առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում, ապա Մատաղիսում:

Զոհվել է 1995թ. հունվարի 25-ին Մատաղիսի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից, մարտական գործողություններ կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Կինը՝ Վերժնեն, ստանում է 20.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 026-Արմավիր:

## ԿԱՐԵՆ ՍՈՒՐԵՆԻ ՍԻՆԱՆՅԱՆ

Ծնվել է 1977թ. մայիսի 1-ին, Արմավիրի մարզի Նորակերտ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ երեք եղբայրների հետ: Կարեն Սինանյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1996թ. մայիսին Կարենը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Բերդի Պառավաքարի զորամասում: Զոհվել է 1997թ. հունվարի 18-ին Պառավաքարի դիրքերում:

Որպես մահվան պաշտոնական վարկած սկզբում նշվել է՝ թշնամու գնդակից: Ծնողները պաշտոնական վարկածի հետ համաձայն չեն եղել, բողոքարկելուց հետո հայտնաբերվել է, որ կրակել է համածառայակիցը:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, դատապարտվել է ազատազրկման Արմեն անունով զինծառայող՝ 14 տարի ժամկետով: Դատաքննությունը տեղի է ունեցել Բերդում, ապա բողոքարկվել Երեւան, սակայն վճիռը մնացել է անփոփոխ:

Ըստ մոր՝ Օսաննայի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է մոտ 1.000.000 ՀՀ դրամ, ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 027-Արմավիր:

## ՀԱՅԿ ԱՐՄԵՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1992թ. նոյեմբերի 19-ին, Երեւանում, բնակվել է Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղում, ծնողների եւ քրոջ հետ: Հայկ Ղազարյանը, բանակ զորակոչվելիս, ԵՊՀ միջազգային հարաբերությունների մակրոտնտեսագիտական բաժնի երկրորդ կուրսի ուսանող է եղել: 2010թ. նոյեմբերի 23-ին Հայկը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Գորիսի զորամասում: Մահացել է 2012թ. ապրիլի 7-ին Գորիսի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ կայծակնային մինինգիտ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Արմեն Ղազարյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է մոտ 2.400.000 ՀՀ դրամ, ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 028-Արմավիր:



## ԱՐԱՅԻԿ ԱՂԱՍՈՒ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1979թ. հուլիսի 25-ին, Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Արայիկ Ավետիսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է բարձրագույն կրթություն:

2000թ. հունիսի 20-ին Արայիկը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Վայքի 70179 զորամասում:

Մահացել է 2001թ. հոկտեմբերի 30-ին Վայքի 70179 զորամասի 3-րդ գումարտակի շտաբի պետի սենյակում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք: Ծնողները պաշտոնական վարկածի հետ համաձայն չեն եղել, բողոքարկելուց հետո հայտնաբերվել է, որ կրակել է համածառայակիցը:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, ի սկզբանե գործն ընթացել է որպես համածառայակցի՝ Կարեն Սարգսյանի կողմից զենքի հետ անզգույշ վարվելու հետեւանքով դժբախտ պատահար: Ծնողների բողոքարկումից հետո դարձել է որպես դիտավորյալ սպանություն: 2009թ. գործը կասեցրել են եւ Կարեն Սարգսյանին արդարացրել են: Ներկայումս տուժող կողմը բողոք է ուղղել ՄԻԵԴ:

Ըստ մոր՝ Անահիտ Մկրտչյանի, որդու մահվան փաստով մեղադրյալ պետք է լիներ Վայքի զորամասի 3-րդ գումարտակի հրամանատար Միեր Ստեփանյանը եւ նրան էլ պետք է դատեին, ճիշտ քննություն չի անցկացվել: Այնինչ, Միեր Ստեփանյանը շարունակում է աշխատել նույն զորամասում:

Տուժողի փաստաբանը եղել է Վլադիկ Յավրումյանը:

Դատավորները եղել են. Վայքի դատավոր՝ Լեւիկ Սարգսյան, Էրեբունու դատավոր՝ Մասիս Ռեհանյան, Վերաքննիչ դատարանի դատավոր՝ Ժորա Հովսեփյան: Ըստ Անահիտ Մկրտչյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ օգնություն ստացել է, բայց ինքը չափը չի հիշում, այժմ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 029-Արմավիր:

## ՎԱԼԵՐԻԿ ԹԵԼՄԱՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ



Ծնվել է 1967թ. հունվարի 17-ին, Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղում, բնակվել է Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղում, ծնողների, երկու եղբայրների, երկու քույրերի, կնոջ, երկու որդիների եւ դստեր հետ: Վալերիկ Սուքիասյանը բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. դեկտեմբերին Վալերիկը կամավոր մեկնել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: մեկնելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում:

Զոհվել է 1995թ. հունվարի 28-ին Մարտակերտի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ՀՀ սահմանները պաշտպանելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Թելման Սուքիասյանի, ՊՆ-ից միանվագ ստացած լինելու մասին ինքը չի հիշում, այժմ ստանում են 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 030-Արմավիր:



## ՍՈՒՐԵՆ ՀՐԱՉՅԱՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ծնվել է 1983թ. հունիսի 23-ին, Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների հետ: Սուրեն Մուրադյանը, բանակ զորակոչվելիս, ուսանող է եղել:

2001թ. հունիսի 26-ին Սուրենը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հորադիզում:

Մահացել է 2002թ. օգոստոսի 4-ին Հորադիզի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է ներքին սուր արյունահոսությունը՝ հարվածից: Ծնողները պաշտոնական վարկածի հետ համաձայն չեն եղել, ըստ նրանց, Սուրենին 5 հոգով ծեծել են սպաները:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, մեղադրվել են Լեռնիկ Աթանյանն ու Արա Բեգլարյանը, սակայն դատապարտել են միայն մեկին: Առաջին ատյանի դատաքննությունը տեղի է ունեցել Սյունիքում, ապա դատավճիռը բողոքարկվել է վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններ: Տուժող կողմը գանգատ է ներկայացրել ՄԻԵԴ: Տուժող կողմը փաստաբան չի ունեցել, միայն ՄԻԵԴ գանգատ կազմելու համար դիմել է փաստաբան Մուշեղ Շուշանյանին:

Ըստ հոր՝ Հրաչյա Մուրադյանի, որդու մահվան փաստով պետք է 5 սպաները դատապարտվեին:

Տուժողի փաստաբանը եղել է Վլադիկ Յավրումյանը:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է մոտ 150.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 031-Արմավիր:

## ԱՐՍԵՆ ԴԱՎԹԻ ՉԱՔԵՎՈՍՅԱՆ



Ծնվել է 1987թ. մայիսի 3-ին, Արմավիրի մարզի Թաիրով գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, երկու եղբայրների եւ տատիկի հետ: Արսեն Չաքեւոսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2005թ. մայիսին Արսենը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս սրտի հիվանդություն է ունեցել, ծառայել է Իջեւանում:

Զոհվել է 2006թ. մարտի 3-ին Իջեւանի դիրքերում (Լալի գյուղի տարածք): Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ մարտական գործողությունների ժամանակ զոհվել է թշնամու գնդակից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Դավիթ Չաքեւոսյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է մոտ 900.000 ՀՀ դրամ, ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 032-Արմավիր:

## ՌՈԲԵՐՏ ԳԱՐԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ



Ծնվել է 1985թ. հուլիսի 31-ին, Արմավիրի մարզի Փարաքար գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Ռոբերտ Սարգսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է բարձրագույն կրթություն:

2007թ. հունիսին Ռոբերտը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Երեւանում:

Մահացել է 2008թ. օգոստոսի 4-ին, տանը արձակուրդի ժամանակ: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Գարիկ Սարգսյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց ինքը չափը չի հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 033-Արմավիր:

## ՎՐԵԺ ՎԱՐԴԳԵՍԻ ԱՐՇԱԿՅԱՆ

Ծնվել եւ բնակվել է Արմավիրի մարզի Փարաքար գյուղում:

Բանակ զորակոչվել է Էջմիածնի զինկոմիսարիատից:

Մահացել է 2008թ. նոյեմբերի 7-ին:

Այլ տվյալներ չկան:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 034-Արմավիր:



## ԼԵՎՈՆ ՌԱՖԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1987թ. դեկտեմբերի 16-ին, Երեւանում, բնակվել է Արմավիրի մարզի Փարաքար գյուղում՝ ծնողների եւ երկու քույրերի հետ: Լեւոն Գրիգորյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2005թ. դեկտեմբերի 19-ին Լեւոնը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ջրականում (Ջաբրաիլ), Մեխակավանի զորամասում:

Մահացել է 2007թ. մարտի 3-ին, Ջրականի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ պատահաբար կրակել է ինքն իրեն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Նոննա Գրիգորյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 2.000.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 035-Արմավիր:

## ՀԱՄԼԵՏ ՌՈՒՍՏԱՄԻ ՋՆԴՈՅԱՆ

Ծնվել է 1980թ. օգոստոսի 29-ին, Արմավիրի մարզի Մերձավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ չորս քույրերի հետ: Համլետ Ջնդոյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1998թ. նոյեմբերի 6-ին Համլետը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ճամբարակում:

Մահացել է 1998թ. նոյեմբերի 8-ին, զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ կախվել է, ինքնասպանություն: Ծնողների կարծիքով, եղել է դիտավորյալ սպանություն, որից հետո կախել են: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել: Ըստ մոր՝ Ռուստամ Ջնդոյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց ինքը չափը չի հիշում, այժմ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 036-Արմավիր:

## ԽԱՉԻԿ ԱՐՏԵՄԻ ՄԿՐՏՉՅԱՆ



Ծնվել է 1957թ. հուլիսի 22-ին, Կամոյի շրջանի Գանձակ (Բատիկյան) գյուղում, բնակվել է Արմավիրի մարզի Մերձավան գյուղում՝ կնոջ, որդու եւ երկու դստրերի հետ: Խաչիկ Մկրտչյանը, բանակ մեկնելիս, ունեցել է միջնակարգ կրթություն, աշխատել է որպես տրակտորիստ:

1993թ. Խաչիկը կամավոր մեկնել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Մեկնելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է ԼՂՀ-ում:

Մահացել է 1996թ. հունիսի 20-ին, տանը: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ինսուլտ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ կնոջ՝ Սուսաննա Այվազյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 300 ՌԴ ռուբլի, այնուհետ՝ մինչեւ երեխաների չափահաս դառնալը ստացել է ամսական նպաստ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 037-Արմավիր:



## ՄՈՎՍԵՍ ԱՐՇԱՎԻՐԻ ՄԱԿՅԱՆ

Ծնվել է 1990թ. սեպտեմբերի 21-ին, Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքում, բնակվել նույն քաղաքում, ծնողների եւ քրոջ հետ:

2008թ. հոկտեմբերի 7-ին Մովսեսը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայության վայրը՝ Խոջալու:

Զոհվել է 2008թ. հոկտեմբերի 26-ին Խոջալուում, ուսումնավարժանքի ժամանակ: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք, ուսումնավարժանքի ժամանակ համածառայակիցը, ցուցաբերած անփութության պատճառով, կրակել է Մովսեսին: Ծնողները պաշտոնական վարկածի հետ համաձայն չեն եղել, կարծում են, որ դիտավորյալ սպանություն է եղել, բայց վստահ չեն:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, դատական նիստերը տեղի են ունեցել Գորիսում: Համածառայակցին դատապարտել են 5 տարի 5 ամիս ժամկետով, սպային ազատել են դատարանի դահլիճից: Տուժող կողմը փաստաբան չի ունեցել, դատապարտվածը եւ ազատված սպան փաստաբաններ են ունեցել Ղարաբաղից:

Ըստ հոր՝ Արշավիր Մակյանի, ընտանիքը ամսական ստանում է 20.000 ՀՀ դրամ թոշակ, 10.000 դրամ նպաստ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 038-Արմավիր:



## ՀԱՄԼԵՏ ԱՂԱՍՈՒ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1960թ. փետրվարի 18-ին, Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում, բնակվել է Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքում՝ կնոջ, երկու որդու եւ դստեր հետ: Համլետ Ավետիսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1992թ. Համլետը անցել է աշխատանքի ՀՀ բանակում: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում, Քաշաթաղում (Լաչին), Ճամբարակում, եղել է հրամանատար:

Մահացել է 1997թ. մայիսի 6-ին Վարդենիսի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ միկրոինֆարկտ: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել: Ըստ կնոջ՝ Հասմիկի, ընտանիքը ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 039-Արմավիր:

## ԳՈՒՐԳԵՆ ԱՌԱՔԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ծնվել է 1959թ. դեկտեմբերի 18-ին, Արագածոտնի մարզի Ղոյթուր գյուղում, բնակվել է Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքում՝ կնոջ եւ չորս դստրերի հետ: Գուրգեն Սուքիասյանը բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1991թ. Գուրգենը կամավոր մեկնել է բանակ Մեծամորից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Վարդենիսում, եղել է վաշտի հրամանատար:

Մահացել է 1998թ. սեպտեմբերի 5-ին Վարդենիսի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ երիկամները չեն գործել: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր՝ նախկին փոխգնդապետ Յունան Սուքիասյանի, ընտանիքը որեւէ փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 040-Արմավիր:

## ՂԱԶԱՐ ՆՈՐԻԿԻ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1975թ. փետրվարի 5-ին, Արմավիրի մարզի Սարդարապատ (Յոկտեմբեր) գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ հորեղբոր ընտանիքի հետ: Ղազար Յովհաննիսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1993թ. Ղազարը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտի «Եղնիկներում»:

Զոհվել է 1994թ. հուլիսի 24-ին Յորադիզի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք՝ մարտական գործողություններ կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հորեղբոր կնոջ՝ Կարինեի, ընտանիքը որեւէ փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 041-Արմավիր:



## ՆՈՐԻԿ ՌԱԶՄԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1973թ. դեկտեմբերի 25-ին, Արմավիրի մարզի Սարդարապատ (Յոկտեմբեր) գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Նորիկ Առաքելյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1991թ. դեկտեմբերին Նորիկը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ջրառատում:

Զոհվել է 1994թ. հունիսի 18-ին Մարտակերտի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ թշնամու գնդակից՝ մարտական գործողություններ կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Ռազմիկ Առաքելյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 193.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 042-Արմավիր:



## ՎԱԼԵՐԻԿ ԱԶԱՏԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ծնվել է 1993թ. դեկտեմբերի 25-ին, Արմավիրի մարզի Սարդարապատ (Յոկտեմբեր) գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների հետ: Վալերիկ Մուրադյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2009թ. նոյեմբերի 26-ին Վալերիկը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ստեփանակերտում:

Մահացել է 2010թ. մարտի 15-ին Ստեփանակերտի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ինքնասպանություն, ինչի հետ ծնողները համաձայն չեն եւ շարունակում են բողոքել: Նրանց կարծիքով, եղել է դիտավորյալ սպանություն՝ դրամի համար:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ պապի՝ Շալիկո Մուրադյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց ինքը չափը չի հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 043-Արմավիր:

## ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ



Ծնվել է 1989թ. հուլիսի 26-ին, Արմավիրի մարզի Արեւաշատ գյուղում, բնակվել նույն գյուղում, ծնողների եւ երկու քույրերի հետ: Հայրը մեկնում էր արտագնա աշխատանքի, ընտանիքի սոցիալական վիճակը լավ է եղել: Գեւորգ Սահակյանը, բանակ մեկնելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

2007թ. նոյեմբերի 22-ին Գեւորգը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայության վայրը՝ ԼՂ, Ցոր, Ստեփանակերտ: Զոհվել է 2009թ. նոյեմբերի 2-ին Ստեփանակերտում, ուսումնավարժանքի ժամանակ:

Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ հրազենային վնասվածք, ուսումնավարժանքի ժամանակ սխալ են կրակել եւ զոհվել են երկու հոգի:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, դատապարտվել են Արմենակ Հովսեփյանը, Հայկազ Ավդալյանը, Աշոտ Փարամազյանը, Սամվել Գասպարյանը: Քննիչները եղել են. ՀՀ ՊՆ ՔԾ Առաջին կայազորային քննչական բաժնի պետ Մ. Դավթյանը, ՀՀ ՊՆ ՔԾ Առաջին կայազորային բաժնի քննիչ Ա.Ապրեսյանը, մեղադրող դատախազ՝ թիվ 1 կայազորի զինդատախազի տեղակալ Ա.Ն.Մարգարյան:

Ըստ հոր՝ Խաչատուր Սահակյանի՝ ընտանիքն ամսական ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 044-Արմավիր:

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ծնվել է 1952թ. մայիսի 18-ին, Արմավիրի մարզի Հովտամեջ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ թոշակառու ծնողների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Հարություն Խաչատրյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է բարձրագույն կրթություն:

1994թ. հոկտեմբերին 16-ին Հարությունը մեկնել է բանակ: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում, Մատաղիսում:

Զոհվել է 1994թ. դեկտեմբերի 14-ին, ծնողներին տեղեկացրել են դեկտեմբերի 18-ին, Մատաղիսում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից՝ մարտական առաջադրանք կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ կնոջ՝ Աննա Վարդանյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 2.000.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 045-Արմավիր:



## ԳԱԳԻԿ ՎԱՀԱԳԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1957թ. հունվարի 27-ին, Արմավիրի մարզի Հովտամեջ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, երկու քույրերի եւ եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է միջին: Գագիկ Կարապետյանը, բանակ մեկնելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. հոկտեմբերին 16-ին Հարությունը մեկնել է բանակ: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում, Մատաղիսում:

Զոհվել է 1994թ. դեկտեմբերի 14-ին, ծնողներին տեղեկացրել են դեկտեմբերի 18-ին, Մատաղիսում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է ականի պայթյունից՝ մարտական առաջադրանք կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ կնոջ՝ Լարիսա Հովհաննիսյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 178.000 ՀՀ դրամ, 4.200.000 ՀՀ դրամ՝ տան համար: Համահայկական հիմնադրամից երեխաներին գումար է հատկացվում, ծնողներին՝ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 046-Արմավիր:



## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼՅՈՒԴՎԻԳԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ծնվել է 1974թ. փետրվարի 24-ին, Արմավիրի մարզի Հայթաղ գյուղում, բնակվել է նույն շրջանի Ծաղկունք գյուղում՝ հողագործ ծնողների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Հովհաննես Աբրահամյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1992թ. մայիսին Հովհաննեսը կամավոր մեկնել է բանակ՝ Ծաղկունք գյուղից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Գյումրիի զորամասերից մեկում:

Մահացել է 1994թ. հուլիսի 18-ին, Հորադիզում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ խեղդվել է գետում: Ըստ ծնողների.«դիակը բացել ենք, ճակատից խփված էր, սուսիկ-փուսիկ գրեցին, որ զոհվել է»:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Լյուսյա Աբրահամյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 90.000 ՀՀ դրամ, ամսական 15.000 դրամ նպաստ, հետո նպաստի վճարումը դադարեցրել են, եւ զինկոմից թոշակ/ամսական են նշանակել՝ 50.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 047-Արմավիր:

## ՅՈՎՅԱՆՆԵՍ ՍԱՆԱՍԱՐԻ ՅԱՅԼՈՅԱՆ



Ծնվել է 1974թ. սեպտեմբերի 9-ին, Սպիտակի շրջանի Լեռնավան, բնակվել է Արմավիրի մարզի Շահումյան համայնքում՝ ծնողների եւ երկու եղբայրների հետ, ծնողները աշխատել են, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Յովհաննես Յայլոյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1997թ. հոկտեմբերի 28-ին Յովհաննեսը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է ԼՂ-ում:

Մահացել է 1998թ. փետրվարի 2-ին Խոջալուում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ սննդային թունավորում:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Սանասար Յայլոյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 600 ԱՄՆ դոլար, այժմ ստանում է 30.000 ՅՅ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 048-Արմավիր:

## ԿԱՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ



Ծնվել է 1975թ. հունվարի 14-ին, Ոսկեհատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ երկու եղբայրների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է շատ վատ, ծնողները գործազուրկ են եղել: Կարեն Մնացականյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1993թ. գարնանը Կարենը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ճամբարակի Վահան գյուղի պաշտպանական դիրքերում:

Զոհվել է 1995թ. հուլիսի 14-ին Ճամբարակի Վահան գյուղի պաշտպանական դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հակառակորդի կրակոցից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Սերյոժա Մնացականյանի, ընտանիքը ՊՆ-ից թաղման ծախսերի համար միանվագ ստացել է 200.000 ՅՅ դրամ, բնակարան կառուցելու համար 1.200.000 ՅՅ դրամ, այժմ ստանում է 10.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 049-Արմավիր:



## ԷԴՈՒԱՐԴ ՎԱԶԳԵՆԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ծնվել է 1972թ. հուլիսի 12-ին, Իրկուտսկում, բնակվել է Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում՝ քրոջ եւ մոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է շատ վատ, մայրը գործազուրկ է եղել: Էդուարդ Բաղրամյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1994թ. հունիսին Էդուարդը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում, Մատաղիսում:

Զոհվել է 1995թ. հուլիսի 12-ին Մատաղիսի զորամասի տարածքում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից, մարտական առաջադրանք կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ քրոջ՝ ընտանիքը ՊՆ-ից թաղման ծախսերի համար միանվագ ստացել է 200.000 ՀՀ դրամ, մայրն այժմ ստանում է թոշակ/ամսական, որպես զոհվածի ծնող:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 050-Արմավիր:



## ԼԵՎՈՆ ԳԱԳԻԿԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ծնվել է 1981թ. մայիսի 15-ին, Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ քրոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար, ծնողները գործազուրկ են եղել: Էդուարդ Բաղրամյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1999թ. մայիսի 21-ին Լեւոնը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Նոյեմբերյանի Կողբ գյուղի զորամասում:

Զոհվել է 2000թ. նոյեմբերի 11-ին, Կողբ գյուղի զորամասի մարտական հենակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Գագիկ Մալխասյանի, ընտանիքը ՊՆ-ից թաղման ծախսերի համար միանվագ ստացել է 1.000 ԱՄՆ դոլար, եւ նպաստ՝ երկու տարի:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 051-Արմավիր:

## ԱՐՏԱՇԵՍ ԱՄԱՏՈՒՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



Ծնվել է 1977թ. սեպտեմբերի 14-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում՝ հղի կնոջ հետ: Արտաշես Բաղդասարյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. դեկտեմբերի 15-ին Արտաշեսը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Վարդենիսի զորամասում:

Մահացել է 1996թ. ամռանը Վարդենիսի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գանգոսկրի կոտրվածք, վիճաբանության ժամանակ շերեփով հարվածել են գլխին:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Հարվածող համածառայակիցը դատապարտվել է 12 տարի ազատազրկման եւ կրել է իր պատիժը ամբողջությամբ:

Ըստ հորեղբոր փեսայի, ընտանիքը որեւէ փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 052-Արմավիր:

## ԳԱԳԻԿ ԽԱՉԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



Ծնվել է 1955թ. փետրվարի 19-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում՝ Իսակովի 38 հասցեում, կնոջ, երկու երեխաների եւ մոր հետ: Գագիկ Եղիազարյանը բանակ մեկնելիս ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

1995թ. օգոստոսի Գագիկը մեկնել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հորադիզի զորամասում:

Զոհվել է 1995թ. հոկտեմբերի 24-ին Հորադիզի զորամասից դուրս: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ կնոջ՝ Գոհար Սաֆարյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 100.000 ՀՀ դրամ, եւ թոշակ՝ երեխաների համար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 053-Արմավիր:



## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՄԵՆԱԿԻ ԲԱԺԱԿՅԱՆ

Ծնվել է 1977թ. հունիսի 28-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում՝ Իսակովի 56 հասցեում, ծնողների, երկու քույրերի, եւ եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Հովհաննես Բաժակյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1995թ. հունիսի 29-ին Հովհաննեսը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հորադիզի զորամասում:

Զոհվել է 1996թ. փետրվարի 24-ին Հորադիզի զորամասի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գլխուղեղի հրազենային վնասվածքից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Ալիսա Բաժակյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց չափը չի հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 054-Արմավիր:



## ԳԱՍՊԱՐ ՍՈՂՈՄՈՆԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ծնվել է 1980թ. ապրիլի 29-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում, տատիկի հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է միջին: Գասպար Նալբանդյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1998թ. մայիսի 13-ին Գասպարը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական վիճակը բավարար է եղել, ծառայել է Հադրութի զորամասում:

Մահացել է 1998թ. օգոստոսի 2-ին Հորադիզի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք: Ըստ ծնողների, իրենց որդուն սպանել են վիճաբանության ժամանակ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել: Տատիկի պատմելով քննիչն ասել է.«Որ կիմանաք ինչ է եղել, ինձ էլ կասեք»:

Ըստ տատիկի՝ ընտանիքը որեւէ գումար ստանալուց հրաժարվել է:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 055-Արմավիր:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՄՎԵԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Ծնվել է 1981թ. սեպտեմբերի 14-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում մոր եւ քրոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է միջին: Հովհաննես Մանուկյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1999թ. հոկտեմբերի 23-ին Հովհաննեսը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մատաղիսում:

Մահացել է 1999թ. դեկտեմբերի 20-ին Մատաղիսի զորամասից դուրս: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ խեղդվել է ջրամբարում:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր՝ Գեւորգ Մանուկյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 220.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 056-Արմավիր:

## ԳԱՌՆԻԿ ԶԱՎԵՆԻ ԳԱՌՆԻԿՅԱՆ



Գառնիկ Գառնիկյանը բնակվել է Էջմիածնում ծնողների, քրոջ, կնոջ եւ երկու երեխաների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է միջին, ընտանիքում աշխատող չի եղել: Գառնիկ Գառնիկյանը բանակ մեկնելիս ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

Գառնիկը բանակ մեկնել է կամավոր, առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հադրութում:

Զոհվել է 1994թ. Հադրութի զորամասից դուրս: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից: Հարազատները կասկածում են պաշտոնական վարկածի իսկությանը, քանի որ, ըստ նրանց, Գառնիկը զենքերին շատ լավ էր տիրապետում եւ ականը չնկատել չէր կարող:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ փեսայի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց չափը չի հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 057-Արմավիր:



## ՄԱՍԻՍ ՆԱՐԻՆԲԵԿԻ ԾԱՌՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1977թ. հունվարի 14-ին, Իրանում, բնակվել է Էջմիածնում ծնողների եւ եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը ծանր է եղել, որեւէ մեկը աշխատանք չի ունեցել: Մասիս Նարինբեկյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1995թ. Մասիսը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Նոյեմբերյանում, Բերդավան գյուղում, «Սահրադ» պահակակետում:

Զոհվել է 1996թ. մարտի 2-ին «Սահրադ» պահակակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածքից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր կնոջ՝ Մասիսի մայրը ամսական 10.000 ՀՀ դրամ թոշակ է ստանում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 058-Արմավիր:

## ԱՐՄԱՆ ՄԱՆՎԵԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Ծնվել է 1978թ. հոկտեմբերի 10-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում ծնողների եւ քրոջ հետ, աշխատել է, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Արման Բաբայանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1996թ. նոյեմբերին Արմանը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Իջեւանում:

Զոհվել է 1997թ. հուլիսի 11-ին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ սահմանի վրա, կրակոցից:

Մայրը հրաժարվել է այլ տեղեկություններ պատասխանել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 059-Արմավիր:

## ԱՐՄԱՆ ԳՐԻՇԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆ



Ծնվել է 1979թ. դեկտեմբերի 3-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում ծնողների հետ, որոնք աշխատանք չեն ունեցել, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է միջին: Արման Մկրտչյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1997թ. դեկտեմբերին Արմանը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, եղել է մարզիկ: Ծառայել է Մարտունիում:

Զոհվել է 1998թ. հունիսի 14-ին Մարտունիի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք, գանգի կոտրվածք: 2012թ. հետմահու արժանացել է ԵԿՄ մեդալի:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Գրիշա Մկրտչյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 350.000 ՀՀ դրամ, ստանում է թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 060-Արմավիր:



## ԿԱՐԱՊԵՏ ՄԻՀՐԱՆԻ ՁՈՒՌՆԱՉՅԱՆ

Ծնվել է 1974թ. հուլիսի 29-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում ծնողների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է վատ, տանն աշխատող չեն ունեցել: Կարապետ Ձուռնաչյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

1995թ. աշնանը Կարապետը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական վիճակը եղել է նորմալ, մեկ անգամ հիվանդանոցում բուժում է ստացել ճիճվակրության դեմ, մեկ անգամ էլ՝ ձեռքի կոտրվածք է ունեցել, ծառայել է Մարտունիում:

Մահացել է 1996թ. օգոստոսի 20-ին, Մարտունու զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք, ինքնասպանություն: Ըստ ծնողների, մահվան իրական պատճառը դիտավորյալ սպանությունն է, քանի որ սպան ծեծել է եւ հավանաբար զենքով խփել է գլխին:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով: Վրեժ Ապրեսի Ավանեսյանը դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամկետով: Պատիժը, ըստ վճռի, Ավանեսյանը պետք է կրեր ուղղիչ աշխատանքային գաղութում, սակայն այդ ժամանակ ԼՂՀ Պաշտպանության բանակի օրվա կապակցությամբ համաներում է եղել, որը կիրառվել է նաեւ նրա նկատմամբ: Տուժող կողմի փաստաբանը եղել է Ա.Ա.Օսիպյանը, դատավորը՝ ԼՂՀ զինտրիբունալի դատավոր Ս.Վ.Աղաբեկյանը, մեղադրող դատախազը՝ Հ.Ե.Այվազյանը:

Ըստ հոր՝ Միհրան Ձուռնաչյանի, ընտանիքը որեւէ փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 061-Արմավիր:

## ՎԱՀԵ ԽԱՉԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ



Ծնվել է 1974թ. դեկտեմբերի 16-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում ծնողների, եղբոր եւ տատիկի հետ, հայրն աշխատել է կոշիկի ֆաբրիկայում, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Վահե Ավետիսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1992թ. դեկտեմբերի Վահեն զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում:

Զոհվել է 1996թ. սեպտեմբերի 27-ին Մարտակերտի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ մարտական հերթապահության ժամանակ: Ըստ ծնողների, իրենց որդու վրա կրակել են:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, բայց փաստաթղթերը չեն պահպանվել: Մեղադրյալը դատապարտվել է 12 տարի ազատազրկման, բայց իրական մեղավորը, ըստ ծնողների, եղել է հրամանատարը:

Ըստ տատիկի՝ Ջեմմա Ավետիսյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 10.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 062-Արմավիր:

## ՅՈՒՐԻԿ ԳՐԻՇԱՅԻ ՈՒՐՈՒՍՅԱՆ



Ծնվել է 1980թ. սեպտեմբերի 18-ին, Էջմիածնում, բնակվել է Էջմիածնում մոր, քրոջ եւ քեռու ընտանիքի հետ, մայրն աշխատել է որպես հավաքարար, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է վատ: Յուրիկ Ուրուսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1998թ. աշնանը Յուրիկը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, եղել է մարզիկ: Ծառայել է Հորադիզի զորամասում:

Մահացել է 2000թ. փետրվարի 3-ին Հորադիզի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ուղեղի արյունազեղում:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, սակայն ծնողները դատական նիստերին չեն մասնակցել:

Ըստ մոր՝ Քնար Փահլեւանյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, որի չափը չի հիշում, այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 063-Արմավիր:



## ԱՐԱՅԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ծնվել է 1969թ. հուլիսի 29-ին, Նոյեմբերյանում, բնակվել է Նոյեմբերյանի Դովեղ գյուղում, բնակվել է ծնողների եւ կնոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Արայիկ Աբրահամյանը բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1991թ.ն Արայիկը կամավոր մեկնել է բանակ Նոյեմբերյանից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, եղել է մարզիկ: Ծառայել է Նոյեմբերյանում:

Զոհվել է 1994թ. մայիսի 22-ին Նոյեմբերյանի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ կնոջ՝ Կարինե Մայիլյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, որի չափը չի հիշում, այժմ ստանում է 10.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 064-Արմավիր:



Յուրիկ Վահրամի Մելիքսեթյան

Ծնվել է 1986թ. օգոստոսի 11-ին, Էջմիածնում, բնակվել ծնողների, եղբոր եւ տատիկի հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է միջին, ընտանիքում աշխատող չի եղել: Յուրիկ Մելիքսեթյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2004թ. աշնանը Յուրիկը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայության վայրը՝ Արա լեռ:

Մահացել է 2007թ. սեպտեմբերի 15-ին, զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հոսանքահարվել է:

Դեպքի առնչությամբ քրեական գործի հարուցման վերաբերյալ հարազատները տեղյակ չեն եւ որեւէ քննության իրենք չեն մասնակցել:

Ըստ եղբոր՝ Ռոբերտ Մելիքսեթյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 300.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 065-Արմավիր:

## ՍԵՅՐԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ



Ծնվել է 1966թ. մայիսի 20-ին, Բաքվում, բնակվել է Ջվարթնոցում ծնողների, կնոջ եւ դստեր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ, ընտանիքում աշխատող չի եղել: Սեյրան Ստեփանյանը բանակ մեկնելիս ունեցել է թերի բարձրագույն կրթություն, ավարտել է Ռոստովի հրթիռային տեխնիկումը:

1995թ. մայիսի 3-ին Սեյրանը կամավոր մեկնել է բանակ: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Վարդենիսում:

Մահացել է 1995թ. մայիսի 5-ին Վարդենիսի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հոսանքահարվել է:

Ըստ հոր՝ Գուրգեն Ստեփանյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 200.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 066-Արմավիր:

## ՄՆԱՑԱԿԱՆ ՎԱՉԱԳԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Ծնվել է 1985թ. փետրվարի 19-ին, Էջմիածնում, բնակվել է ծնողների եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Մնացական Պետրոսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2003թ. մայիսի 3-ին Մնացականը զորակոչվել է բանակ՝ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հորադիզում:

Զոհվել է 2003թ. դեկտեմբերի 25-ին՝ Հորադիզի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է հրազենային վնասվածքը, գլխուղեղի վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Վաչագան Պետրոսյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.500 ԱՄՆ դոլար, ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 067-Արմավիր:



## ՎԱՀԵ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Ծնվել է 1981թ. սեպտեմբերի 9-ին, Էջմիածնում, բնակվել է Ձվարթնոցում ծնողների, տատիկի, պապիկի, եղբոր ու հարսի հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Վահե Սահակյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2000թ. հունիսի 19-ին Վահեն զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: 9-11 տարեկան հասակում ունեցել է երիկամների հիվանդություն, հետո առողջացել է: Ծառայել է Պառավաքարի զորամասում:

Զոհվել է 2001թ. մայիսի 5-ին Պառավաքարի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ բլինդաժն է փլվել, մեխանիկական շնչահեղձություն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Հասմիկ Սահակյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.000 ԱՄՆ դոլար, ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 068-Արմավիր:



## ԱՐԱՄ ՄԻՇԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1977թ. հունիսի 12-ին, Էջմիածնում, բնակվել է Ձվարթնոցում՝ ծնողների, տատիկի, պապիկի, եղբոր ու քրոջ հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Արամ Ավետիսյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1995թ. ամռանը Վահեն զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: 9-11 տարեկան հասակում ունեցել է երիկամների հիվանդություն, հետո առողջացել է: Ծառայել է Պառավաքարի զորամասում:

Զոհվել է 1996թ. օգոստոսի 8-ին՝ Գյուլիստանի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ական է պայթել: Հետմահու արժանացել է պատվոգրի եւ հուշամեդալի:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Ջեմմա Ավետիսյանի, ստանում է 9.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 069-Արմավիր:

## ԱՐՄԵՆ ԳԵՆՅԱՅԻ ՉԱԴԻԿՅԱՆ



Ծնվել է 1989թ. հուլիսի 19-ին, Էջմիածնում, բնակվել է ծնողների եւ եղբոր հետ, ընտանիքում աշխատող չի եղել: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Արմեն Չադիկյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2007թ. նոյեմբերի 11-ին Արմենը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Հադրութի զորամասում:

Զոհվել է 2008թ. փետրվարի 8-ին՝ Հադրութի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք, ինքնասպանություն: Ծնողները պաշտոնական վարկածի հետ համաձայն չեն, ըստ նրանց, հրամանատարի հետ վեճ է եղել, վերջինս ծեծել է իրենց որդուն՝ ծխախոտի մնացուկի պատճառով:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ:

Ըստ մոր՝ Մարգարիտ Չադիկյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար չի ստացել, ասել են՝ չի հասնում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 070-Արմավիր:

## ՄՈՒՇԵՂ ԳՐԻՇԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆ



Ծնվել է 1977թ. փետրվարի 8-ին, Էջմիածնում, բնակվել է Մեծամորում՝ ծնողների եւ երկու եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Մուշեղ Մկրտչյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. հոկտեմբերի 15-ին Մուշեղը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Բերդ քաղաքի զորամասում:

Զոհվել է 1997թ. մայիսի 7-ին Պառավաքարի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ծառայողական պարտականությունները կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Սոֆիկ Մկրտչյանի, ինքը չի հիշում ՊՆ-ից միանվագ գումար ստացել արդյոք, այժմ ստանում է 10.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 071-Արմավիր:



## ԳԵՎՈՐԳ ՅՈՎՅԱՆՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1979թ. հոկտեմբերի 30-ին, Արմավիրի մարզի Ջրառատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ հողագործ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Գեւորգ Խաչատրյանը բանակ մեկնելիս ունեցել է թերի բարձրագույն, իրավաբանական կրթություն:

1997թ. նոյեմբերի 7-ին Գեւորգը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Ասկերանում:

Զոհվել է 1999թ. օգոստոսի 25-ին Ասկերանի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ծառայակցի կողմից արձակած գնդակից: Ծնողները պաշտոնական վարկածի հետ համաձայն չեն: Ըստ հոր՝ Յովհաննես Խաչատրյանի, «Իրականում խեղդել են պարանոցից, երկար որոնելուց հետո՝ իբր թե իրավական հիմքերը չգտան: Ինձ քննիչները վախեցրել են, ասել են՝ չես մտածու՞մ, որ էլի տղա ունես»:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 400.000 ՅՅ դրամ, այժմ ստանում է 15.000 ՅՅ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 072-Արմավիր:



## ԳՈՒՐԳԵՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՏԻՆՅԱՆ

Ծնվել է 1987թ. սեպտեմբերի 17-ին, Արմավիրի մարզի Ջրառատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ հողագործ ծնողների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Գուրգեն Մատինյանը բանակ մեկնելիս ունեցել է միջին մասնագիտական կրթություն, սովորել է բժշկական քոլեջում, եղել է ատամնատեխնիկ:

2005թ. դեկտեմբերի վերջին Գուրգենը զորակոչվել է բանակ Էջմիածնի զինկոմիսարիատից: Առողջական վիճակը եղել է նորմալ, ունեցել է հարթաթաթություն: Ծառայել է «Եղնիկներում», Տոնաշենում:

Զոհվել է 2007թ. հուլիսի 7-ին «Եղնիկների» հսկիչ-անցագրային կետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զոհվել է՝ ընկերոջը խեղդվելուց փրկելիս: Արժանացել է Արիության համար մեդալի, դեպքի մասին խոսել եւ ցուցադրել են հեռուստատեսությամբ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել, հանցակազմի բացակայության պատճառով մի երկու հրամանատարի նկատողություն են տվել: Ըստ հոր՝ Կարապետ Մատինյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 2.200.000 ՅՅ դրամ՝ թաղման ծախսերի համար, այժմ ստանում է 30.000 ՅՅ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 073-Արմավիր:

## ԳԱՐԵԳԻՆ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ



Ծնվել է 1991թ. ապրիլի 12-ին, Արմավիրի մարզի Հայկաշեն գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ քրոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է միջին: Գարեգին Հովսեփյանը բանակ մեկնելիս ունեցել է միջին մասնագիտական կրթություն, եղել է ատամնատեխնիկ:

Գարեգինը բանակ զորակոչվել է Էջմիածնի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մարտունու 2-րդ զորամասում:

Զոհվել է 2010թ. հուլիսի 28-ին Մարտունու 2-րդ զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զոհվել է շիզոֆրենիկ համածառայակցի գնդակից, շիզոֆրենիկը կրակել ու սպանել էր հինգ հոգու, ապա՝ իրեն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Շողիկ Հովսեփյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 500.000 ՀՀ դրամ՝ թաղման ծախսերի համար, այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 074-Արմավիր:

## ԴԱՎԻԹ ԱՇՈՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Ծնվել է 1980թ. հունվարի 6-ին, Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար, ծնողները չեն աշխատել: Դավիթ Մանուկյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1998թ. ապրիլի 10-ին Դավիթը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հորադիզի N54122 զորամասում:

Զոհվել է 1999թ. հոկտեմբերի 16-ին Հորադիզում, զորամասից դուրս՝ վրանների տակ: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ այրվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Արփենիկ Հարությունյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 200.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 075-Արմավիր:



## ՄԱՆՎԵԼ ԱՐՄԵՆԻ ՀԱԶՐՈՅԱՆ

Ծնվել է 1991թ. օգոստոսի 8-ին, Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար, ծնողները՝ հողագործ: Մանվել Հազրոյանը, բանակ զորակոչվելիս, սովորել է գեղարվեստի քոլեջի ոսկերչական բաժնում:

2009թ. նոյեմբերի 16-ին Մանվելը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ջաբրաիլում:

Զոհվել է 2013թ. հուլիսի 19-ին Նուբարաշենի ՔԿՀ-ում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ մեխանիկական շնչահեղձություն:

Մանվել Արմենի Հազրոյանը ծառայության ընթացքում կասկածվել է 7 զինվորների սպանության մեջ, սակայն ծնողները նշում են, որ իրականում «...դիվերսիոն հարձակում» է եղել: Քանի որ դեռ քրեական գործն ավարտված չի եղել՝ Հազրոյանի նկատմամբ մինչեւ դատավճռի հրապարակումը խափանման միջոց է ընտրվել կալանքը: Հազրոյանի կալանքի վայրը եղել է Նուբարաշեն ՔԿՀ-ն:

Որոշ ժամանակ անց Հազրոյանի ծնողներին տեղեկացրել են, որ նա, իբր թե, ինքնասպան է եղել, ինչին ծնողները չեն հավատում, քանի որ Հազրոյանի պարանոցին առկա է եղել մոտ 20սմ կտրվածք:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, որն ընթացքի մեջ է: Քննիչը Ոսկանյանն է:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 076-Արմավիր:

## ՄՆԱՑԱԿԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ



Ծնվել է 1988թ. սեպտեմբերի 1-ին, Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, պապի, տատի եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ, ծնողները՝ հողագործ: Մնացական Գասպարյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի բարձրագույն կրթություն:

2008թ. նոյեմբերի 7-ին Մնացականը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մատաղիսում:

Զոհվել է 2010թ. հունիսի 18-ին ժամը 23:00-ին՝ Մարտակերտում, գյուղ՝ Չայլու, դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է հորեղբոր կինը՝ Ալվարդ Սահակյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 077-Արմավիր:

## ԱՐՄԵՆ ՄՍՏՈՅԻ ՄՍՏՈՅԱՆ



Ծնվել է 1976թ. մայիսին, Արմավիրի մարզի Ամասիա գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր ընտանիքի հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար, ծնողները՝ հողագործ: Արմեն Մստոյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1995թ. գարնանը Արմենը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում՝ Ղարաբաղում:

Զոհվել է 1996թ. սեպտեմբերի 30-ին Մարտակերտի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ թուրքերն են խփել:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Խայլազ Մստոյանի, ընտանիքն այժմ ստանում է 10.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 078-Արմավիր:



Նվեր Տոսունի Աhմադյան

Ծնվել է 1984թ. մարտի 4-ին, Արմավիրի մարզի Յուշակերտ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ մոր, եղբոր եւ երկու քույրերի հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Նվեր Աhմադյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

2002թ. մայիսին Նվերը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Եր–անի զորամասերից մեկում:

Զոհվել է 2004թ. հունվարի 13-ին զորամասում՝ պահակակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք: Ըստ մոր՝ Զինաիդա Աhմադյանի, կրակել է ծառայակից ընկերը:

Դեպքի առնչությամբ քրեական գործ է հարուցվել: Մեղադրյալը դատապարտվել է 7 տարի ազատազրկման:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.000.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 50.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 079-Արմավիր:

## ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ

Ծնվել է 1977թ. աշնանը, Արմավիրի շրջանի Նոր Արմավիր գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Հայրն աշխատել է որպես կոլտնտեսության բրիգադիր, մայրը՝ դպրոցում տնարարության ուսուցչուհի: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Վարդան Ասլանյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. աշնանը Վարդանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ղարաբաղում:

Զոհվել է 1997թ. փետրվարի 3-ին Ղարաբաղում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ սպանվել է: Ըստ հորեղբոր որդու կնոջ՝ Ռիմա Վարժապետյանի՝«Մեզ ասացին, որ ինքն է մեղավոր եղել, բայց հորեղբայրը գնաց, հետաքրքրվեց, դրանից հետո ձեւակերպեցին, որ զոհվել է»:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 080-Արմավիր:

## ԱՐՏԱԿ ԱԲՐԱՀԱՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ծնվել է 1977թ. հունիսի 14-ին, Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, կնոջ եւ երկու երեխաների հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ, ծնողները՝ հողագործ: Արտակ Վարդանյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. հունիսի 15-ին Արտակը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Երեւանում: Ծառայության ավարտից հետո անցել է պայմանգրային ծառայության՝ ՀՀ բանակում:

Զոհվել է 2001-ի հունիսի 23-ին Հորադիզի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Էմմա Վարդանյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.000 ԱՄՆ դոլար, երկու երեխայի համար ստանում է թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 081-Արմավիր:

## ՍԵՐԳԵՅ ՎՅԱՉԵՍԼԱՎԻ ՍՈՒԼԴԻՆ



Ծնվել է 1975թ. նոյեմբերի 22-ին, Կաբարդինո-Բալկարիայում: Բնակվել է ծնողների հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է շատ վատ: Սերգեյ Սուլդինը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2002թ. մայիսի 30-ին Սերգեյը մեկնել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից՝ որպես պայմանագրային զինծառայող: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Արմավիրում:

Սերգեյ Սուլդինը Հոկտեմբերյանի զորամասում աշխատել է որպես պայմանագրային ծառայող: 2002 թվականին Սուլդինը Հայաստանից գործուղվել է Հյուսիսային Կովկաս, Օսեթիա: Հարազատներին հայտնել են, որ Օսեթիայում եղած ժամանակ Սուլդինն ընկել է անդունդը: Հարուցվել է քրեական գործ, որը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով: Զոհվել է 2002-ի հոկտեմբերի 29-ին Օսեթիայում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ընկել է անդունդը:

Դեպքի առնչությամբ քրեական գործ է հարուցվել, սակայն կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով: Ըստ հոր՝ Վյաչեսլավ Սուլդինի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 3.000 դոլար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 082-Արմավիր:



## ՌՈՄԱՆ ՍԱՐԳՍԻ ՂԱՅՐԱՄԱՆՅԱՆ

Ծնվել է 1984թ. հուլիսի 20-ին, Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, տատիկի, պապիկի եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Ռոման Ղայրամանյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2002թ. նոյեմբերի 1-ին Ռոմանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մարտակերտում:

Զոհվել է 2004թ. մարտի 25-ին՝ Մարտակերտի պահակակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ներքին եւ արտաքին արյունահոսություն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Գայանե Սմբատյանի, ընտանիքը ստանում են 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 083-Արմավիր:

## ՍԱՄՍՈՆ ՔԱՋԻԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծնվել է 1980թ. հոկտեմբերի 27-ին, Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, տատիկի, պապիկի, քրոջ եւ երկու եղբայրների հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Սամսոն Մնացականյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1998թ. նոյեմբերին Սամսոնը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Իջեւանում:

Սամսոն Քաջիկի Մնացականյանը ծառայության ընթացքում խնդիրներ է ունեցել համածառայակիցների հետ, հարուցվել է քրեական գործ՝ (մեղադրող դատախազն է եղել Ջհանգիրյանը) Քաջիկին դատապարտել են ազատազրկման եւ տեղափոխել Վանաձոր ՔԿՀ, պատիժը կրելուց հետո ծառայությունը շարունակելու էր, սակայն ՔԿՀ-ում 1999թ. հոկտեմբերի 7-ին մահացել է տուբերկուլյոզ հիվանդությունից:

Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ տուբերկուլյոզ:

Տեղեկությունները տրամադրել է հայրը՝ Քաջիկ Մնացականյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 084-Արմավիր:

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Ծնվել է 1979թ. փետրվարի 13-ին, Արմավիրի մարզի Փշատավան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ մոր եւ երկու քույրերի հետ: Հարություն Հարությունյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1997թ. մայիսի 29-ին Հարությունը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Լեռնային Ղարաբաղում՝ Հորադիզում:

Զոհվել է 1999թ. մարտի 15-ին Աղդամում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ թշնամու գնդակ, հրազենային վնասվածք, «Իբր թե Հարությունը եւ համածառայակիցը հատել են ՀՀ սահմանն ու զոհվել թշնամու գնդակից:» Քույրը՝ Լիանան, պաշտոնական վարկածի հետ համաձայն չէ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ընտանիքը ՊՆ-ից ստացել է 500 դոլար միանվագ օգնություն, 30.000 ՀՀ դրամ փոխհատուցում՝ նպաստի հետ միասին:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 085-Արմավիր:

## ԱՐՄԱՆ ՌԱԶՄԻԿԻ ՄԱԴՈՅԱՆ

Ծնվել է 1981թ. հոկտեմբերի 13-ին՝ Արմավիրի մարզի Փշատավան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ երկու եղբայրների հետ:

1999թ. հոկտեմբերի 21-ին Արմանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Վանաձորում, ապա տեղափոխվել Ջեյթունի զորամաս:

Մահացել է 2000թ. դեկտեմբերի 24-ին Էրեբունի հոսպիտալում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ կայծակնային մինինգիտ: Արմանին ծեծել են քնած ժամանակ:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Դատաքննությունը տեղի է ունեցել Եր–անի Ջեյթունի ընդհանուր իրավասության դատարանում: Սերժանտին դատապարտել են 7, իսկ օրվա հերթապահին՝ 5 տարվա ազատազրկման:

Ընտանիքը ՊՆ-ից ստացել է 500 դոլար միանվագ օգնություն, 9.000 ՀՀ դրամ փոխհատուցում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 086-Արմավիր:



## ԱՐՄԵՆ ՏԱՐԻԵԼԻ (ՈՒՐՄՇԱՏԻ) ՄԿՐՏՉՅԱՆ

Ծնվել է 1975թ. ապրիլի 25-ին՝ Արմավիրի մարզի Փշատավան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Արման Մկրտչյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1993թ. նոյեմբերին Արմանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Հորադիզի թիվ 50869 զորամասում:

Զոհվել է 1994թ. մայիսի 20-ին Ֆիզուլիում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է զոհվել է՝ ծառայողական պարտականությունները կատարելիս: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր կնոջ՝ Ելենայի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 100.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն, այժմ ամսական 30.000 ՀՀ դրամ են ստանում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 087-Արմավիր:



## ՅՈՒՐԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1977թ. փետրվարի 10-ին՝ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Արման Մկրտչյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. գարնանը Յուրան զորակոչվել է բանակ՝ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Իջեւանի զորամասում:

Զոհվել է 1996թ. մարտի 6-ին Կարմիր Քարի սահմանին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք. զոհվել է թշնամու գնդակից: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Անդրանիկ Խաչատրյանի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 400.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ 30.000 ՀՀ դրամ նպաստի հետ միասին:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 088-Արմավիր:

## ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐԻ (ՆՈՐԻԿԻ) ՂՈՐՂԱՆՅԱՆ

Ծնվել է 1971թ. սեպտեմբերի 11-ին՝ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, քրոջ եւ երկու եղբայրների հետ: Սուրեն Ղորղանյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի բարձրագույն կրթություն:

1995թ. դեկտեմբերին Սուրենը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ջրականում (Ջաբրաիլ):

Զոհվել է 1997թ. ապրիլի 24-ին Ջրականի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ հրազենային վնասվածք. զոհվել է թշնամու գնդակից: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հորեղբոր որդու՝ Արմենի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ օգնություն ստացել է, բայց թե ինչքան՝ չի հիշում, այժմ 50.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական են ստանում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 089-Արմավիր:

## ՏԱՐՈՆ ԱՐՏՈՒՇԻ ԱՅՎԱԶՅԱՆ

Ծնվել է 1976թ. նոյեմբերի 7-ին՝ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ երկու քույրերի հետ: Տարոն Այվազյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. Տարոնը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Երեւանի Էրեբունու զորամասում, ապա տեղափոխվել «Եղնիկներ»՝ Տոնաշեն:

Մահացել է 1996թ.ն «Եղնիկներում» Տոնաշենում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ հիվանդացել է:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Դատաքննությունը իրականացվել է «Եղնիկներում»: Նույն զորամասի սպային դատապարտել են 7 տարվա ազատազրկման:

Ըստ մոր՝ Անահիտ Այվազյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ օգնություն ստացել է, բայց թե ինչքան՝ չի հիշում, այժմ 53.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական են ստանում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 090-Արմավիր:



## ՎԵՆՑԻԿ ՄԱՅԻՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1977թ. հուլիսի 4-ին՝ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ երկու քույրերի հետ: Վենցիկ Մարգարյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ.ն Վենցիկը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ղարաբաղում՝ Ջաբրաիիլում:

Մահացել է 1996թ. նոյեմբերի 19-ին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ համածառայակիցն է դանակահարել:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Վենցիկի համածառայակցին դատապարտել են 15 տարվա ազատազրկման:

Ըստ մոր՝ Կիմայի, ընտանիքը ստացել է 35.000 ՀՀ դրամ փոխհատուցում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 091-Արմավիր:



Վաղարշ Նորիկի Ազարյան

Ծնվել է 1985թ. օգոստոսի 3-ին՝ Արմավիրի մարզի Արեւիկ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, երկու քույրերի եւ եղբոր հետ: Վաղարշ Ազարյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2003թ. նոյեմբերի 27-ին Վաղարշը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մատաղիսում:

Մահացել է 2004թ. նոյեմբերի 21-ին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ավտովթար:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Դատաքննությունը տեղի է ունեցել Սյունիքի մարզում: Համածառայակից վարորդն եւ նույն զորամասի վաշտի հրամանատարը դատապարտվել են ազատազրկման:

Ըստ հոր՝ Նորիկի, ընտանիքը ՊՆ-ից 500.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն ստացել է, այժմ 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական են ստանում ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 092-Արմավիր:

## ԱՐՄԵՆ ՌՈՒՍՏԱՄԻ ՂՈՒԲԱԲՅԱՆ

Ծնվել է 1994թ. հունվարի 8-ին՝ Արմավիրի մարզի Մարգարա գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ:

2012թ. մայիսին Արմենը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Կուբաթլուում: Արմեն Ղուբաբյանը զորակոչվելիս ունեցել է քառամյա կրթություն:

Մահացել է 2013թ. մայիսի 17-ին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հոսանքահարություն՝ ձուկ որսալիս: Մայրը՝ Ազնիվը, պաշտոնական վարկածի հետ համաձայն չէ: Չի հավատում:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր, ընտանիքը ոչ մի փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 093-Արմավիր:

## ՌԱԶՄԻԿ ԱՅՄԱԴԻ ՊՈԼՈՅԱՆ



Ծնվել է 1977թ.ն Արմավիրի մարզի Արգավանդ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, երկու քույրերի եւ եղբոր հետ:

1996թ. Ռազմիկը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Լեռնային Ղարաբաղում: Ռազմիկ Պոլոյանը զորակոչվելիս ունեցել է ութնամյա կրթություն:

Մահացել է 1998թ. նոյեմբերին Էրեբունու հիվանդանոցում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գանգրենա:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Հորեղբայրը՝ Սուրիկը, տեղյակ չէ, արդյո՞ք ընտանիքը փոխհատուցում ստացել է, թե՞ ոչ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 094-Արմավիր:

## ՄԵՐՈՒԺ ՍԱՐԺԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Ծնվել է 1976թ. սեպտեմբերի 04-ին, Արմավիրի մարզի Տանձուտ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, չորս քույրերի եւ եղբոր հետ: Մերուժ Սահակյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. նոյեմբերին Մերուժը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Մեղրիում:

Մահացել է 1995թ. հունիսի 18-ին Մեղրու ճանապարհին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ավտովթար:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր կնոջ՝ Նարինեի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 400 ԱՄՆ դոլար միանվագ օգնություն, այժմ ստանում են 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 095-Արմավիր:



## ՄԱՐՏԻՆ ՌԱԶՄԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1979թ. մարտի 25-ին, Արմավիրի մարզի Արմավիր գյուղում, բնակվել նույն գյուղում՝ քրոջ եւ եղբոր հետ: Մարտին Մանուկյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է ութնամյա կրթություն:

1997թ. հունիսի 16-ին Մարտինը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Լեռնային Ղարաբաղում, «Եղնիկներում»:

Զոհվել է 1997թ. օգոստոսի 9-ին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյուն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ Գյուլվարդ Հարությունյանի՝ ընտանիքը ՊՆ-ից ստացել է միանվագ օգնություն, բայց ինքը չափը չի հիշում, այժմ ստանում են 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 096-Արմավիր:

## ԲԱԲԿԵՆ ՍՏԵՓԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Ծնվել է 1951թ. հունիսի 1-ին, Արմավիրի մարզի Ալաշկերտ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ կնոջ, չորս դուստրերի ու երկու որդիների հետ: Բաբկեն Կարապետյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1993թ. կամավոր մեկնել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Լեռնային Ղարաբաղի, «Սեւ Յովազ» ջոկատում:

Զոհվել է 2005թ. սեպտեմբերի 26-ին ԼՂՀ Ճամբարակում (Կրասնոսելսկ): Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ սիրտանոթային անբավարար աշխատանք: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ կնոջ՝ Ռոզայի, ընտանիքը ՊՆ-ից ոչ մի փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 097-Արմավիր:

## ՅՈՎՀԱՆՆԵՍ ՆՈՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Ծնվել է 1991թ. հունիսի 29-ին, Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Յովհաննես Գրիգորյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

2009թ. հունիսի 29-ին զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Ստեփանակերտում, եղել է Ռազմական ոստիկանության խոհարարի օգնականը:

Մահացել է 2010թ. մայիսի 20-ին տանը՝ արձակուրդի ժամանակ: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ սրտի աորտայի վերին հատվածի պատռվածք, ինֆարկտ: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Նորիկի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 2 մլն ՀՀ դրամ միանվագ օգնություն, այժմ ամսական ստանում են 10.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 098-Արմավիր:

## ԱՐՄԱՆ ԳԵՒՈՐԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1989թ. մայիսի 3-ին, Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների հետ: Արման Խաչատրյանը ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը եւ զորակոչի ժամանակ մեկ տարի է՝ ինչ աշխատում էր ԼՂՀ-ում:

2010թ. զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է Գորիսում:

Մահացել է 2012թ. մայիսի 3-ին Գորիսի ճանապարհին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ավտովթար: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 099-Արմավիր:



## ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1981թ. հունվարի 15-ին, Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների հետ: Հովհաննես Գրիգորյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1999թ. հուլիսին զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել, ծառայել է ԼՂՀ-ում՝ Հադրութում:

Մահացել է 2001թ. մարտի 18-ին Հադրութում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հոսանքահարվել է:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Աիդա Մարգարյանի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 800.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 100-Արմավիր:

## ՎԱՐՈՍ ԱՇՈՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



Ծնվել է 1981թ. հունվարի 24-ին՝ Արմավիրի մարզի Լուկաշին գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Վարոս Բաղդասարյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է միջնակարգ կրթություն:

1999թ. աշնանը Վարոսը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս ունեցել է հարթաթաթություն, ծառայել է Զոդի զորամասում, եղել է խոհարար:

Մահացել է 2001թ. ապրիլի 25-ին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ինքնասպանություն: Ծնողներն այս վարկածին կասկածում են: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Վարդուշ Դավթյանի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 1.000 ԱՄՆ դոլար միանվագ օգնություն, այժմ ստանում են 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 101-Արմավիր:

## ՄԱՆՎԵԼ ՍԱՆԹՐԻԻ ԱՊԻՋԱՆՅԱՆ



Ծնվել է 1963թ. մարտի 21-ին՝ Արմավիրի մարզի Այգեվան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ երեք որդիների, հարսի եւ թոռան հետ:

2010թ. նոյեմբերին Մանվել Ապիջանյանը կամավոր մեկնել է բանակ՝ Արմավիրի զինկոմիսարիատից: Բանակ մեկնելիս առողջական խնդիրներ չի ունեցել, ծառայել է Քարվաճառում (Քելբաջար):

Մահացել է 2012թ. նոյեմբերի 1-ին՝ Քարվաճառ-Վարդենիս ավտոճանապարհին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ավտովթար: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել: Համածառայակից վարորդը զոհվել է:

Ըստ Մոնիկ Սարգսյանի՝ ընտանիքը ՊՆ-ից ստացել է 500.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն, այժմ ստանում են 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 102-Արմավիր:



Մահար Վազիրի Մամոյան

Ծնվել է 1986թ. հունիսի 24-ին՝ Արմավիրի մարզի Շամիրամ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Մահար Մամոյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է ութնամյա կրթություն:

2005թ. նոյեմբերին Մահարը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս ունեցել է տեսողության հետ կապված հիվանդություն, որի պատճառով մի քանի անգամ հետաձգվել է բանակ զինակոչվելուց: Ծառայել է Ջաբրաիլում:

Մահացել է 2006թ. սեպտեմբերի 6-ին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ինքնասպանություն:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Երկու համածառայակիցներին դատապարտել են 4-ական տարի ազատազրկման՝ ինքնասպանության հասցնելու հոդվածով: Հարազատները գտնում են, որ կատարվել է դիտավորյալ սպանություն: Իրենք դատական նիստերին չեն մասնակցել, քանի որ նիստերը տեղի են ունեցել Ստեփանակերտում:

Ըստ հոր՝ Վազիրի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 500.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն, այժմ ստանում են 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 103-Արմավիր:



## ՎԱՀԵ ՀՐԱՉՅԱՅԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ծնվել է 1978թ. հունիսի 22-ին՝ Արմավիրի մարզի Քարակերտ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1997թ. հունիսին Վահե Աբրահամյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Երեւանում՝ նախարարության թիկունքի զորքերում:

Մահացել է 1997թ. հուլիսի 27-ին Երեւանում՝ զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք. դիտավորյալ սպանություն:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Երեք համածառայակիցներից մեկը մինչ դատաքննությունն է մահացել: Մի համածառայակցին դատապարտել են 7, մյուսին՝ 13 տարվա ազատազրկման: Ըստ եղբոր՝ Վահրամի, իրենք ստույգ չգիտեն, արդյո՞ք ճիշտ մարդիկ են դատապարտվել, թե՞ ոչ:

Ընտանիքը ՊՆ-ից ստացել է 200.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն, այժմ ստանում են 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 104-Արմավիր:

## ՍԵՅՐԱՆ ԻՇԽԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ծնվել է 1964թ. ապրիլի 12-ին՝ Արմավիրի մարզի Քարակերտ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ կնոջ եւ երկու որդիների հետ: Բանակ մեկնելիս ունեցել է բարձրագույն կրթություն:

2009թ. ամռանը Սեյրան Վարդանյանը կամավոր մեկնել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Բանակ մեկնելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Արարատի զորամասում:

Մահացել է 2011թ. օգոստոսի 5-ին Արարատի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ինֆարկտ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ընտանիքը ՊՆ-ից ստացել է 2 մլն 400.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն, այժմ ստանում են 19.500 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 105-Արմավիր:

## ՇԻՐԱԶ ԱՎԵՏԻՔԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ



Ծնվել է 1990թ. մայիսի 28-ին՝ Արմավիրի մարզի Քարակերտ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ քրոջ հետ: Զորակոչվելիս եղել է երկրորդ կուրսի ուսանող:

2008թ. հունիսի 9-ին Շիրազ Բարսեղյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Շամշադինում:

Զոհվել է 2009թ. սեպտեմբերի 5-ին Շամշադինի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զոհվել է դիպուկահարի գնդակից՝ մարտական հերթապահության ժամանակ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Հայրը՝ Ավետիք Բարսեղյանը, ՊՆ-ից ստացած միանվագ օգնության չափը չի հիշում, այժմ ստանում են 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 106-Արմավիր:



## ԱՏՈՄ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ծնվել է 1983թ. հունվարի 26-ին՝ Արմավիրի մարզի Գետաշեն գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Զորակոչվելիս ունեցել է ութնամյա կրթություն:

2001թ. մայիսի 18-ին Ատոմ Աբրահամյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Լեռնային Ղարաբաղում՝ Սանասարում (Կուբաթլի):

Զոհվել է 2002թ. մարտի 25-ին՝ դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զոհվել է հակառակորդի գնդակից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հորեղբոր՝ Վարիչի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 1.500 ԱՄՆ դոլար միանվագ օգնություն, այժմ ստանում են 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 107-Արմավիր:



## ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏՉԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1968թ. օգոստոսի 25-ին՝ Արմավիրի մարզի Շենավան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների հետ: Եղել է մեխանիկ եւ արհեստավոր:

1992թ. Անդրանիկ Հովհաննիսյանը կամավոր մեկնել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Բանակ մեկնելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Փայլակ Կիրակոսյանի մարտական գումարտակում:

Զոհվել է 1995թ. ապրիլի 28-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ զոհվել է ականի պայթյունից՝ մարտական գործողության ժամանակ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տեղեկությունները հաղորդել է Անդրանիկ Հովհաննիսյանի քույրը՝ Լիդան:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 108-Արմավիր:

## ՌԱԶՄԻԿ ՆՈՐԵՎԱՅՐԻ (ՖԱՆՏԱՄԱԶԻ) ՊԱՊԱՆՅԱՆ

Ծնվել է 1942թ. օգոստոսի 30-ին՝ Շիրակի մարզի Երազգավորս գյուղում, բանակ մեկնելիս բնակվել է Արմավիրի մարզի Բերքաշատ գյուղում՝ կնոջ, որդու եւ երեք դուստրերի հետ: Ունեցել է ութնամյա կրթություն: Եղել է մեխանիկ:

1994 թ. օգոստոսին Ռազմիկ Պապանյանը կամավոր մեկնել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Բանակ մեկնելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Լեռնային Ղարաբաղում՝ Թալիշում:

Զոհվել է 1995թ. ապրիլի 28-ին Թալիշում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զոհվել է ականի պայթյունից՝ մարտական գործողության ժամանակ: Կինը՝ Սուսաննան, պաշտոնական վարկածի հետ համաձայն չէ, ասում է՝ դիտավորյալ սպանություն է եղել:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ընտանիքին ՊՆ-ից գումարի տեսքով միանվագ օգնություն է առաջարկվել, սակայն իրենք հրաժարվել են, այժմ ստանում են 31.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 109-Արմավիր:

## ԳԱՐԻԿ ԼՅՈՎԱՅԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ



Ծնվել է 1977թ. օգոստոսի 7-ին՝ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. հոկտեմբերի 21-ին Գարիկ Աղաջանյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Սիսիանում:

Զոհվել է 1996թ. հուլիսի 11-ին Սիսիանի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զոհվել է նռնակի պայթյունից: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Համածառայակից Արթուր Պապոյանը դատապարտվել է 15 տարվա ազատազրկման՝ համաձայն քրեական օրենսգրքի 99 հոդվածի 4-րդ եւ 6-րդ կետերի, 85 հոդվածի 4-րդ մասի, 232 հոդվածի 2-րդ մասի, 256 հոդվածի «գ» կետի եւ 255 հոդվածի «ա» կետի: Պատիժը կրել է «Կոշ» քրեակատարողական հիմնարկում: Ընտանիքի անդամները դատաքննությանը չեն մասնակցել, քանի որ այն տեղի է ունեցել Գորիսում: Որպես փաստաբան՝ գործում ներգրավված է եղել Լ.Թանյանը: Դատավորն է եղել Հ.Գալյանը, ատենակալներ՝ Մ.Խախանյանն ու Գ.Ավետյանը: Մեղադրող դատախազ է եղել Է.Հայրապետյանը:

Ըստ եղբոր՝ Գագիկի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 196.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն, այժմ ստանում են 30.000 դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 110-Արմավիր:

## ԶՈՐԻԿ ՄՈՄԵԻ ԹԱՄՈՅԱՆ

Ծնվել է 1979 թ. մայիսի 3-ին՝ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ:

1997թ. աշնանը Զորիկ Թամոյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում՝ «Եղնիկների» Տոնաշենում:

Զոհվել է 1999թ. հուլիսի 29-ին «Եղնիկների» Տոնաշենի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝զոհվել է թշնամու գնդակից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հորաքրոջ՝ Թամարի, ընտանիքը ՊՆ-ից ոչ մի փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 111-Արմավիր:



## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՆԻ ԽՆՈՒՍՅԱՆ

Ծնվել է 1971 թ. ապրիլի 24-ին՝ Արմավիրի մարզի Հոկտեմբերյան քաղաքում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, կնոջ եւ քրոջ հետ: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. գարնանը Հովհաննես Խնուսյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Վանաձորում:

Զոհվել է 1996թ. հունվարի 1-ին Հանրապետական հիվանդանոցում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝մահացել է երիկամային անբավարարությունից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Կինը՝ Լուսինեն, միանվագ օգնության չափը չի հիշում, այժմ ընտանիքը 85.000 ՀՀ դրամ նպաստ է ստանում,բայց իրենց ասել են, որ գումարի չափը կնվազեցնեն, երբ որդին ուսումն ավարտի:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 112-Արմավիր:



## ՍԵՎԱԿ ՀԱՄԼԵՏԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ծնվել է 1977 թ. դեկտեմբերի 15-ին՝ Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ երկու եղբայրների հետ:

1996թ. մայիսին Սեւակ Մելքոնյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Նոյեմբերյանում՝ Կողբում:

Զոհվել է 1996թ. նոյեմբեր 10-ին Նոյեմբերյանում՝ Կողբի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք. զոհվել է համածառայակցի կողմից արձակված գնդակից:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Երկու համածառայակիցներից մեկը դատապարտվել է 5, իսկ մյուսը՝ 6 տարվա ազատազրկման: Համածառայակիցների շահերը դատարանում պաշտպանել է հանրային պաշտպան Աղասի Մնոյանը:

Ըստ եղբոր՝ Շիրազի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է 90.000 ՀՀ դրամ միանվագ օգնություն, այժմ ստանում են 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 113-Արմավիր:



## ՀԱՅԿ ԶԱՐԶԱՆԴԻ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Ծնվել է 1981թ. նոյեմբերի 30-ին՝ Շիրակի մարզի Թալին քաղաքում, բնակվել Արմավիրի մարզի Դալարիկ գյուղում՝ ծնողների, եղբոր եւ երկու քույրերի հետ: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1999թ. աշնանը Հայկ Բունիաթյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Հորադիզի 51010-6 զորամասում:

Զոհվել է 2001թ. հունիսի 23-ին Հորադիզում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զովել է ականի պայթյունից:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Դատաքննությունը տեղի է ունեցել Գորիսում: Ընտանիքի անդամները չեն մասնակցել դատաքննությանը:

Ըստ մոր՝ Մալաքսիմի, ընտանիքն այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 114-Արմավիր:

## ՅՈՎՅԱՆՆԵՍ ԵՐԵՄԻ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1979թ. հունվարի 16-ին՝ Արմավիրի մարզի Դալարիկ գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների եւ չորս քույրերի հետ: Զորակոչվելիս եղել է Արմավիրի համալսարանի իրավաբանական բաժնի ուսանող:

1998թ. հունիսի 10-ին Յովհաննես Յովհաննիսյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Ասկերանում:

Զոհվել է 1999թ. մարտի 22-ին Ասկերանում՝ Յասնաբադում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ զովել է ծառայողական պարտականությունները կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Մայրը՝ Աստղիկ Յովհաննիսյանը, ՊՆ-ի կողմից հատկացված միանվագ օգնության չափը չի հիշում, ընտանիքն այժմ ստանում է 30.000 ՅՅ դրամ թոշակ/ամսական:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 115-Արմավիր:

## ԱՐՄԵՆ ՆՎԵՐԻ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1980թ. մարտի 2-ին՝ Արմավիրի մարզի Փշատավան գյուղում, բնակվել նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ երկու քույրերի հետ: Զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1998թ. մայիսին Արմեն հարությունյանը զորակոչվել է բանակ Արմավիրի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Վարդենիսում՝ Կարմիր Քարում:

Զոհվել է 2000թ. ապրիլի 27-ին Կարմիր Քարում: Որպես մահվան պաշտոնական վարկած՝ նշվում է՝ զովել է թշնամու գնդակից: Ընտանիքի անդամները պաշտոնական վարկածի հետ համաձայն չեն. կարծում են, որ դիտավորյալ սպանություն է եղել:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Եղբայրը՝ Արմանը, ՊՆ-ի կոմդից հատկացված միանվագ օգնության չափը չի հիշում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 116-Արմավիր:

# Արագածոտնի մարզից

## զինակոչված կամ պայմանագրային ծառայության մեկնած եւ զինադադարի ընթացքում զոհված զինվորականների մասին տեղեկությունները եւ լուսանկարները



## ՍԵՎԱԿ ԱԶԱՏԻ ԱՂՈՅԱՆ

Ծնվել է 1975թ. ապրիլի 18-ին, Թալինի շրջանի Մաստարա գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր ու քրոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Սեւակ Աղոյանը բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. նոյեմբերի 11-ին Սեւակը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Շամշադինում՝ Բերդում:

Զոհվել է 1996թ. մարտի 5-ին, Պառավաքարի պահակակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է «ծառայողական պարտականությունները կատարելիս»՝ վայր է ընկել ժայռից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Շողիկ Աղոյանի, ծնողներից յուրաքանչյուրը ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 001-Արագածոտն:



## ՍԵՎԱԿ ՖԵԼԻՔՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ծնվել է 1975թ. դեկտեմբերի 29-ին, Թալինի շրջանի Մաստարա գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ երկու եղբայրների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար, մայրն աշխատել է տեղի կոշիկի ֆաբրիկայում: Սեւակ Համբարձումյանը զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1993թ. մայիսին Սեւակը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Հոկտեմբերյանում՝ Արմավիրում:

Զոհվել է 1995թ. հունվարի 4-ին, Գորիսում. զորավարժությունների ժամանակ տանկը շուռ է եկել: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է «զոհվել է ծառայողական պարտականությունները կատարելիս»: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր կնոջ՝ Լուսինե Մինասյանի, Սեւակի հայրը ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 002-Արագածոտն:

## ԷԴԳԱՐ ՎԱՆԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ



Ծնվել է 1983թ. օգոստոսի 25-ին, Թալինի շրջանի Զովասար գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար, ծնողները չեն աշխատել: Էդգար Հովսեփյանը զորակոչվելիս ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

2001թ. նոյեմբերի 2-ին Էդգարը զորակոչվել է բանակ՝ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Հադրութում:

Զոհվել է 2003թ. հուլիսի 4-ին, Հադրութում, առաջին գծում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է «գլխի հրազենային վիրավորում»:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Գեղեցիկ Խաչատրյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.500 ԱՄՆ դոլար, այժմ ստանում է 70.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 003-Արագածոտն:

## ՎԱՐԴ ԽԼՂԱԹԻ ԳԱԼՍՏՅԱՆ



Ծնվել է 1965թ. դեկտեմբերի 26-ին, Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ կնոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար, ծնողները չեն աշխատել: Վարդ Գալստյանը մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1998թ. մարտի 19-ին Վարդ Գալստյանը կամավոր մեկնել է բանակ՝ Թալինի զինկոմիսարիատից: Առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում:

Զոհվել է 1999թ. մարտի 20-ին, Քարվաճառում (Քելբաջար): Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ դանակահարություն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է քույրը՝ Գոհար Գալստյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 004-Արագածոտն:



## ՍՄԲԱՏ ԱՇՈՏԻ ՍՄԲԱՏՅԱՆ

Ծնվել է 1983թ. օգոստոսի 31-ին, Երեւանում, բնակվել է Երեւանում՝ ծնողների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ, հայրն աշխատել է Կոշի գաղութում, մայրը գրադարանավարուհի է եղել: Սմբատ Սմբատյանը բանակ մեկնելիս ունեցել է բարձրագույն կրթություն: Դպրոցն ավարտել է ոսկե մեդալով, ավարտել է նաեւ տնտեսագիտական համալսարանի բակալավրիատը:

2004թ. հունիսի 15-ին Սմբատը զորակոչվել է բանակ՝ Երեւանի Էրեբունու շրջանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Արարատի N58831 զորամասում:

Զոհվել է 2005թ. հունիսի 2-ին, դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գլխուղեղի վնասվածք: Ըստ ծնողների, զինվորների միջեւ վիճաբանություն է սկսվել, որը շարունակվել է դիրքերում, ընկերոջը պաշտպանելու համար ծառայակից ընկերը կրակել է, գնդակը դիպել է Սմբատին:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քր. օր.-ի 373 հոդվածի 3-րդ մասով, դատապարտվել է ազատազրկման Հովհաննես Հակոբի Անտոնյանը, դատավոր՝ Գ.Բալյան:

Ըստ մոր՝ Սիրանուշ Սմբատյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.200.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 005-Արագածոտն:



## ԶԱՎԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Ծնվել է 1980թ. հունվարի 1-ին, Աշտարակի շրջանի Կոշ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների տատիկի եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ, մայրն աշխատել է Կոշի գաղութում: Զավեն Մեխակյանը բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1998թ. գարնանը Զավենը զորակոչվել է բանակ՝ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Քելբաջարում:

Զոհվել է 1999թ. մարտին, Քելբաջարում, զորամասից դուրս: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ցրտահարություն:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քր. օր.-ի 252 հոդվածի Գ կետ, ՀՀ քր. օր.-ի 37 հոդված, ազատազրկման են դատապարտվել Գ.Մադաթյանը, Հ.Սիմոնյանը, Բ.Մանուկյանը, Ս.Մադաթյանը: Տուժող կողմի փաստաբանը եղել է Տ.Քիշմիշյանը, դատավորներ՝ Ս.Համբարձումյան, Ե.Դարբինյան, մեղադրող դատախազ՝ Տ.Հարությունյան: Գ.Բալյան:

Ըստ մոր՝ Անուշ Ստեփանյանի, ընտանիքն այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 006-Արագածոտն:



## ՄԱՐՏԻԿ ՌՈԲԵՐՏԻ ՔԱԼՈՅԱՆ

Ծնվել է 1978թ. հոկտեմբերի 18-ին, Աշտարակի շրջանի Ավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ մոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Մարտիկ Քալոյանը բանակ մեկնելիս ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1996թ. նոյեմբերի 29-ին Մարտիկը զորակոչվել է բանակ՝ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Բերդում (Ճամշադինում):

Զոհվել է 1995թ. հունիսի 15-ին, Ճամշադին գյուղում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գլխուղեղի կարեւոր ֆունկցիաների խանգարում:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, մեղադրյալը դատապարտվել է ազատազրկման մեկուկես տարի ժամանակով:

Ըստ մոր՝ Գրետա Քալոյանի, ընտանիքն այժմ ստանում է 50.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 007-Արագածոտն:



## ՀԱՅԿ ԻՇԽԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1983թ. հուլիսի 31-ին, Աշտարակի շրջանի Ավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ, ծնողները չեն աշխատել: Հայկ Սարգսյանը, բանակ մեկնելիս, ունեցել է բարձրագույն կրթություն:

2004թ. հունիսի 20-ին Հայկը զորակոչվել է բանակ՝ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Տավուշի մարզում, Բերդի N51036 զորամասում:

Զոհվել է 2005թ. մարտի 16-ին, Կարմիր Քարի մարտական հենակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք: Ըստ հոր՝ Իշխան Սարգսյանի, սպանել են. «Դատավճռի անճշտությունը եւ բողոքիս էությունը կայանում է նրանում, որ Հայկ Սարգսյանին ոչ թե ինքնասպանության են հասցրել, այլ դիտավորությամբ սպանել են» (մեջբերում «Հետաքննություն» թերթի հոդվածից):

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քր. օր.-ի 110 հոդվածի 2-րդ, ՀՀ քր. օր.-ի 375-ի 1-ին եւ 2-րդ մասերով, ՀՀ քր. օր. 38-110 հոդվածի 2-րդ, 359 հոդվածի 1-ին, 38-375 հոդվածի 2-րդ մասերով, 358 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Դատապարտվել են ազատազրկման Դավիթ Առաքելյանը, Ատոմ Բոխյանը, Կարեն Մարտիրոսյանը: Դատավորներ՝ Ս.Ավետիսյան, Ռ.Ափինյան, մեղադրող դատախազ՝ Ս.Պապյան:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 600.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 10.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 008-Արագածոտն:

## ՍՈՒՐԱՋ ՍՈՒՐԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ծնվել է 1978թ. Ապարանի շրջանի Ծաղկահովիտ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար, հայրը աշխատել է որպես վարորդ, մայրը՝ հաշվապահ: Սուրաջ Վարդանյանը բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1997թ. ապրիլին Սուրաջը զորակոչվել է բանակ՝ Ապարանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Ստեփանակերտում, Ցորում:

Զոհվել է 1998թ. գարնանը, զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք: Ըստ ծնողների, հրամանատարի եղբայրը կրակել է իրենց որդուն, իրենք փորձել են բողոքել, բայց ապարդյուն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է հորեղբայրը՝ Արտակ Վարդանյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 009-Արագածոտն:

## ԱՐՄԱՆ ՄԱՆՎԵԼԻ ԳԵՒՈՐԳՅԱՆ



Ծնվել է 1979թ. նոյեմբերի 21-ին, Արագածոտնի մարզի Օհանավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Արման Գեւորգյանը բանակ մեկնելիս ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

1997թ. աշնանը Արմանը զորակոչվել է բանակ՝ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Երեւանում, Դավիթաշենում:

Զոհվել է 1998թ. հուլիսի 16-ին, Մարտակերտի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Գուրգեն Սահակյանը՝ նույն զորամասի լեյտենանտը, դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով: Վերահսկող դատախազ՝ Ջհանգիրյան:

Ըստ հոր՝ Մանվել Գեւորգյանի, ընտանիքը ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 010-Արագածոտն:



## ԼԵՌՆԻԿ ԳՐԻՇԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1972թ. հունվարի 3-ին, Արագածոտնի մարզի Օհանավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ երկու եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Լեռնիկ Սարգսյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1993թ. հոկտեմբերի 10-ին Լեռնիկը զորակոչվել է բանակ՝ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Նոյեմբերյանի Կողբի զորամասում:

Զոհվել է 1994թ. հոկտեմբերի 10-ին, Դովեղի լեռներում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զոհվել է մարտական պահակակետում:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր՝ Միհրան Սարգսյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 200.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 011-Արագածոտն:



## ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՅԻ ԽԱԼԱԹՅԱՆ

Ծնվել է 1974թ. օգոստոսի 30-ին, Արագածոտնի մարզի Օհանավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Անդրանիկ Խալաթյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1992թ. գարնանը Անդրանիկը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Լուսակերտում:

Զոհվել է 1994թ. հունվարի 27-ին, Մատաղիսի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զոհվել է հակառակորդի արձակած գնդակից: Արժանացել է հետմահու կրծքանշանի:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Արա Խալաթյանի, ընտանիքը ստանում է 80.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 012-Արագածոտն:

## ՄՈՒՇԵՂ ՆԵԼՍՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ



Ծնվել է 1976թ. հոկտեմբերի 23-ին, Արագածոտնի մարզի Կարբի գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ, մայրն աշխատել է «Շուշան» արտադրության տեղի մասնաճյուղում: Մուշեղ Ստեփանյանը բանակ զորակոչվելիս ավարտած է եղել ռազմական դպրոցը:

1994թ. մայիսին Մուշեղը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մարտունիում:

Զոհվել է 1996թ. հունիսի 3-ին, Խոջալուում, զորամասից դուրս: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ զոհվել է մարտական առաջադրանք կատարելիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Սոնա Հովհաննիսյանի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է միանվագ՝ 500.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 013-Արագածոտն:

## ՓԱՅԼԱԿ ՄԱՐՏԻՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



Ծնվել է 1988թ. փետրվարի 3-ին, Աշտարակում, բնակվել է Մուղնի թաղամասում՝ ծնողների հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Փայլակ Բաղդասարյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2006թ. մայիսին Փայլակը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Իջեւանում:

Մահացել է 2008թ. փետրվարի 3-ին, Երեւանի Հանրապետական հիվանդանոցում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ մահացել է շաքարային դիաբետից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է հորեղբոր կինը՝ Կարինե Բաղդասարյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 014-Արագածոտն:



Վարդան Ռոբերտի Օհանյան

Ծնվել է 1992թ. հուլիսի 26-ին, Աշտարակում, բնակվել է Մուղնի թաղամասում՝ ծնողների, երկու եղբոր եւ տատիկի հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Վարդան Օհանյանը բանակ զորակոչվելիս եղել է Հայաստանի Հյուսիսային համալսարանի ուսանող, տարկետում է վերցրել 2-րդ կուրսից:

2011թ. մայիսի 23-ին Վարդանը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Մինչ զորակոչվելը վիրահատության է ենթարկվել՝ բարորակ ուռուցք է ունեցել: Ծառայել է Ջրականի (Ջաբրաիլի) N59703 զորամասում:

Զոհվել է 2012թ. հունիսի 6-ին, Հորադիզի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ արյան սուր կորուստ:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, սակայն հանցակազմի բացակայության պատճառով գործը կարճվել է:

Ըստ մոր՝ Նվարդ Վարդումյանի, ընտանիքը ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 015-Արագածոտն:

# ՌՈՄԱՆ ԱՐԱՄԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



Ծնվել է 1985թ. ապրիլի 16-ին, Թալինի շրջանի Ակունք գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ, ծնողները չեն աշխատել: Ռոման Եղիազարյանը զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2003թ. մայիսի 15-ին Ռոմանը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մարտակերտի շրջանում, Մատաղիսում:

Զոհվել է 2003-ի դեկտեմբերի 24-ին, Մատաղիսի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գանգուղեղային վնասվածքից: Ըստ մոր՝ Գոհար Մելքոնյանի, կռիվ է եղել՝ սպանել են, իրենք ունեն տեսաերիզ, որտեղ մեղավորները մանրամասն պատմում են կատարած հանցագործության մասին: Տեսանյութ կա տեղադրված նաեւ YouTube-ում, որը պատրաստվել է «Հայելի» ակումբի կողմից:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: Տուժող կողմը փաստաբան չի ունեցել: Մեղադրյալի փաստաբանը եղել է Զարուհի Փոստանջյանը: Մեղադրյալը դատապարտվել է 15 տարի ազատազրկման, Ռոմանի ծնողները բողոքել են Վերաքննիչ դատարան, որից հետո 15 տարի ժամկետը դարձել է ցմահ: Քննիչը եղել է Արմեն Հակոբյանը, դատավորներ՝ վերաքննիչում՝ Մանասարյան, Գյումրիում՝ Մովսեսյան: Վերահսկող դատախազ՝ Ջհանգիրյան, մեղադրող դատախազներ՝ Արթուրով, Կոստանյան: Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվի դեկտեմբերի 18-ի վճռով այս գործով դատապարտվածները արդարացվել են: Արդարացման դատավճռի դեմ բողոքը Վերաքննիչ դատարանը մերժել է, անփոփոխ թողնելով ՇՄ ԸԻ դատարանի վճիռը:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.000.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 016-Արագածոտն:



## ՄԱՐԶՊԵՏ ՄԻՔԱՅԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 1980թ. նոյեմբերի 1-ին, Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ երկու եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Մարզպետ Հակոբյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1998թ. նոյեմբերի 13-ին Մարզպետը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մարտակերտում:

Զոհվել է 2000թ. հունվարի 8-ին, Մարտակերտի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ կյանքի հետ անհամատեղելի վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Անժելա Հակոբյանի, ընտանիքը ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 017-Արագածոտն:



Սերյոժա Վարդանի Մելքոնյան

Ծնվել է 1992թ. հուլիսի 17-ին, Արագածոտնի մարզի Իրինդ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ մոր եւ հորաքրոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Սերյոժա Մելքոնյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2010թ. նոյեմբերի 11-ին Սերյոժան զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Նուբարաշենում:

Զոհվել է 2011թ. սեպտեմբերի 27-ին, տանը, Իրինդ գյուղում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գլխուղեղի կենսական կարեւոր ֆունկցիաների սուր խանգարում, հեմոռագիկ շոկ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Վարդուհի Նավասարդյանի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է միանվագ գումար՝ 2.100.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 018-Արագածոտն:

## ՀԱԿՈԲ ԴԱՎԹԻ ԴԱՎԹՅԱՆ



Ծնվել է 1973թ. օգոստոսի 20-ին, Երեւանում, բնակվել է ծնողների եւ եղբոր հետ: Հակոբ Դավթյանը բանակ զորակոչվելիս ունեցել է բարձրագույն կրթություն:

1995թ. աշնանը Հակոբը զորակոչվել է բանակ Երեւանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Սեւանում:

Զոհվել է 1998թ. դեկտեմբերի 5-ին, Սեւանում, զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ սպանություն:

Տվյալները տրամադրել է հորեղբոր որդին՝ Մանվել Դավթյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 019-Արագածոտն:

## ՄԿՐՏԻՉ ԱՐԱՐԱՏԻ ՊՈՂՈՍՅԱՆ



Ծնվել է 1982թ. նոյեմբերի 11-ին, Արագածոտնի մարզի Վերին Սասնաշեն գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, երկու եղբոր եւ քրոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Մկրտիչ Պողոսյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2000թ. նոյեմբերի 23-ին Մկրտիչը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Ստեփանավանում:

Զոհվել է 2001թ. հուլիսի 27-ին, Ստեփանավանում, զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ մեխանիկական շնչահեղձություն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ հարուցվել է, բայց մայրը՝ Գայանե Սահակյանը չի ցանկացել խոսել այդ մասին:

Ընտանիքը ստանում է 50.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 020-Արագածոտն:



## ՍԱՄՎԵԼ ԼԵՎՈՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1988թ. հոկտեմբերի 13-ին, Արագածոտնի մարզի Նոր Արթիկ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ հողագործ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Սամվել Մարգարյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2006թ. դեկտեմբերի 9-ին Սամվելը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մատաղիսում N33651 զորամասում:

Զոհվել է 2007թ. դեկտեմբերի 9-ին, պահակակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վիրավորում: Ըստ ծնողների՝ դիպուկահարն է խփել:

Ըստ հոր՝ Լեւոն Մարգարյանի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է միանվագ՝ 1.700.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 021-Արագածոտն:



## ԱՐՄԱՆ ՀՈՎՍԵՓԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ծնվել է 1993թ. հոկտեմբերի 14-ին, Թալինի շրջանի Ցամաքասար գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Արման Մուրադյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2011թ. նոյեմբերի 28-ին Արմանը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մարտակերտում:

Զոհվել է 2013թ. հուլիսի 30-ին, Մարտակերտի պահակակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վիրավորում: Ըստ ծնողների՝ հրամանատարն է խփել:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, ընթացքի մեջ է:

Տվյալները տրամադրել է հայրը՝ Հովսեփ Մուրադյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 022-Արագածոտն:

## ԹԱԹՈՒԼ ՀՐԱՅՐԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ



Ծնվել է 1992թ. հունիսի 22-ին, Թալինում, բնակվել է Արագածոտնի մարզի Ցամաքասար գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Թաթուլ Մխիթարյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2010թ. հունիսի 25-ին Թաթուլը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Սանասարավանում (Կուբաթլու) պոլիգոնում:

Մահացել է 2012թ. օգոստոսի 21-ին, Երեւանի 8-րդ հիվանդանոցում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ արյան սուր լեյկոզ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Սուսաննա Վարդանյանի, ընտանիքը ՊՆ-ից ստացել է միանվագ՝ 200.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 023-Արագածոտն:

## ԱԻԲ ՄՐԱԶԻ ՉԱՐՉՈՅԱՆ



Ծնվել է 1977թ. դեկտեմբերի 15-ին, Թալինի շրջանի Հակկո գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, քրոջ եւ եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Աիբ Չարչոյանը բանակ զորակոչվելիս ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1997թ. նոյեմբերի 5-ին Աիբը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Հադրութի N38401 զորամասում:

Մահացել է 1998թ. հունիսի 1-ին, Մարտունիի հիվանդանոցում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ սուր արյունահոսություն: Ըստ եղբոր՝ Սերյոժա Չարչոյանի, ականի պայթյունից ոտքը վիրավորվել է, երկրորդ անգամ վիրահատելիս՝ նարկոզը շատ են տվել:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 024-Արագածոտն:



## ԺՈՐԱ ՄԿՐՏՉԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Ծնվել է 1992թ. օգոստոսի 20-ին, Արթիկում, բնակվել է Արագածոտնի մարզի Լուսակն գյուղում՝ ծնողների, եղբոր հետ եւ երկու քույրերի հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է վատ: Ժորա Մկրտչյանը, բանակ զորակոչվելիս, ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

2011թ. դեկտեմբերի 8-ին Ժորան զորակոչվել է բանակ Արթիկի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մատաղիսում, «Եղնիկներում»:

Մահացել է 2012թ. նոյեմբերի 11-ին, տանը: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գլխուղեղի կարեւոր ֆունկցիաների խանգարում: Ըստ հոր՝ Մկրտիչ Մկրտչյանի, 2012 թվի սեպտեմբերին որդուն ծեծել են, ինչի հետեւանքով նա հոսպիտալացվել է Ստեփանակերտում, հետո տեղափոխել են Երեւանի հոգեբուժարան, ինքը գնացել տեսել է որդուն, տեսել է, որ ահավոր ձեւով ծեծել են նրան, բերել է տուն, որտեղ էլ մահացել է:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, դատաքննությունն ընթացել է Գորիսում, ծնողները Գորիս գնալ չեն կարողացել:

Ընտանիքը ՊՆ-ից ստացել է միանվագ՝ 1.400.000 ՀՀ դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 025-Արագածոտն:



## ՍԱՄՎԵԼ ՍԱՍՈՒՆԻ ՍԱՖԱՐՅԱՆ

Ծնվել է 1976թ. հուլիսի 17-ին, Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, պապի, տատի, քրոջ եւ եղբոր հետ, ծնողներն աշխատել են, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Սամվել Սաֆարյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. աշնանը Սամվելը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Սիսիանում:

Մահացել է 1996թ. հուլիսի 7-ին, Սիսիանում, դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից: Ըստ հարազատների՝ բլինդաժում քնած ժամանակ ական կամ նռնակ են գցել:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, մեղավորը պատժվել է, բայց ծնողները չեն հետաքրքրվել, թե ինչ եղավ հետո:

Ընտանիքը հրաժարվել է ՊՆ-ից փոխհատուցման գումար վերցնել:

Տվյալները տրամադրել է հորաքույրը՝ Սվետիկ Մկրտչյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 026-Արագածոտն:

## ՀՐԱՆՏ ՎԱՍԻԼԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ



Ծնվել է 1976թ. դեկտեմբերի 7-ին, Թալինի շրջանի Արագածավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ հողագործ ծնողների եւ եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Վասիլ Սողոմոնյանը բանակ զորակոչվելիս ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1995թ. մայիսի 5-ին Հրանտը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Ստեփանավանում:

Մահացել է 1996թ. մարտի 23-ին, Երեւանի Հանրապետական հիվանդանոցում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ երիկամային անբավարարություն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Անգին Սողոմոնյանի, ընտանիքը հրաժարվել է ՊՆ-ից միանվագ գումար ստանալ, այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ, եւ 10.000 դրամ՝ տրանսպորտային ծախս:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 027-Արագածոտն:

## ԳԵՎՈՐԳ ԱՐԱՄԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ



Ծնվել է 1980թ. դեկտեմբերի 20-ին, Թալինի շրջանի Արտենի գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, երեք քույրերի եւ եղբոր հետ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Գեւորգ Մխիթարյանը բանակ զորակոչվելիս ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1998թ. դեկտեմբերի 23-ին Գեւորգը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մարտունիում, N35383 զորամասում:

Զոհվել է 1999թ. օգոստոսի 30-ին, Մարտունիի պահակակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գլխուղեղի սուր խանգարում:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Անահիտ Մխիթարյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 500.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 028-Արագածոտն:



## ԱՐԳԻՇՏԻ ՍՏՅՈՊԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1980թ. հուլիսի 25-ին, Թալինի շրջանի Արտենի գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ, մայրն աշխատել է որպես գրադարանի վարիչ, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Արգիշտի Գրիգորյանը բանակ զորակոչվելիս ունեցել է թերի միջնակարգ կրթություն:

1998թ. հոկտեմբերի 27-ին Արգիշտին զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Վարդենիսում:

Մահացել է 2000թ. հուլիսի 15-ին, Երեւանում, հիվանդանոցում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ողի վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մորեղբոր կնոջ՝ Կարինե Գեւորգյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 200.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 50.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 029-Արագածոտն:



## ԶՈՀՐԱՊ ՌՈՒՍՏԱՄԻ ՆԻԿՈԼՅԱՆ

Ծնվել է 1988թ. սեպտեմբերի 24-ին, Թալինի շրջանի Արտենի գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ երկու եղբոր, հայրն աշխատել է գինու գործարանում, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ:

2006թ. դեկտեմբերի 3-ին Արգիշտին զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է «Եղնիկներում», Տոնաշեն:

Զոհվել է 2008թ. նոյեմբերի 23-ին, պահակակետից իջնելիս ավտոմեքենան շուռ է եկել: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գլխուղեղի կենսական կարեւոր ֆունկցիաների խանգարում:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, ավտոմեքենայի վարորդին դատապարտել են 8 տարվա ազատազրկման:

Ըստ մոր՝ Ձյունիկ Մանուկյանի, ընտանիքը ստանում է 50.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 030-Արագածոտն:

## ԱՐՏԱՇԵՍ ՆՈՐԱՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ծնվել է 1978թ. հունվարի 1-ին, Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: Բնակվել է Թալինի շրջանի Արտենի գյուղում՝ ծնողների եւ երեք եղբոր եղբայրների, ծնողները չեն աշխատել, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է նորմալ: Արտաշես Խաչատրյանը զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1996թ. հունվարի 7-ին Արտաշեսը զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Քանաքեռում:

Զոհվել է 1997թ. մարտի 18-ին, Սիսիանում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ գանգուղեղի ֆունկցիաների խանգարում:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, նախաքննությամբ հիմնավորվել է, որ կատարվել է անզգույշ սպանություն եւ գործն, ըստ մեղադրանքի՝ Սուրիկ Գրիգորյանի՝ ՀՀ քր. օր.-ի 103 հոդվածի, եւ Հայկ Խաչատրյանի՝ ՀՀ քր. օր.-ի 233 հոդվածի, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Վայքի ժողդատարան, որտեղ էլ այն կարճվել է համաներման մասին ՀՀ Ազգային Ժողովի որոշման հիման վրա:

Ըստ եղբոր՝ Ռադիկ Խաչատրյանի, ընտանիքը ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 031-Արագածոտն:

## ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Ծնվել է 1982թ. հոկտեմբերի 12-ին, Արագածոտնի մարզի Թալին քաղաքում, բնակվել է նույն վայրում՝ ծնողների, եղբոր եւ երկու քույրերի հետ: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Կարեն Գրիգորյանը զորակոչվելիս ունեցել է բարձրագույն կրթություն:

2003թ. սեպտեմբերին Կարենը զորակոչվել է բանակ նշանակում է ստացել Վազգեն Սարգսյան ռազմական ինստիտուտից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Արարատի զորամասում:

Զոհվել է 2004թ. հունվարի 13-ին, զորամասի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Ըստ եղբոր՝ Արտակ Գրիգորյանի, ընտանիքն այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 032-Արագածոտն:

## ԺՈՐԱ ԱՇՈՏԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 1976թ. հոկտեմբերի 27-ին, Թալինի շրջանի Արագածավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, քրոջ եւ եղբոր հետ, ծնողները չեն աշխատել, ընտանիքի սոցիալական վիճակը եղել է բավարար: Ժորա Հակոբյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. մայիսի 5-ին Ժորան զորակոչվել է բանակ Թալինի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Հորադիզում:

Զոհվել է 1995թ. հոկտեմբերի 27-ին, Հորադիզում, զորամասից դուրս: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է քույրը՝ Արեգնազ Հակոբյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 033-Արագածոտն:

## ԽԱՉԱՏՈՒՐ ԿՈՐՅՈՒՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1994-ին, Երեւանում, բնակվել է նույն վայրում՝ ծնողների եւ եղբոր հետ, հայրը եղել է արտագնա աշխատանքի մեջ: Խաչատուր Խաչատրյանը զորակոչվելիս եղել է Հայաստանի Պետական Ագրարային համալսարանի 1-ին կուրսի ուսանող:

2012թ. աշնանը Խաչատուրը զորակոչվել է բանակ: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում:

Մահացել է 2013թ. սեպտեմբերի 14-ին, զինվորական հոսպիտալում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քր. օր.-ի 365 հոդվածի 1-ին մասով, ՀՀ քր. օր.-ի 375 հոդվածի 1-ին մասով, ՀՀ քր. օր.-ի 365 հոդվածի 2-րդ մասով: Դատապարտվել են ազատազրկման Տիգրան Մելիքի Հակոբյանը, Արթուր Մարտիրոսյանը, Արթուր Զոհրաբյանը:

Տվյալները վերցված են www.hcav.am կայքից: Դեպքի մասին հոդվածներ են տպագրվել նաեւ www.tert.am, www.news.am, www.1inam կայքերում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 034-Արագածոտն

## ՍԱՄԻԿՈՆ ՄԱՐԱՏԻ ՋՆԴՈՅԱՆ



Ծնվել է 1978թ. հոկտեմբերի 10-ին, Արագածոտնի մարզի Ալագյազ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ քրոջ հետ: Սամիկոն Ջնդոյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1996թ. աշնանը Սամիկոնը զորակոչվել է բանակ Ապարանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Քարվաճառում (Քելբաջար):

Զոհվել է 1998թ. հուլիսի 2-ին, Քարվաճառի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է քույրը՝ Նազեն:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 035-Արագածոտն:

## ՍՈՒՐԵՆ ՄՈՎՍԵՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ



Ծնվել է 1973թ. ապրիլի 1-ին, Արագածոտնի մարզի Աղձք գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: 1995թ.և Սուրենն ամուսնացել է, ունեցել երկու դուստր: Սուրեն Մովսիսյանը բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. Սուրենը մեկնել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Էջմիածնի տանկային զորամասում: Ծառայությունից հետո մնացել է բանակում՝ որպես պայմանագրային ծառայող:

Զոհվել է 1998թ. սեպտեմբերի 24-ին, Յորադիզ մեկնելիս, Վայոց Ձորի ճանապարհին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ավտովթար, տրավմատիկ շոկ՝ մարտական առաջադրանք կատարելիս: Զոհվել է միաժամանակ եղբոր՝ Վարդան Մովսիսյանի հետ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Լալայի, Սուրենի երեխաներն ստանում են 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 036-Արագածոտն



## ՎԱՐԴԱՆ ՄՈՎՍԵՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1974թ. հուլիսի 1-ին, Արագածոտնի մարզի Աղձք գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Վարդան Մովսիսյանը բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1993թ.ն հոկտեմբեր-նոյեմբերին Վարդանը մեկնել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Բանակ մեկնելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Էջմիածնում: Ծառայությունից հետո մնացել է բանակում՝ որպես պայմանագրային ծառայող:

Զոհվել է 1998թ. սեպտեմբերի 24-ին, Յորադիզ մեկնելիս, Վայոց Ձորի ճանապարհին: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ավտովթար, մեխանիկական շնչահեղձություն: Զոհվել է միաժամանակ եղբոր՝ Սուրեն Մովսիսյանի հետ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 037-Արագածոտն



## ԿԱՐՈ ՅՈՎՍԵՓԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1990թ. հոկտեմբերի 17-ին, Արագածոտնի մարզի Աղձք գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր: Ընտանիքի սոցիալական վիճակը եղել է լավ: Կարո Մովսիսյանը զորակոչվելիս ունեցել է բարձրագույն կրթություն, քիմիկոս-կենսաբանի մասնագիտությամբ: Կարոն ծառայության է մեկնել եղբոր հետ միաժամանակ:

2011թ. հունիսի 6-ին Կարոն զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Աբովյանում՝ Բալահովտում:

Մահացել է 2013թ. հուլիսի 25-ին, հիվանդանոցում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ լիմֆոմա, արյան լեյկոզ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Գոհարի, ընտանիքն առայժմ որեւէ փոխհատուցում չի ստացել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 038-Արագածոտն:

## ԱՐՄԱՆ ՄՈՒՐԱԴԻ ՉԱՏՈՅԱՆ



Ծնվել է 1977թ. հունիսի 18-ին, Արագածոտնի մարզի Օրգով գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, երկու եղբայրների, տատիկի ու պապիկի հետ: Արման Չատոյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. հունիսի 15-ին Արմանը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Կրասնոսելսկում, գյուղ Վահան:

Զոհվել է 1995թ. հուլիսի 31-ին, Թթուջրի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ համածառայակցի կողմից կատարված անզգույշ սպանություն: Ծնողները կասկածներ ունեն եւ կարծում են, որ իրենք մինչեւ այժմ չգիտեն՝ իրականում ինչ է տեղի ունեցել:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, որը լսվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանում: Համածառայակցին դատապարտել են 4 տարի 5 ամիս ժամկետով ազատազրկման: Արմանի ծնողները դատարանի վճիռը մինչեւ այսօր չեն ստացել:

Ըստ մոր՝ Անահիտ Բոցինյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 100.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 70.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 039-Արագածոտն:

## ԱՐԹՈՒՐ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒ ԱԶԻԶՅԱՆ



Ծնվել է 1985թ. հունիսի 30-ին, Արագածոտնի մարզի Կարբի գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Արթուր Ազիզյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2003թ. հունիսի 30-ին Արթուրը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Ասկերանում:

Զոհվել է 2004թ. մայիսի 28-ի լույս 29-ի գիշերը, Ասկերանի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ փոխհրաձգություն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Մարզպետունի Ազիզյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց չափը չի հիշում, այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 040-Արագածոտն:



## ՍԵՐՅՈԺԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է 1982թ. մարտի 4-ին, Արագածոտնի մարզի Ոսկեհատ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների,եղբոր եւ երեք քույրերի հետ: Սերյոժա Դավթյանը բանակ զորակոչվելիս եղել է իրավաբանական բաժնի/ֆակուլտետի ուսանող:

2000թ. հուլիսին Սերյոժան զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է «Եղնիկներում», Տոնաշեն:

Զոհվել է 2001թ. փետրվարի 28-ին, Տոնաշենի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ խեղդվել է ձյունից: Հայրը՝ Մարտիրոս Դավթյանը նշում է, որ իրենք չգիտեն՝ իրականում ինչ է պատահել:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, դատավարությունը տեղի է ունեցել Մարտակերտի զորամասում: Գումարտակի ղեկավարին դատապարտել են 3 տարի 5 ամիս ժամկետով ազատազրկման:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց հայրը չափը չի հիշում, այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 041-Արագածոտն:



## ԱՐԱՄ ՍԻՄՈՆԻ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1993թ. հունվարի 7-ին, Արագածոտնի մարզի Օշական գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Արամ Գյուլնազարյանը զորակոչվելիս եղել է Պոլիտեխնիկական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանող, սովորել է տրանսպորտային բաժնում, հաճախել է քանդակի, գոբելենի, նկարչության խմբակներ, եղել է պարի ազգագրական խմբի սան, երգել է ԱԼՄ-ում:

2011թ. հունիսի 24-ին Արամը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Բանակ մեկնելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում, Ասկերանում:

Զոհվել է 2012թ. հունիսի 18-ին, Ասկերանի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ դիպուկահարի գնդակից: ԼՂՀ նախագահի կողմից հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Արամի մասին գրել են թերթերում: Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Սիմոն Գյուլնազարյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ գումար ստացել է, բայց չափը չի հիշում, այժմ ստանում է 30.000 ՀՀ դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 042-Արագածոտն:

## ԱՐԹՈՒՐ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ



Ծնվել է 1977թ. հոկտեմբերի 5-ին, Արագածոտնի մարզի Օշական գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Արթուր Հովակիմյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն, եղել է ավտոմեխանիկ:

1995թ. հոկտեմբերին Արթուրը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մարտակերտում:

Զոհվել է 1996թ. մայիսի 16-ին, Մարտակերտի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հրազենային վնասվածք՝ հակառակորդի գնդակից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է մայրը՝ Արուսյակ Վարդանյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 043-Արագածոտն:

## ԱՐԱՅԻԿ ԷԴԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ



Ծնվել է 1979թ. հոկտեմբերի 21-ին, Արագածոտնի մարզի Օշական գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ երկու քույրերի հետ: Արայիկ Սարգսյանը բանակ զորակոչվելիս ունեցել է ութնամյա կրթություն, աշխատել է հոր հետ՝ շինարարությունում:

1997թ. հոկտեմբերի 23-ին Արայիկը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մատաղիսում:

Զոհվել է 1999թ. օգոստոսի 19-ին, Մատաղիսում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից, ձուկ որսալիս:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է մայրը՝ Սուսաննան: Ըստ նրա, իրեն հասանելիք նպաստը չեն հատկացնում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 044-Արագածոտն:



## ԱՐԹՈՒՐ ԱՇՈՏԻ ԱՆՏՈՆՅԱՆ

Ծնվել է 1982թ. օգոստոսի 30-ին, Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների,եղբոր եւ քրոջ հետ: Արթուր Անտոնյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2000թ. նոյեմբերին Արթուրը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Գյումրիի 20/12 զորամասում:

Զոհվել է 2001թ. մարտի 9-ին, Իբիշի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ինքնասպանություն: Հոր՝ Աշոտ Անտոնյանի կարծիքով, որդին ոչ թե ինքնասպան է եղել, այլ սպանվել է դիտավորյալ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ընտանիքը փոխհատուցում չի ստանում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 045-Արագածոտն:



## ԻՇԽԱՆ ԳԵՐԱՍԻՄԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1990թ. մայիսի 13-ին, Արագածոտնի մարզի Նոր Ամանոս գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ երկու քույրերի հետ: Իշխան Մովսիսյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2009թ. հունիսի 18-ին Իշխանը զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Մեղրիում, Ագարակում:

Զոհվել է 2010թ. նոյեմբերի 10-ին, դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ուժեղ քամու պատճառով ընկել է ժայռից: Մայրը՝ Անյուտան նշում է, որ իրենք չգիտեն՝ իրականում ինչ է պատահել:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, դատաքննությունը տեղի է ունեցել Կապանում, սակայն մայրը նիստերին չի մասնակցել, մինչեւ հիմա չի ստացել դատարանի վճիռը:

Ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 2.300.000 ՀՀ դրամ, այժմ ամսական ստանում է 10.000 դրամ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 046-Արագածոտն:

## ՍԱԲՐԻ ՔՅԱԼԱՇԻ ՆԱԲՈՅԱՆ



Ծնվել է 1978թ. օգոստոսի 15-ին, Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, երկու եղբոր եւ երկու քույրերի հետ: Սաբրի Նաբոյանը բանակ զորակոչվելիս ունեցել է ութնամյա կրթություն:

1996թ. հոկտեմբերին Սաբրին զորակոչվել է բանակ Աշտարակի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Հադրությում, Հորադիզում:

Զոհվել է 1997թ. հունվարի 16-ին, Ջանֆիդայի դիրքերում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հակառակորդի գնդակից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր՝ Մրազի՝ ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 40.000 ՀՀ դրամ, ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 047-Արագածոտն:

## ԱՐՍԵՆ ՖՐԻԴՈՆԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ



Ծնվել է 1990թ. սեպտեմբերի 28-ին, Արագածոտնի մարզի Դերեկ (նախկին Ջառջառիս) գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ երկու եղբայրների հետ: Արսեն Ներսիսյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2008թ. նոյեմբերին Արսենը զորակոչվել է բանակ Ապարանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Արագածավանում:

Զոհվել է 2010թ. փետրվարի 26-ին, Արագածավանում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ դժբախտ պատահար, գլխուղեղի վնասվածք:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ հոր՝ Ֆրիդոն Ներսիսյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 200.000 ՀՀ դրամ, ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 048-Արագածոտն:

## ԻՁԻԼԲԱՐ ՄԻՇԱՅԻ ՕՍՈՅԱՆ

Ծնվել է Արագածոտնի մարզի Ավշեն գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Ունեցել է միջնակարգ կրթություն: Իզիլբար Օսոյանը զորակոչվել է Ապարանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել:

Տվյալները տրամադրել է եղբայրը՝ Ալիկը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 049-Արագածոտն:



## ՖԵԼԻՔՍ ՆՎԵՐԻ ԴԻԼԱՆՅԱՆ

Ծնվել է 1977թ. հունվարի 19-ին, Արագածոտնի մարզի Շենավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Ֆելիքս Դիլանյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1995թ. ապրիլի 22-ին Ֆելիքսը զորակոչվել է բանակ Ապարանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Սովետաշենի զորամասում:

Զոհվել է 1996թ. հուլիսի 2-ին, զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ հոսանքահարվել է:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ մոր՝ Ամալյա Դիլանյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է, բայց ինքը չափը չի հիշում, այժմ ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 050-Արագածոտն:

## ԱՂԱԲԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ



Ծնվել է 1980թ. փետրվարի 18-ին, Արագածոտնի մարզի Շենավան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, եղբոր եւ քրոջ հետ: Աղաբեկ Մովսիսյանը բանակ զորակոչվելիս ունեցել է թերի բարձրագույն կրթություն:

1998թ. մայիսին Աղաբեկը զորակոչվել է բանակ Ապարանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Ստեփանակերտում:

Զոհվել է 2000թ. փետրվարի 18-ին, Ստեփանակերտի զորամասում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ դժբախտ պատահար, գլխուղեղի վնասվածք: Համածառայակիցը ՌԻԱԶ մակնիշի ավտոմեքենա վերանորոգելիս է եղել՝ հովացուցիչից մաս է պոկվել եւ դիպել Աղաբեկի գլխին, հարվածը եղել է մահացու:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր՝ Վռամի, ընտանիքը ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 051-Արագածոտն:

## ԿԱՐԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1978թ. ապրիլի 5-ին, Արագածոտնի մարզի Օրգով գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ քրոջ հետ: Կարեն Խաչատրյանը բանակ զորակոչվելիս ունեցել է ութնամյա կրթություն, սովորել է ավտոդպրոցում:

1996թ. գարնանը Կարենը զորակոչվել է բանակ Ապարանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Հորադիզում:

Զոհվել է 1996թ. նոյեմբերի 25-ին, Հորադիզում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ականի պայթյունից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ եղբոր՝ Վարդգեսի, ընտանիքը ստանում է 30.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 052-Արագածոտն:

## ԱՐՄԵՆ ՎԱՆԻԿԻ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է 1977թ. սեպտեմբերի 23-ին, Արագածոտնի մարզի Պռոշյան գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Արմեն Դավթյանը բանակ զորակոչվելիս ունեցել է ութնամյա կրթություն:

1995թ. դեկտեմբերի 20-ին Արմենը զորակոչվել է բանակ Նաիրիի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Ղալթաղչիում:

Զոհվել է 1996թ. ապրիլի 29-ին, Ղալթաղչիում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ընկել է գնացքից:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է եղբայրը՝ Զավենը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 053-Արագածոտն:



## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Ծնվել է 1954թ. մայիսի 29-ին, ՌԴ Իվանովոյի մարզում, բնակվել է ՀՀ Ապարանի շրջանի Մուլքի գյուղում՝ ծնողների եւ իր ընտանիքի հետ, ունեցել է հինգ երեխա: Ալեքսանդր Մկրտչյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

1995թ. հունիսի 1-ին Ալեքսանդրը զորակոչվել է բանակ Ապարանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Քարվաճառում (Քելբաջար):

Մահացել է 1995թ. հոկտեմբերի 14-ին, Քարվաճառի (Քելբաջար) 9-րդ պահակակետում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ինֆարկտ:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Ըստ կնոջ՝ Էլմիրա Մկրտչյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 500.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 դրամ եւ 26.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 054-Արագածոտն:

## ԿԱՐԵՆ ՎԱՐԴԳԵՍԻ ԱՍԱՏՐՅԱՆ



Ծնվել է 1977-ի նոյեմբերի 26-ին, Ապարանի շրջանի Չքնաղ գյուղում, բնակվել է Երեւանում, Սիլիկյան թաղամասում՝ ծնողների, քրոջ եւ եղբոր հետ: Կարեն Ասատրյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. հուլիսի 7-ին Կարենը զորակոչվել է բանակ: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում, Ջրականում (Ջաբրաիլ):

Մահացել է 1995թ. հունիսի 13-ին, Երեւանի զինվորական հոսպիտալում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ կույր աղիքը պայթել է:

Դեպքի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տվյալները տրամադրել է հորեղբոր կինը՝ Աղավնի Ասատրյանը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 055-Արագածոտն:

## ԱՐՄԵՆ ԳԱՌՆԻԿԻ ԱՆՏՈՆՅԱՆ



Ծնվել է 1975-ի օգոստոսի 20-ին, Ապարանի շրջանի Չքնաղ գյուղում, բնակվել է Կոտայքի մարզի Զորավան գյուղում՝ ծնողների եւ եղբոր հետ: Արմեն Անտոնյանը բանակ զորակոչվելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

1994թ. գարնանը Արմենը զորակոչվել է բանակ Աբովյանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում, Հորադիզում:

Զոհվել է 1994թ. հոկտեմբերի 16-ին, Գորիսում՝ Շուռնուխում, զորամասից դուրս: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ սպանություն:

Դեպքի առնչությամբ քրեական գործ հարուցվել է, բայց եղել է չբացահայտված գործ, քանի որ չեն կարողացել գտնել, թե ով է Արմենին սպանել:

Տվյալները տրամադրել է հորեղբայրը՝ Սիրեկան Անտոնյանը, որը նաեւ նշել է, որ սպանողը եղել է հայ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 056-Արագածոտն:



## ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՐԵՄՅԱՆ

Ծնվել է 1960-ի նոյեմբերի 14-ին, Ապարանի շրջանի Կայք գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ կնոջ, երկու դուստրերի եւ որդու հետ: Արթուր Երեմյանը բանակ մեկնելիս ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

1998թ. փետրվարի 24-ին Արթուրը մեկնել է բանակ՝ պայմանագրային ծառայության Ապարանից: Մեկնելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է ԼՂՀ-ում, Քելբաջարում:

Մահացել է 2012թ. նոյեմբերի 1-ին, Վարդենիսում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ներքին արյունահոսություն: Ըստ կնոջ՝ ճանապարհին ավտոմեքենան, որի ղեկին եղել է Արթուրը, շուռ է եկել, պատահարի հասին հաղորդում է «Սուր անկյուն» հաղորդաշարով:

Դեպքի առնչությամբ քրեական չի գործ հարուցվել:

Ըստ կնոջ՝ Հեղինե Երեմյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.500.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 դրամ եւ 26.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 057-Արագածոտն:



## ՏԻԿՈ ԴԱՎԹԻ ՏԻԿՈՅԱՆ

Ծնվել է 1980-ի նոյեմբերի 15-ին, Ապարանի շրջանի Ռյա Թազա գյուղում, բնակվել է նույն գյուղում՝ ծնողների, երկու քույրերի եւ երեք եղբայրների հետ: Տիկո Տիկոյանը բանակ մեկնելիս ունեցել է միջնակարգ կրթություն:

2000թ. հոկտեմբերին Տիկոն զորակոչվել է բանակ Ապարանի զինկոմիսարիատից: Զորակոչվելիս առողջական որեւէ խնդիր չի ունեցել: Ծառայել է Իջեւանում:

Ծառայության ժամանակ պատահաբար գարի է ընկել Ադրբեջան, որի արդյունքում ստացել հոգեկան շեղում: Կարմիր Խաչի օգնությամբ իրեն վերադարձրել են Հայաստան եւ 2001թ. մարտի 15-ին մահացել է Ռյա Թազայում: Որպես մահվան պաշտոնական վարկած նշվում է՝ ինքնասպանություն:

Դեպքի առնչությամբ քրեական չի գործ հարուցվել:

Ըստ կնոջ՝ Հեղինե Երեմյանի, ընտանիքը ՊՆ-ից միանվագ ստացել է 1.500.000 ՀՀ դրամ, այժմ ստանում է 30.000 դրամ եւ 26.000 դրամ թոշակ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբում հաշվառված գործ՝ համար 058-Արագածոտն:

# Խնդրի մասին հրապարակումներից քաղվածքներ

www.asparez.am
www.hcav.am

# «Չրո մահ բանակում». դա կլինի Հայոց բանակի իսկական տոն

28 Յունվար, 2013



Բանակի օրն ենք նշում հունվարի 28-ին: Արդարացի է այդպիսի տոն ունենալը, Յայաստանը, որ պետականության կորստից հետո 1918-ին աշխարհազորով Սարդարապատում հաղթեց ու առաջին հանրապետության հիմքը դրեց, այդ միջոցին մի կարճ ժամանակահատված բանակ ունեցավ: Լավից-վատից, փաստն այն է, որ ստեղծվեց այդ բանակը: Այդ բանակի եւ հանրապետության անկման պատմությունն ավելի քան հայտնի է՝ այստեղ վերապատմելու համար: Սովետական բանակը, հասկանալիորեն, երբեք հայոց բանակ չէր, թեպետ շնչին ընկնող հայազգի հերոսների եւ հրամանատարների թվով չենք զիջել որեւէ այլ երկրի:

1987-ից Սովետական Յայաստանի օդում սկսեցին թեւածել Ղարաբաղի միավորման տրամադրություններ, մինչեւ 1988-ի փետրվարի վերջին՝ Սումգայիթյան կոտորածները, ոչ ոք հրապարակավ չէր խոսում զինված պայքարի կամ անկախության ու անկախ պետության բանակի մասին: Այդ կոտորածներից հետո էր, որ սկսեց խմորվել անկախության եւ բանակ ունենալու գաղափարը, առաջնագծում մտավորականներ, դասախոսներ, ուսանողներ էին: Արագ ձեւավորվեցին հարյուրավոր կամավորական ջոկատներ, որոնք պատերազմի դաշտով, կրթությամբ ու ինքնակրթությամբ, սխալների եւ հաջողությունների դասերով անցնելով, կադրային սպաների ու իշխանությունների ջանքերով վերածվեցին կանոնավոր բանակի: ԱՍԱԼԱ-յից եւ սփյուռքից դժվար է ասել՝ քանի հազար հոգի եկավ Յայաստան եւ մասնակցեց 6-ամյա ազատագրական պայքարին, որի մի բաղադրիչը անկախ պետության կայացումն էր, մյուսը՝ Արցախի պաշտպանությունը, կամ՝ մեկը՝ մյուսով:

Ակնհայտ էր ու բոլոր անկախ փորձագետներն են նշում Արցախյան հերոսամարտում Յայկական կողմի բարձր մարտունակությունը, տարբեր տվյալներով՝ 1988-1994թթ մեր զոհերի թիվը մոտ 6.000 է կազմել, իսկ ադրբեջանցիներինը՝ մոտ 20.000: Փորձագետները բացատրում են, որ հարձակվող կողմը միշտ բազմապատիկ զոհեր է տալիս, պաշտպանվողները՝ խելացի պաշտպանվելիս՝ նվազ, որ Ադրբեջանը բազմազգ է. թալիշները, թաթերը, լեզգիները, ցախուրները, քրդերը եւ այլք՝ չեն ուզում կռվել բնիկ հայերի դեմ եւ այլն: Չօգնեցին Ադրբեջանին ոչ թվական գերակշռությունը, ոչ նավթը, ոչ Բասայեւը, ոչ աղվանական մոջահեդները: Յայաստանի օգտին էր տեղանքի փայլուն իմացությունը, նախաձեռնողականությունը, ռելիեֆը, եւ իհարկե Յայրենիքի գիտակցությունը:

1994-ի մայիսի 12-ը, երբ հրադադար կնքվեց, որն հետո հարաբերականորեն զինադադարի վերածվեց, պատմաբանների եւ փորձագետների մի մասը գնահատեց որպես հաղթանակ, մյուսները թե՝ դա միայն Ղարաբաղյան ճակատամարտն ենք հաղթել, պատերազմը չի ավարտվել (Ալիեւ ավագին ու կրտսերին էլ էր դուր գալիս այս մեկնաբանությունը): Այդ հաղ-

թանակից հետո մասնակիորեն կրկնվեց այն պատմությունը, ինչ ունեինք Առաջին Հանրապետության տարիներին, երբ Սարդարապատի ճակատամարտում հաղթած բազմաթիվ զորականներ իշխանության մեջ փայ չունենալով կամ դժգոհ լինելով իրենց փայից, մաուզերիստների խմբերի վերածվելով, ասպատակում էին այն ամենը, ինչն հարմար էին համարում: Սա միայն մեզ չէ հատուկ. «բա մենք ենք կռվել, ինչու պիտի ուրիշը տիրի», մոտավորապես այս ներշնչանքն էր, որ քաղաքական հայտի վերածվեց 94-ի զինադադարից հետո, հետո այդ դժգոհներին միացան բազմաթիվ ուրիշներ, որոնց, ոչ ավել, ոչ պակաս «ասֆալտի փիդայի» էին կոչում: Շատերը սուսուփուս, մյուսները աղմուկով մտան իշխանություն եւ մինչեւ հիմա այնտեղ են, Հայաստանի ապագայի, մարդկանց, ազատությունների եւ հայտարարված ժողովրդավարության ուրույն ընկալմամբ, իսկ ավելի շատ՝ արմատական մերժմամբ: Դժբախտաբար այս մի շերտի մեջ ծանր է նստած այն կեղծ դիսկուրսը, թե ժողովրդավարությունն ազգային անվտանգության հիմնական ռիսկն է, իսկ Մարդու հիմնարար արեւմուտքի կողմից հստակ քարտեզագրված ականներ են երրորդ հանրապետության վերելքի ճամփին:

Տարիներ շարունակ մեր բանակը փակ եղավ հանրությունից եւ մնում է յոթը փակի տակ, որոշ շքերթների ժամանակ ենք տեսնում միայն: Երբ բանակի՝ հասարակական մատչելիության մասին ենք խոսում, ժողովրդավարությունը հոգու խորքում ատող իշխանավորներին ու հրամանատարներին թվում է, թե զորքերի դասավորության կամ զինամթերքի պաշարների մասին տեղեկություններն ենք պահանջում բացել, դնել Ադրբեջանի եւ Թուրքիայի առաջ: Բարձրաստիճան զինվորականներից ավելի խելացիներն ու խորամանկները, իհարկե հասկանում են, որ այդ չէ մի շարք հասարակական գործիչների եւ նախաձեռնությունների պահանջածը (այդ թվում «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնության անդամների), բայց իրենց ձեռնտու է նենգափոխել հանրային այդ խմբի պահանջը եւ ներկայացնել այն, որպես ազգային անվտանգության դեմ հատուկ մշակված դիտավորություն: Ովքե՞ր են ատամի մածուկ մատակարարում բանակին, մատակարարու՞մ են՝ որ, ի?նչ գնով, ովքե՞ր, ի՞նչ ընկերություններ են հաղթում սննդի մատակարարումների մրցույթներում, քանի՞ զինվոր է մահացել բանակում 1994-ի մայիսի 12-ից ի վեր,..., ..., օրենքով սահմանված գաղտնիք են այս տեղեկությունները:

Կարո?ղ են շահագրգիռ հասարակական գործիչներն ու կազմակերպությունների ներկայացուցիչները այցելել զորամասեր, առանձին զրույցներ ունենալ զինվորականների հետ: Կարող են, ... եթե սերտորեն համագործակցում են ու համաձայն են ՊՆ-ի հետ, իսկ այնպես՝ ոչ, «բանակը փակ տարածք է» պատճառաբանությամբ: Տարիներ շարունակ տեսնելով, թե ինչպես են խաղաղության պայմաններում ծնողները բանակից դիակներ ստանում, ինձ սկսել է հետաքրքրել, թե տեսնես ինչքան ենք զոհ տվել հանցագործ սպաների, կամ որոշ զորամասերում տիրող այլանդակ մթնոլորտի պատճառով, ներողություն, կարո՞ղ է հրեշավոր մի ծրագիր կա բանակը ներսից ուտելու, եւ արդարացնելու, թե՝ «սա էլ՝ կյանք է, քաղաքացիական կյանքում չէ?ն սպանվում, ինքնասպանություն չէ?ն գործում, վթարներ չե՞ն լինում, ինչ եք խառնվել իրար...»:

10-12 տարի է փորձում եմ հասկանալ զինվոր-զինվորականների այն թիվը, որ զոհաբերվել է ... առանց հաղթանակի: Այդ տեղեկությունները պաշտոնապես փակ են հանրության համար: Տարբեր տվյալներով, այդ թիվը (1994 մայիսի 12-ից մինչեւ 2012 դեկտեմբերի 31), 1500-3000 է, հասկանալի է, որ այսպիսի մոտավորությունը որեւէ լուրջ վերլուծության հիմք չի տալիս: Մեկ տարի շարունակ փորձեցինք Շիրակի մարզից բանակ գնացած՝ զորակոչված կամ պայմանագրային ծառայության անցած, ու սպանված կամ ինքնասպանություն գործած զինվոր-զինվորականների թիվը պարզել, համայնք առ համայնք, դպրոց առ դպրոց այցելելով

ու զրուցելով մարդկանց հետ, եղանք բոլոր սպանվածների տներում, ու անուն-ազգանուններով, դեպքերի հանգամանքներով պարզեցինք 90 դեպք, էլի 116 դեպքի մասին տեղեկություններ ունենք, որոնք առայժմ չենք կարողանում ստուգել, գաղթել են, հասցեներ չկան եւ այլն: 265.000 բնակչություն ունեցող մարզից 17,5 տարում՝ 90 հաստատված եւ փաստագրված դեպք: 3 միլիոնից կլինի մոտավորապես 1200, բայց նման մոտարկումներ անելու իրավունք չունենք, որովհետեւ տեղեկությունները չափազանց սուղ են: Այս դեպքերը միայն մեկական կյանքեր չեն, սրանք քայքայված կամ չկազմված ընտանիքներ են, չծնված երեխաներ են, սա բնակչության անկում է, սա արտագաղթ է, հիասթափություն, ողբ, գերեզմանաշինության միջոցով ՀՆԱ հարաբերական աճ եւ այլն: Ահա վերջին հինգ տարվա մեր բանակային մարդկային կորուստների վիճակագրությունը (2013թ. տվյալները լրացվել են հոդվածի հրապարակումից հետո՝ 2013-ի տարեվերջին).

| | Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի տվյալներով | ՀՀ եւ ԼՂՀ պաշտոնական տվյալներով | Այդ թվում հրադադարի ռեժիմի խախտման պատճառով |
|---|---|---|---|
| 2009 | 42 | 42 | 6 |
| 2010 | 54 | 54 | 11 |
| 2011 | 39 | 36 | 11 |
| 2012 | 49 | 49 | 12 |
| 2013 | 31 | 31 | 5 |
| Ընդամենը | **215** | **212** | **45** |

Բանակն, ինչպիսին որ է՝ մերն է: Պետության պահպանման չափ կարեւոր է բանակում այնպիսի փոփոխություններ իրականացնել, որ խաղաղ պայմաններում ոչ մի զինվոր չսպանվի կամ ինքնասպանություն գործի, չի կարելի ամեն անգամ ասել. «Դե՝ քրեական հանցագործություն է եղել, մեղավորներին կբացահայտենք, կպատժենք օրենքով եւ վերջ:» Ու այդպես շարունակ: Վերջին տարիներին, ՊՆ ղեկավարության շնորհիվ, թե տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպերից պարտադրված, նախարարությունն ահագին մեծ օպերատիվությամբ հրապարակում է մահվան դեպքերը: Վերջին տարիների (2009-2012թթ.) մահերի վիճակագրությունը՝ 42-54 դեպք/տարեկան, որոնցից 6-12-ն են սահմանային/ճակատային միջադեպերի պատճառով:

ՀՀ գերագույն գլխավոր հրամանատարին ուղղված բազմաթիվ բողոքներն ու հայտարարությունները, փաստորեն որեւէ արդյունք չեն տվել, այս տարվա (2013) 27 օրերի ընթացքում 4 զոհ ունենք: Մեկ այլ արդյունք տվել են, իհարկե, բանակի մի շարք զորամասերում տիրող եւ հատկապես մահերի ու սպանությունների կացությունը քննադատողներին սաղդաֆոններն սկսեցին կոչել «հայրենիք չունեցողներ», սկսեցին լրտեսության եւ սրիկայության անուղղակի մեղադրանքներ հղել այս մարդկանց հասցեին իրենց ձեռքի տակ եղած ԶԼՄ-ներով եւ բլբուլներով, փոխանակ խորամուխ լինեին՝ «0 մահ բանակում» ծրագիր մշակելու եւ իրականացնելու ուղղությամբ: Բազմիցս առաջարկել ենք մի քանի բարեփոխում, որոնց եւ այլ, գուցե՝ ավելի արժեքավոր գաղափարների, ներդրումը հանրագումարում կկարողանա արմատապես բարեփոխել բանակային կյանքը.-բանակը քաղաքական կյանքում օգտագործելու բացառումը՝ համապատասխան երաշխիքներով, բանակային եւ զորակոչային կոռուպցիայի վերացում՝ հօգուտ օրինական վճարումների, որոնցով հնարավոր կլինի մասնակիորեն անցնել պրոֆեսիոնալ բանակային համակարգի, ճակատագծին՝ միայն մասնագետ-պրոֆեսիոնալ զինվորականներ ունենալ, վերագնահատել բանակային՝ օրենքով սահմանված

գաղտնիքների ցանկը եւ հրապարակային դարձնել բոլոր այն տեղեկությունները՝ հանրային միջոցներից ծախսերի եւ գնումների մասին, որ չեն վնասի պաշտպանունակությանը, որոշակիորեն ազատականացնել զինվորական-հանրություն հաղորդակցությունը, որոշ հնարավորություն ստեղծել աղջիկների կամավոր զինծառայության համար, բանակն ազատել տարբեր հանցագործություններում այս կամ այն կերպ երեւացած զինվորականներից, եւ այլն: Անշուշտ դժվարին խնդիրներ են: Սակայն իշխանությունը ոչ ձեռնամուխ է լինում այս գաղափարների ուսումնասիրմանը, ոչ էլ մեկ այլ բան է անում դրությունը շտկելու համար: Իշխանությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ իր կարծիքով խնդիրն արմատական բարեփոխման կարիք չունի, եղած խնդիրները ընդամենը կետային լուծումներ են ուզում եւ ինքն այդպես էլ լուծում է, մոտավորապես, եթե չխոսենք դատարաններում բանակային սպանությունների՝ հանրության վստահությունը չվայելող քննությունների մասին: Իհարկե, չեն մոռանում հարկի-անհարկի շեշտել, որ տարածաշրջանի ամենամարտունակ բանակը մերն է, տպավորություն ունեմ, թե ոմանց թվում է, որ այդ հիշատակումներից մեր բանակի զորությունն աճում է…: Իսկ պատկերացնու՞մ եք, թե որքան մարտունակ կլինեինք, եթե վերոհիշյալ 1-2 գնդի չափ զորքը կորցրած չլինեինք:

Գուցե սխալվում եմ, բայց վերջին տարիներին Բանակի օրվա նշումները մի տեսակ էյֆորիկ, լաքած, փայլեցված տեսք ունեն, ծառայած ու չծառայած ջահելության խանդավառությունը, որ հաճախ սնուցվում է որոշ կուսակցությունների երիտասարդական թեւերի ինչ-ինչ նախաձեռնություններով, արտացոլվում է սոցիալական կայքերում, մի տեսակ չափազանցված է: Բանակի առօրյա լինելիքն ու պարտադիր զորությունը հատուկ նշանակության տոն չպիտի լինի, կարծում եմ, պետության այդ բաղադրիչը բոլորին հասկանալի այնպիսի հաշվենկատ անխուսափելիություն պիտի լինի, ինչպես, ասենք՝ թոքերն են մարդու օրգանիզմի համար, ո՞վ է հատուկ տոնական կենացներ ասում այն բանի համար, որ իր ուսերին գլուխ կա, կամ՝ տան դուռն ու լուսամուտները ամուր են, պաշտպանված: Բանակի գոյության կամ լինելիության թեմայի վրա կենտրոնանալը, կարծում եմ պատմական հանգամանքներով պայմանավորված՝ մեր վախերի դրսեւորումն է ինչ-որ տեղ, 21 տարի է՝ ունենք, եւ շնորհավոր սրտանց, բայց ժամանակն է, որ մենք էլ շատ այլ ժողովուրդների պես բանակի լինելիքը պարզ ընկալենք, չունենանք այդ վախերը, ընկալենք բանակը որպես նորմատիվ եւ կարեւոր իրականություն, առանց որի՝ պետություն պարզապես չի լինում, այն էլ՝ մեր նեղ տեղում: Կարիք չկա ուռճացնել բանակը զանազան անհարկի ածականներով եւ յուղալի ելույթներով:

Դրա փոխարեն, գերագույն գլխավոր հրամանատարը Եռաբլուրում իրեն մոտեցած սգավոր մի կնոջ դժգոհությունները լսելու սիրտուհավես չի ունեցել եւ ասել է. «…Եկել ես ստեղ, լաց ես լինում, մեր տոնը խանգարում ես, որ ի՞նչ անես…»: Լավ կլիներ սակայն, որ Եռաբլուրից հետո ինքն ու զինվորական բարձրաստիճանները ամբողջ օրն անցկացնեին զոհվածների եւ հերոսների տներն այցելելով՝ ինչքան, որ կհասցնեին: Գուցե իշխանության վերին էշելոններում իսկապես դժվարանում են հասկանալ, որ հանրության համար ամենազիլ Բանակի օրն այն օրը կլինի, երբ խաղաղության պայմաններում ոչ մի սպանված, ինքնասպանված կամ մահացած զինվորական չենք ունենա: Այլապես բարձր տրամադրություն չի ստացվում, ինչքան էլ ծափ տան:

Լեւոն Բարսեղյան

31 հունվար, 2013

## Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Անկախությունից ի վեր հայկական բանակը կարծես վերածվել է հանցագործությունների հոսքագծի, որտեղ «մշակման» ենթակա «հումքը» զինակոչիկների եւ զինծառայողների բնական՝ կյանքի իրավունքն է, առողջությունը, արժանապատվությունն ու, ինչու չէ՝ լռությունը կամ ճշմարտությունը թաքցնելը: Եվ այնպիսի տպավորություն է, որ այս «հոսքագծի» աշխատանքը հնարավոր չէ կանգնեցնել ոչ օրենքի փոփոխություններով, ոչ էլ դժբախտ դեպքերի մասին բարձրաձայնումներով, քանի որ իրավիճակն ունի հովանավորներ, որոնց այն ձեռնտու է:

Այդ հոսքագծի աշխատանքը կարող ենք պայմանականորեն բաժանել 3 կամ 4 փուլի (կախված նրանից, թե խախտումը որտեղից է սկսվում՝ զորակոչային բժշկական հանձնաժողովի՞ց, թե՞ միանգամից զորամասից), որոնցից յուրաքանչյուրն իր «պատասխանատուն» ունի. առաջին փուլ՝ զորակոչային հանձնաժողով, երկրորդ՝ զորամաս, երրորդ՝ քննչական մարմին, չորրորդ՝ դատական մարմին եւ (կամ) ՊՆ ղեկավարություն, գուցե՝ երկրի նախագահ:

Եթե հիվանդ զինակոչիկ է, նրա իրավունքի խախտումը սովորաբար սկսվում է զորակոչային բժշկական եւ ոչ բժշկական հանձնաժողովներից, որտեղ նրա առողջական խնդիրները անտեսվում կամ մեղմացվում են, որպեսզի զորամասում շարային ծառայության համար նրանով թիվ ապահովեն:

Հենց այս տրամաբանության մեջ էլ զորամասում սկսվում է հիվանդ զինվորի իրավունքի խախտման երկրորդ փուլը. իհարկե, այս փուլում նրանց են միանում նաեւ ծառայության համար պիտանի՝ առողջ զինվորները, ովքեր սակայն բուժօգնության բացակայության, ոչ պատշաճ բուժօգնության հետեւանքով կամ հանցավոր որոշակի հանգամանքների առկայության պայմաններում առողջությունն են կորցնում կամ մահանում: Այսինքն, զորամասի պատասխանատուների կամ նրանց թողտվությամբ՝ զորամասում եղանակ ստեղծող որոշ «նայողներ» քրեական միջավայր են ստեղծում՝ զինվորներին ներքաշելով «տղայական ռազբորկաների» մեջ կամ ինչ-ինչ շահադիտական նպատակներով ճնշելով առավել թույլերին… ու հանցագործությունը պատրաստ է: Հետո գործի են անցնում իրավապահները՝ ռազմական ոստիկանությունը, ՊՆ կայազորային քննիչներն ու զինդատախազությունը. նրանք միանգամից սկսում են ճշտել դեպքի կամ միջադեպի իրական պատկերն ու ականատեսների, վկաների շրջանակը: Հետո, սովորության համաձայն, նրանցից մի կողմ թողնելով զորամասի պատասխանատուներին եւ «նայողներին», շարքայիններին են տանում ռազմական ոստիկանություն, նրանցից «ընտրում» մեղադրյալի հարմար «թեկնածու», ով սոցիալական կամ այլ հանգամանքների պատճառով իրենցից պաշտպանվելու հնարավորություն չի ունենա, եւ սկսում նրանից եւ նրա դեմ համապատասխան ցուցմունքներ կորզել՝ ճնշումների ներքո: Իհարկե, եթե իրական հանցագործը մեծ տրամաչափի զինվորական պաշտոնյա է, կարող են նրա փոխարեն եւ «հանուն նրա» որպես մեղադրյալ «ընտրել» նաեւ ցածր սպայակազմից որեւէ մեկին, ով չի կիսում վերադաս զինվորականների բիրտ մեթոդները: Մնացածն արդեն հասկանալի է. անմեղ զինվորները կամ պայմանագրային զինծառայողները դատապարտվում են երկար տարիների ազատազրկման, իսկ որոշ զորամասերի հրամանատարները եւ նրանց «լիազորած» «հեղինակությունները» շարունակում են քրեականացնել բանակը եւ ներսից բարոյալքել ու խեղել թե՝ առողջ զինվորին, եւ թե՝ զինված ուժերը:

## Երբ առողջ զինվորին բանակում հոգեպես խեղում են



2011-ի օգոստոսին Ասկերանի զորամասից, խելագարության հասած վիճակում հոգեբուժարան էին տեղափոխել ժամկետային զինծառայող, 20-ամյա **Հովհաննես Վարդանյանին** (լուսանկարը «Չենք լռելու» քաղ.նախաձեռնության տեսագրությունից): «Չենք լռելու» երիտասարդական նախաձեռնությունը պարզել էր, որ օգոստոսի սկզբին Ասկերանում արդեն 14 ամիս ծառայող զինվոր Հ.Վարդանյանի հայրը՝ Վարդան Վարդանյանը հեռախոսազանգ էր ստացել որդու բանակային ընկերներից, ովքեր հայտնել էին, որ Հովհաննեսն արդեն 9 օր է՝ խելագարված վիճակում գտնվում է հոգեբուժարանում: Հոր պատմելով՝ մինչ այդ, զորամասից իրեն տեղեկացրել էին, որ որդին սպայի հետ վիճել է: Դրանից հետո՝ 17 օր որդին կապի մեջ չէր եղել, նրանից տեղեկություն չէին ունեցել: Հետո իմացել էին, որ հոգեբուժարանում է, որտեղից էլ վաղաժամ զորացրել էին ծառայությունից: Խելագարության հասած զինվորը սոցիալական ցանցում հայտնված տեսանյութում պատմում էր, որ «աֆիցեռները», որոնց մականունները կամ անունները նշում էր, ուզեցել են իրեն ծեծել եւ բռնաբարել..., եւ որ այդ իրավիճակը կարող է փոխել միայն երկրի նախագահը:

Հարկ է նշել, որ միայն համընդհանուր աղմուկից հետո էր քրգործ հարուցվել. ԶԼՄ-ներում Հովհաննեսի հոր՝ Վարդան Վարդանյանի՝ սպայի կողմից որդու նկատմամբ կիրառված բռնության վերաբերյալ հրապարակումների առթիվ ՀՀ զինդատախազ Գեւորգ Կոստանյանի ցուցումով հարուցվել էր քրգործ՝ ՀՀ քր. օրի 375-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանազանցությունը):

Հայտնի չէ՝ քրգործը մտել է դատարան, թե կարճվել՝ ինչ-որ հիմքեր նշելով, բայց եթե նույնիսկ դատարան էլ մտնի, ապա քիչ է հավանականությունը, որ իրական մեղավորները կպատժվեն, քանի որ իրականությունը կարող էր բացահայտվել առավելապես տուժող Հովհաննես Վարդանյանի ցուցմունքների հիման վրա, սակայն հաշվի առնելով նրա հոգեվիճակը, պետության հսկողության տակ գտնվող փորձագետները շատ հանգիստ կարող են եզրակացություն տալ՝ նրա ցուցմունքների անարժանահավատ լինելու մասին: Դատարանն էլ, սովորականի պես՝ դեմ չգնալով զինդատախազությանը, շատ հանգիստ կարող է որոշել, որ Հովհաննեսի ցուցմունքներն ապացուցողական ուժ չունեն: Իսկ եթե կարեւոր, առանցքային այլ վկա-զինծառայողներ էլ լինեն, ապա գործի անարդար ելքով շահագրգիռ անձինք կամ մարմինները նրանց կպահեն հսկողության կամ ճնշման տակ՝ իրենց հանցավոր հետագա գործունեությունն անարգել շարունակելու համար, ինչը սովորաբար լինում է: Ուստի, պատահական չէ, որ Ասկերանի այդ զորամասը հանցագործությունների առումով աչքի ընկնողներից է, որտեղ զինվորների իրավունքների խախտման «մշակված» եւ անարգել գործող մեխանիզմներ կան:

## Փոխված օրենքը չի փրկի «անուղղելի ինքնախեղվողին»

Քիչ չեն նաեւ դեպքերը, երբ առողջ զինվորը զորամաս մտնելուց կամ որոշ ժամանակ ծառայելուց հետո, սկսում է առողջությանն ու կյանքին սպառնացող ինքնավնասումներ անել. Վայոց ձորի զորամասերից մեկի զինծառայող **Նարեկ Ն.Խաչատրյանին** կարելի է «անուղղելի ինքնախեղվող» համարել. ժամկետային զինծառայող, շարքային Ն.Խաչատրյանը մեղադրվում է զինծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով հոգեկան հիվանդության մի քանի սիմուլյացիաներ անելու մեջ:

Սկզբում՝ 2011թ. դեկտեմբերի 23-ին, նշված զորամասում ծառայության նշանակվելուց հետո՝ հայտարարել է, թե իբր գիշերներն աչքերին տեսիլքներ են երեւում, որի պատճառով ուղարկվել է գնդի բուժկետ՝ բժիշկների դինամիկ հսկողության տակ պահելու նպատակով: Այնտեղ գտնվելու ժամանակ, երկու օր անց՝ դեկտեմբերի 25-ին, ժամը 04-ի սահմաններում բուժկետում ածելիով իր ձախ նախաբազկի շրջանին պատճառել է կտրված վերքերի ձեւով առողջությունը կարճատեւ քայքայող թեթեւ վնաս: Այնտեղից տեղափոխվել է ՀՀ ՊՆ մեկ այլ զորամասի հոգեբուժական բաժանմունք, որտեղ համապատասխան բուժումներ է ստացել, ապա ռազմաբժշկական փորձաքննություն անցել, որի արդյունքում նրա մոտ հոգեկան հիվանդություն չի հայտնաբերվել: 2012-ի փետրվարի 10-ին, նույն՝ Վայոց Ձորի զորամաս տեղափոխվելու ճանապարհին, երբ ավտոմեքենան կայանվել է ՀՀ ՊՆ ԿԿ զինհոսպիտալի տարածքում, Նարեկը, չցանկանալով վերադառնալ զորամաս եւ շարունակել ծառայությունը, ինքնակամ թողել է հոսպիտալի տարածքը, հաջորդ օրը ժամը 03:50-ին մեծ քանակությամբ դեղահաբեր օգտագործած վիճակում ինքնակամ ներկայացել է ՊՆ ՌՈ, այնտեղից անմիջապես ուղարկվել ՊՆ ԿԿ զինհոսպիտալի վերակենդանացման բաժանմունք, ապա «Արմենիա» ՀԲԿ-ի սուր թունավորումների բաժանմունք, իսկ 14.02.2012թ. կրկին տեղափոխվելով ԵԿՁՀ-ի հոգեբուժական բաժանմունք՝ 06.03.2012թ. ներկայացվել է ԿՌԲՀ-ի նիստին եւ նրա մոտ ախտորոշվել է «շինծու-շանտաժային վարք»:

Բացի այդ, 13.03.2012թ. արդեն գտնվելով ՀՀ ՊՆ ՌՈ կարգապահական մեկուսարանում հայտարարել է, թե իբր ապակի է կուլ տվել: Արարատի եւ Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանը Ն.Խաչատրյանին դատապարտել է 3 տարի 6 ամիս ազատազրկման՝ անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի եղանակով զինծառայությունից խուսափելու համար (քր. օրի 363 հոդված): Դատավճիռը դեռ բողոքարկվում է երկրորդ ատյանում՝ արարքին ճիշտ քրեաիրավական որակում եւ համաչափ պատիժ տալու հիմքով:

Բայց այս գործում ուշագրավն այն է, թե ինչու է զինվորն ամեն գնով խուսափել այդ զորամաս վերադառնալուց: Նախկին եւ ներկա զինծառայողների շրջանում արված մեր հարցումների ժամանակ զրուցակիցներս նշում էին, որ զինվորները սովորաբար չեն ցանկանում ծառայել այն զորամասերում, որտեղ հրամանատարները խիստ են կարգուկանոնի նկատմամբ:

«Ինձ որ, ասենք, հրամանատարը խիստ տոնով ասում էր՝ արագ էս ինչ բանն արա, ես չէի անում, բայց որ խաթրով ասում էր օրինակ՝ «տղերք ջան, եկեք էսքան տեղը մաքրենք», ասում էի՝ քո ցավն էլ տանեմ..., մաքրենք, ու զորամասը պլպլացնում էինք»,- մեզ հետ զրույցում նշեց արդեն նախկին զինծառայողներից մեկը: Բայց երբ նրանից իմացա իրենց զորամասի համարը, չհիշեցի հանցագործության գոնե մեկ դեպք, որը կապված լիներ այդ զորամասի հետ:

Այսինքն, անկախ նրանից, թե ինչ ձեւով են զինվորները կատարել եւ կատարում իրենց պարտականությունները՝ խիստ մեթոդով, թե «խաթրով», կարելի է ենթադրել, որ այդտեղ զինվորի կյանքի եւ առողջության իրավունքները չեն խախտվել՝ ինչպես ինքնախեղվող զինվորի ծառայած զորամասում, որտեղ հանցագործության բազմաթիվ, այդ թվում՝ ծանր դեպքեր են արձանագրվել: Համենայնդեպս, եթե նույնիսկ զորամասի պատասխանատուների խստություն կա այնտեղ, ուրեմն դա ոչ թե կարգապահական խստություն է, այլ՝ շահադիտական կամ սեփական գերակայությունն ընդգծելու:

Շարունակելով թեման՝ այս կոնկրետ իրավիճակին անդրադառնանք նաեւ օրենսդրական վերջին փոփոխությունների տեսանկյունից: Ասենք թե՝ Նարեկ Խաչատրյանը դատվեց, իսկ հետո՞, ինչ է լինելու նրա հետ. պատժաժամկետը կրելուց հետո կրկին ուղարկելու են նույն կամ այլ զորամաս՝ ծառայությունը շարունակելու եւ նույն պատմության շրջապտույտի մեջ հայտնվելո՞ւ:

Հիշեցնենք, որ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում 2012-ի մարտին կատարված փոփոխությունների եւ լրացումների արդյունքում այսպիսի վերաշարադրում եղավ. օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասը այսպիսի բովանդակություն ստացավ. «Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատազրկման դատապարտված անձինք դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա հանվում են զորամասի անձնակազմի ցուցակներից եւ հաշվառվում են իրենց զորակոչն իրականացրած զինվորական կոմիսարիատի զորակոչային բաժնում, իսկ ազատազրկման վայրում պատժի կրումից ազատվելուց հետո հայտարարված զորակոչի ժամանակ ենթակա են զորակոչման պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը շարունակելու, բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի (Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն), կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատազրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար եւ ազատազրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս...)»:

Այսինքն, փոփոխված օրենքով զինվորին կարծես դրդում են՝ ավելի ծանր հանցագործության գնալ եւ ավելի երկարաժամկետ պատիժ ստանալ, որպեսզի այլեւս բանակ չվերադառնա, կամ՝ համակերպվի իրենց բռնությունների, նվաստացումների (որոնք կարող են նաեւ սեռական բնույթի լինել) հետ եւ մի կերպ «քարշ տա» ծառայության այդ երկու տարին: Եվ չի բացառվում, որ անընդունելի այդ երկու տարբերակներից խուսափելու համար, որոշ զորամասերի զինվորները հաճախ ընտրում են երրորդ՝ ինքնավնասման ճանապարհը:

## Աստված հեռու պահի «նայողներից», քննիչներից, դատախազներից ու դատավորներից

Գուցե Նարեկն ինքնավնասումներն արել է, որպեսզի չհայտնվի ավելի վատ՝ պայմանագրային զինծառայող, լեյտենանտ Արտակ Նազարյանի վիճակում. բարձրագույն կրթությամբ Արտակը 2009-ի դեկտեմբերին ծառայության անցնելուց հետո հասցրել էր զինվորներին սիրել եղբոր պես եւ հարազատներին ասել՝ «ազիզ տղերք են...»: Բայց երեւի նրա չերմ՝ սպային վայել այդ վերաբերմունքը դուր չէր եկել հրամանատարական կազմի որոշ ներկայացուցիչների. ծառայության անցնելուց 7 ամիս անց նրա դին գտել

էին խոշտանգված վիճակում:



Ըստ պաշտոնական վարկածի՝ **Արտակ Նազարյանն** իրեն ամրակցված ինքնաձիգով ինքնասպան է եղել 2010թ. հուլիսի 27-ին՝ ծառայության վայրում, իսկ հարազատների պնդմամբ՝ սպանվել է: Դեպքը տեղի է ունեցել Տավուշի մարզի Չինարի գյուղից ոչ հեռու տեղակայված զորամասի մարտական հենակետերից մեկում:

Քրգործը դատարան է մտել ինքնասպանության դրդելու հիմքով, իսկ որպես մեղադրյալներ ներգրավվել են Ա.Նազարյանի հինգ համածառայակիցները՝ նրա գումարտակի ԱՀՏԱ գծով տեղակալ, կապիտան Հակոբ Մանուկյանը, հարեւան հենակետի ավագ, լեյտենանտ Վահագն Հայրապետյանը, Ա.Նազարյանի դասակի երեք շարքայինները՝ Մխիթար Մխիթարյանը, Ադիբեկ Հովհաննիսյանը եւ Հարութիկ Կիրակոսյանը:

Որքանո՞վ է ապացուցված նրանց մեղքը, եւ որքանո?վ է ճիշտ որակված հանցագործությունը՝ եթե հաշվի առնենք նախաքննական մարմնի թույլ տրված մի շարք կարեւոր սխալներ, բաց թողնված հանգամանքներ, որոնք ժողովրդավար երկրում կարող են հանցագործություն դիտվել եւ պաշտոնյային ազատազրկելու հիմք հանդիսանալ:

Դատաբժշկական փորձաքննությամբ, 54 վնասվածք է հայտնաբերվել Արտակ Նազարյանի մարմնի վրա: Սակայն նախաքննական մարմինը քննչական ոչ մի գործողություն չի կատարել՝ պարզելու, թե մահից անմիջապես առաջ, 6 ժամվա ընթացքում առաջացած վնասվածքներն ինչպե՞ս, ո՞ւմ կողմից են հասցվել: Քննությունը կատարվել է միայն մահից 2 եւ ավելի օրեր առաջ տեղի ունեցած վիճաբանությունների մասով:

Որպեսզի աղմուկ հանած հանրությանը եւ տուժողի հարազատներին համոզեն, որ դա ինքնասպանություն է, դեպքից 12 օր անց, հանկարծ Արտակի գումարտակի հրամանատար Միշա Գաբրիելյանը (ով Արտակի հետ կոնֆլիկտ է ունեցել) քննիչներին է հանձնել Արտակի ծոցատետրը՝ պատռված ու որոշ գրառումներ ոչնչացված վիճակում: Փոխարենը այնտեղ է հայտնվել Արտակի «ձեռագրով» գրված «ինքնասպանության» մասին մի գրություն՝ տառասխալով, ինչը, ըստ հարազատների՝ բարձրագույն կրթություն ունեցող Արտակը չէր կարող անել:

Մ.Գաբրիելյանն այսպես է բացատրել ծոցատետրի՝ իր մոտ հայտնվելու հանգամանքը. դեպքի վայրում մեղադրյալներից Հարութիկ Կիրակոսյանն է հանել Արտակի ծոցագրպանից եւ տվել իրեն, որ պահի:

Այս ամենից զատ, կասկածի տեղիք է տալիս նաեւ այն, թե ինչպես է Արտակը ինքնասպան եղել իր ինքնաձիգով, եթե դրա միջի բոլոր փամփուշտները տեղում են եղել: Ինչպես է «ինքնասպան եղած» Արտակը «մաքրել» իր ինքնաձիգի վրա եղած մատնահետքերը, ինչպես է խրամատում ընկած նրա դիակը հայտնվել բարձունքում, ինչու են հուլիսի 26-ին կատարված դեպքը ներկայացրել 27-ին... Այս գործով ոչ օբյեկտիվ քննության մասին վկայող փաստերն այնքան շատ են, որ տուժողի իրավահաջորդ Արտակ Նազարյանի մայրը՝ Հասմիկ Հովհաննիսյանը եւ նրա ներկայացուցիչներ, փաստաբաններ Մուշեղ Շուշանյանը, Սեդա Սաֆարյանը եւ իրավապաշտպան Ռուբեն Մարտիրոսյանը

պնդում են, որ նախաքննությունը կատարվել է հանցավոր թերություններով՝ ապացույցների ոչնչացմամբ եւ կեղծմամբ. այդ ամենի համար նրանք դատաքննության ընթացքում պահանջել են ՀՀ գլխավոր դատախազից՝ քրեական պատասխանատվության ենթարկել քննիչ Լեւոն Պետրոսյանին, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ, Ա.Նազարյանի գործը քննող դատավոր Սամվել Մարդանյանին, ով մերժել է դատարանում սուտ ցուցմունք տալու հիմքով դատաբժիշկ Վիգեն Ադամյանի նկատմամբ քրգործ հարուցելու՝ իրենց միջնորդությունը: Վ.Ադամյանն ասել էր, որ իր տված դատաբժշկական եզրակացության մի մասը վրիպակ է:

Այս ամենից պաշտպանական կողմի որոշ ներկայացուցիչներ, ինչպես նաեւ տուժող կողմը հայտարարել են, որ փաստորեն դատարան է ուղարկվել չբացահայտված քրեական գործ, որտեղ նախաքննությունը չի պարզել, թե Արտակի մահից առաջ՝ վերջին 6 ժամվա ընթացքում ի?նչ է տեղի ունեցել եւ ինչի?ց են առաջացել նրա մարմնական վնասվածքները: Ուստի տուժող կողմի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը անցյալ տարեվերջին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ պահանջեց՝ ազատ արձակել ամբաստանյալներին:

Այսինքն, զինվորի իրավունքների խախտման որ տեսանկյունից էլ փորձենք մոտենալ խնդրին՝ առողջության, կյանքի, պատվի եւ արժանապատվության, շարային եւ ոչ շարային տեսակի ծառայության, գրեթե միշտ բախվում ենք նույն իրավիճակին. որոշ զորամասերում այդ բոլոր իրավունքները դնում են մի կողմ (նույնիսկ եթե ձեւականորեն ստուգման են ուղարկում)՝ հետեւյալ ձեւակերպումներով՝ «դու առողջ ես, սաչկավատ ես անում» կամ «այստեղ հրամանատարը ես եմ, ինչ ասեմ, այդպես էլ պետք է անես», իսկ այդ ամենի համար միջավայր ստեղծողները վերոնշյալ չորս փուլերի պատասխանատուներն են՝ զորակոչային հանձնաժողով, զորամաս, նախաքննական մարմին եւ դատարան:

### Երբ զինվորին հիվանդացնում, անտեսում եւ «սպանում են»



Ժամկետային զինծառայող, ջրծաղիկից մահացած **Հայկ Խաչատրյանի** (լուսանկարը Aravot.am-ից) դեպքը ակնառու օրինակներից է, որը ստիպեց ՀՔԱՎԳ իրավապաշտպաններին, լրագրողներին մեծացնել հասարակական ուշադրությունն ու ճնշումը իշխանության, ԶՈւ-երի պատասխանատուների նկատմամբ՝ կոչ անելով դադարեցնել մարդու իրավունքների խախտումները՝ զինծառայողների նկատմամբ: Հիշեցնենք, որ առողջ վիճակով բանակ զորակոչված Հայկ Խաչատրյանը մահացել էր 2011թ. դեկտեմբերի 30-ին «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցում՝ ջրծաղիկ հիվանդությունից: Հայկի հոր՝ Մովսես Խաչատրյանի հավաստմամբ, ինչպես նաեւ դատաքննության նյութերից երեւում է, որ զինծառայողի մահվան պատճառը եղել է ոչ պատշաճ բուժօգնությունը, ավելին՝ հիվանդության ճակատագրական փուլում դրանից ընդհանրապես զրկելը: Իսկ մեղավորությունը կարծես թե Կենտրոնա-

կան կլինիկական զինվորական հոսպիտալինն (ԿԿԶՀ) է: Անցյալ տարեվերջին դատաքննում հարցաքննված վկաների ցուցմունքներից պարզ դարձավ, որ մահվան նախորդ օրը Հայկին հետազոտած ինֆեկցիոնիստը ասել է, որ Հայկին պետք է անհապաղ տեղափոխել «Նորքի» ինֆեկցիոն հիվանդանոց, նույնիսկ տեղափոխման էպիկրիզն են լրացրել, սակայն հոսպիտալում թույլ չեն տվել տեղափոխել. ԿԿԶՀ-ի վիրաբուժական բաժանմունքի բժիշկ, գործով վկա Սեւակ Շահբազյանը դատարանում ասաց, որ իրենց բաժանմունքը թույլ չի տվել Հայկին տեղափոխել ինֆեկցիոն հիվանդանոց, քանի որ հիվանդը գանգատվել է որովայնի շրջանում սուր էպիգաստրիալ ցավերից, եւ վիրաբույժները սուր վիրաբուժական պաթոլոգիա են կասկածել եւ վիրաբուժական բաժանմունքի վարիչ Վահան Գեւորգյանի հանձնարարությամբ Հայկը 23 ժամ թողնվել է Սեւակ Շահբազյանի հսկողության տակ՝ հետազոտման նպատակով. ըստ Ս.Շահբազյանի՝ ինքը այդ ընթացքում 5 անգամ հետազոտել է հիվանդին (մինչդեռ այդ մասին վկայող որեւէ գրավոր ապացույց, գրառում չկա գրանցամատյանում): Դատարանի տված հարցերին, թե այդ հետազոտությունների արդյունքում ի?նչ եզրակացություն են տվել հիվանդի վիճակի վերաբերյալ եւ ո?րն է եղել վիրաբույժների այդ 23 ժամվա օգտակար գործողության գործակիցը, Ս.Շահբազյանը պատասխանեց. համոզվել են, որ վիրահատության կարիք չկա, իսկ օգուտն այն է եղել, որ անտեղի չվիրահատեն: Այս վկայի ժամեր տեւած հարցաքննությունից այդպես էլ չհնչեց այն համոզիչ պատճառը, պատասխանը, թե ինչու վիրաբույժները լրջորեն չեն խորհրդակցել ինֆեկցիոն հիվանդանոց տեղափոխելու շտապ անհրաժեշտություն տեսած համաճարակաբանի հետ, որպեսզի կարողանան փրկել զինվորի կյանքը: Եւ անիմաստ կորցրած 23 ժամը ճակատագրական է դարձել Հայկի համար:

Հիշեցնենք, որ դատաքննությունը դեռ շարունակվում է, եւ չնայած մեղքը կարծես թե վիրաբուժական բաժանմունքինն է, սակայն սույն գործով մեղադրվում է ԿԿԶ հոսպիտալի նյարդաբանական բաժանմունքի պետ Մինաս Մկրտչյանը, ինչպես նաեւ հոսպիտալի պետ (արդեն նախկին) Միքայել Միքայելյանը՝ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքի համար (քր. օրի 376 հոդվածի 1-ին մաս):

Չի բացառվում, որ Հ.Խաչատրյանի մահվան հետ քիչ կապ ունեցող կամ գուցե լիովին մեղավոր այս տրամաչափի անձանց որպես մեղադրյալներ ներգրավելը պարզապես փետրվարին կայանալիք նախագահական ընտրություններից առաջ կազմակերպված «PR» է. հիմա ցույց կտան, թե զինվորի մահվան համար ոչ մի պաշտոնյա «անպատիժ չի մնում», սակայն ընտրություններից հետո նրանց կարող են արդարացնել՝ մեղքն ապացուցված չլինելու հիմքով, կամ պատժել թեթեւ պատժով ու, ասենք, պայմանականով ազատել:

Համենայնդեպս, 3 դատական նիստ անընդմեջ հետաձգվում է ամբաստանյալներից մեկի եւ պաշտպանի բացակայությունների պատճառով: Իհարկե մենք դեռ կպասենք դատաքննության ավարտին՝ հասկանալու՝ մեր կանխատեսումը ճիշտ էր, թե ոչ, եւ ով է ի վերջո մեղավոր առողջ զինվորին մահվան դուռը հասցնելու համար:

Բժշկական պատշաճ բուժօգնություն ցույց չտալու հետեւանքով մահվան վերջին դեպքերից մեկն էլ 1994թ-ին ծնված նորակոչիկ **Նորայր Ն.Սահակյանի** հետ կատարվածն է. 2012-ի դեկտեմբերի 22-ին պատվաստում ստանալուց 2-3 ժամ հետո, զինվորական հավաքակայանում բժիշկները տեսել են, որ Նորայրը 38 աստիճան ջերմություն ունի, ջերմիջեցնող հաբ են տվել, բայց երկրորդ անգամ է ջերմությունը բարձրացել: Նորից է տղան դիմել, սակայն Նորայրին բարձր ջերմությամբ տարել են Ղարաբաղ, եւ այդպես



էլ որեւէ օգնություն ցույց չեն տվել՝ ստախոս համարելով: Դեկտեմբերի 23-ին՝ առավոտյան նա հոսպիտալում մահացել է: Նորայրի մայրը «Առաջին լրատվականի» հետ զրույցում պատմել էր. «Ղարաբաղ տանելու ճանապարհին մեքենայի ակը թողել է, երեխաներին չորս ժամ իջեցրել են, հետո նոր ավտոներ են բերել Ղարաբաղից՝ տեղափոխելու համար: Հինգ հոսպիտալի կողքով են անցել՝ Գորիս կամ Սիսիան չեն տարել երեխային, ոչ մի օգնություն չեն ցույց տվել մինչեւ Ղարաբաղ»:

Սա արդեն խոսում է ՊՆ ղեկավարության եւ նախարարի ենթակայությունից հանված ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովի «հանցավոր անփութության» եւ անպատասխանատվության մասին. կադրերի հարցով զբաղվող այս պաշտոնյան չի կարողանում կամ չի ուզում իր տեղակալների միջոցով ճիշտ եւ օրինական կարգով կազմակերպել ամբողջ գործընթացը՝ զորակոչից մինչեւ զորացրում. նորմալ տրամաբանություն ունեցող պաշտոնյան առնվազն պետք է հասկանար, որ հատկապես ձմռանը նորակոչիկներին 100-ավոր կիլոմետրեր տեղափոխող մեքենաները պետք է լինեն տեխնիկապես սարքին վիճակում եւ համապատասխան ավտոպահեստամասերով համալրված, որպեսզի մի անվի պատճառով ձմռան սառը ցրտին նորակոչիկը կամ զինվորը 4 ժամ չմնա ճանապարհներին: Իսկ եթե այդ ավտոպահեստամասերը չկան, նշանակում է՝ գլխավոր շտաբի պետի իմացությամբ պետբյուջեի միջոցներից հատկացված հսկայական միջոցները, որոնք պետք է ուղղվեն ԶՈՒ-երի նյութական բազան համալրելուն, ուղղակի թալանվում են ոմանց կողմից՝ պատճառ դառնալով առողջ զինվորների մահվան: Սա արդեն ոչ միայն ՊՆ բուժծառայության օղակի, այլ նաեւ նյութական օղակի պատասխանատուների անգործության հետեւանք է, որը կոռուպցիայի լուրջ կասկածներ է առաջացնում՝ մանավանդ, որ շատ են լինում զինվորական ավտոմեքենաների ավտովթարների եւ մահվան ելքով դեպքերը: Սա «հանցավոր անփութության հոսքագծի» 4-րդ փուլի պատասխանատուների մեղքն է:

Ի դեպ, անցյալ տարվա երկրորդ կեսին, զբաղեցրած պաշտոններից ազատվեցին ԳՇ պետի երկու տեղակալները, ովքեր պատասխանատու էին զորակոչի եւ ՊՆ-ի նյութական բազայի համար, սակայն իրավիճակը կարծես չփոխվեց. ոչ զորամասերի հանցագործություններն են նվազում, ոչ էլ դժբախտ դեպքերը: Գուցե խնդիրը Յուրի Խաչատուրովի մեծ ախորժակի? մեջ է, ինչի վրա աչք է փակում նախագահ Սերժ Սարգսյանը եւ պաշտոնից չի ազատում նրան՝ նույնիսկ այսքան դեպքերից հետո...

Սույն հոդվածը ֆինանսավորվել է ԱՄՆ պետդեպարտամենտի դրամաշնորհի շրջանակներում: Սույն հոդվածի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են եւ հնարավոր է, որ չհամապատասխանեն ԱՄՆ պետդեպարտամենտի տեսակետներին:

Հոդվածը պատրաստվել է Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների շրջանակներում, որն իրականացվում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից:

Էլմիրա Մարտիրոսյան

hcav.am

# Բանակի մասին գեղեցիկ երգե՞ր, թե՞ հզոր բանակ

30 հունվարի, 2013

«Ես՝ Պողոս Պողոսյանս, ծառայության անցնելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, հանդիսավոր երդվում եմ՝ անձնվիրաբար ծառայել հայրենիքիս՝ Հայաստանի Հանրապետությանը, եւ հանուն նրա չխնայել կյանքս ...»:

Այս խոսքերով է սկսվում յուրաքանչյուր զինվորի երդման արարողությունը, սրանք են բանակ մտնելու առաջին քայլերն ապահովող բառերը: Ամեն մի զինվորի հետ մեր բանակն ավելի է ուժեղանում, հզորանում, եւ կարծես թե պաշտպանված լինելու գաղափարը ավելի է ամրապնդվում մեր բոլորի մեջ:

Հայկական բանակ. «Տղաս ծառայում է հայոց բանակում, եղբայրս զինվոր է, թոռնիկս պաշտպանում է մեր երկիրը»: Ահա սրանք են հպարտության այն կոչերը, որ պիտի յուրաքանչյուր զինվորի հարազատ զգա իր հոգում եւ բարձրաձայնի, բայց, ավաղ, միշտ չէ, որ այս ամենն իրականություն է, ամեն ինչ փոխվել է. չկա առաջվա այն սրտատրոփ զգացումը, չկա այն գոհունակության զգացումը, երբ մեր բանակում մեր հարազատն է, որովհետեւ մեր բանակը արդեն ապահովություն չներշնչող մի օղակ է դարձել: Անցյալում մեր տատիկները տղա թոռներին ուրիշ մոտեցում էին ցուցաբերում, ասում էին, որ տղաները պիտի միս, մեղր շատ ուտեն, չէ՞ որ նրանք ապագա զինվորներ են: Իսկ հիմա տղա զավակի 18 տարեկանը լրանալուն պես մտահոգություն է առաջանում՝ պիտի զինակոչվի:

2012թ. հունվար ամսին հայկական բանակում զոհերի թիվը մեծանում էր, եւ ամեն մի նոր դեպք լսելիս՝ բոլորն էին սարսուռ ապրում: Ապրել խաղաղ երկրում, չզգալ պատերազմի դաժան ձայները, բանակ ճանապարհել առողջ, կայտառ, ուժեղ երիտասարդների, եւ, այնուամենայնիվ, չսպասել նրանց վերադարձին, ունենալ զոհեր, սա է մեր երկիրը, այն երկիրը, որտեղ ապրում ենք մենք եւ պիտի ապրեն մեր զավակները, ահա սա է այն ապահով ու անկախ երկիրը, որի ներսում «ուտում» են իրենց զինվորներին: Ո?րն է այս ամենի բացատրությունը:

Մահացության դեպքերը շատ տարբեր չեն՝ մեկի մոտ սրտի կաթված, մեկի մոտ հոգեկանի շեղում, մյուսի մոտ էլ ջրծաղիկ կամ կարմրուկ: Այստեղ մոտեցումները տարբեր կարող են լինել՝ կամ զինվորին զինծառայության տանելուց առաջ առողջականի զննման թերացում կա, կամ էլ երիտասարդ տղաները բանակային կյանքում հանդիպում են «հատուկ» վերաբերմունքի: Ի՞նչը կարող է զինվորին ինքնասպանության մղել, ի՞նչը կարող է ստիպել կրակել ընկերոջը, ի՞նչը կարող է հանգեցնել նրան, որ զինվորը ջրծաղիկից մահանա: Մեկ բառով բնորոշում տալ այս ամենին հնարավոր չէ, բայց «անփութություն», «անտարբերություն», «տգիտություն», «գազանություն» եւ նմանատիպ բառերի հոմանիշների ցանկից խուսափելն անկարելի է:

Մայրը, ով իր զինվորին ուղարկում է բանակ, այնքան էլ մտահոգ չէ, քանի որ պատերազմական ժամանակաշրջանում չենք, այնինչ՝ մեր երկրում պատերազմը մեր

մեջ է, մեր հոգում: 2013թ. հունվար ամիսն էլ ետ չմնաց նախորդից, եւ փոխանակ նոր հաջողություններ, նոր ձեռքբերումներ ունենանք, նորից ականատես ենք լինում կորուստների: Այս ամիսն էլ զոհերով սկսեցինք. Արթուր Գեւորգյան, Արմենակ Մանուչարի Մկրտչյան, Արտյոմ Գագիկի Յակոբյան, Արտակ Գրիգորի Գալստյան: Մեկ ամսվա մեջ ունենալ 4 զոհ, ու բանակի տոնը նշել մեծ շուքով, ահա սա է մեր երկիրը եւ մեր բանակը:

Ո?ւմ են պետք այդ ամպագորգոռ խոսքերը, ո?ւմ են պետք բանակը գովերգող երգերը, ո՞ւմ աչքերն են ուզում փակել. զինվորի մո՞ր, հա՞, ով արդեն իր զինվորին սպանելու ցավից «հագեցել» է, ով ամեն անգամ պիտի նայի իր տղայի՝ իր զինվորի նկարին, ու շարունակի ապրել, ո՞ւմ են պետք հայկական բանակի, իբր թե, հաջողությունները, եթե խրված ենք համատարած ցեխի մեջ: Մեղադրում, պայքարում ենք մեր թշնամու դեմ, որ խաղաղ ապրենք, որ ձգտենք համերաշխության, սակայն մոռանում ենք, որ «ձուկը գլխից է հոտած»: Բազմաթիվ են դեպքերը, իսկ բացատրությունը մեկն է՝ անուշադրություն ու անտարբերություն:

Յունվարի 28-ին՝ հայոց ազգային բանակի կազմավորման օրը, նորից լսեցինք գովեստի խոսքեր, մեր պաշտպանության նախարարությունը չի հոգնել ամեն ինչ կատարյալ ու անբիծ ներկայացնելուց: Ամբողջ օրը խոսեցին հաջողությունների, բանակում տիրող մաքրության, ուշադրության, հոգատարության մասին եւ միայն մի քանի րոպե հատկացրեցին զոհերի թվին, եւ չգիտես ինչու, էլի «խելքին մոտիկ» բացատրություն չեն տալիս, չնայած՝ ինչպես տան, եթե չունեն, չէ՞ որ նրանք երբեւէ չեն էլ փորձել երկար մտածել, լուծում փնտրել, դրա փոխարեն մեծ գումարներ կհատկացնեն մեր «շնորհաշատ» երգիչներին, եւ հայկական բանակի մասին գեղեցիկ երգեր կպատվիրեն: Այսպես են ուզում ժողովրդին սովորեցնել հարգել մեր բանակը, երեխաների մեջ զինվոր դառնալու ցանկություն սերմանել: Այո~, իհարկե, ցավով կխոսեն նաեւ թերացումների մասին, սակայն սա թերացում չէ, սա, թերեւս, մարդկանց համախմբված աշխատանք է, սա ձախողում չէ, այլ՝ լիակատար լկտիություն:

Լուսինե Ավագյան

01 փետրվար, 2013

# Արթուր Սաքունց. «Բանակում գործում է ժամացույցի նման աշխատող կոռուպցիոն մեխանիզմ»

**Հարցազրույց Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար, իրավապաշտպան Արթուր Սաքունցի հետ**



**-Պարոն Սաքունց, ինչպե՞ս եք գնահատում հայկական բանակի վիճակը 2012 թվականին:**

-Մեր զինված ուժերի վիճակը մտահոգիչ է, հատկապես մարդու իրավունքների իրրավիճակի առումով: Պատճառներից մեկն այն է, որ մահացությունները բանակում չեն նվազում: Զինված ուժերում անպատժելիություն կա եւ դրա դեմն առնելու, բողոքներ ներկայացնելու եւ արդյունքներ ստանալու հնարավորությունները բացակայում են: Կոռուպցիայի շատ տարածվածությունը եւս մտահոգիչ է՝ զինվորների սննդի, հագուստի, վառելիքի ծախսերի վերաբերյալ որեւէ վերահսկողության մեխանիզմ չկա: Բանակում անվերահսկելիության աստիճանը շատ մեծ է: Մեծ ռեսուրսներ են տրվում ռազմական բնագավառին եւ այդ ռեսուրսներից փախցնելը, թռցնելը ուղղակի շատ գայթակղիչ է հրամանատարների, այլ պաշտոնատար անձանց համար: Ընտրությունների համար բանակը լավ ռեսուրս է քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար: Զինծառայողների ընտրական ցուցակները գաղտնի են պահվում: Նրանք իրենց հրամանատարների վերիսկողության տակ են գտնվում, եւ այդ հրամանատարներն են ասում, թե ում է ընտրելու զինվորը:

**-2012 թվականին հայկական զինված ուժերում, ըստ Ձեր տվյալների, որքա՞ն է կազմել մահացությունների թիվը:**

-Ընդհանուր մահացությունների թիվը հայկական բանակում 2012 թվականին կազմել է 48 դեպք, նախորդ տարի այդ ցուցանիշը 38 էր: Նախաքննությունը կամ քննությունը, որը կատարվում է մահվան դեպքերի հետ կապված՝ իրական հանգամանքները պարզելու համար, վստահություն չեն ներշնչում, քանի որ այն քրեական գործերը, որոնց մեջ մենք ենք ներգրավվում, ցույց է տալիս, որ հրամանատարների անգործությանը կամ պաշտոնական դիրքի չարաշահմանը համարժեք գնահատական չի տրվում: Եթե զինվորը ինքնասպանություն է գործում, այդ դեպքում էլ նրա հանդեպ իր արժանապատվությունը ճնշող վերաբերմունք է եղել: 0038 գաղտնի հրամանով զինված ուժերը 2008 թվականի մարտի 1-ին օգտագործեցին խաղաղ բնակչության դեմ: Իրենք չեն ուզում տպավորություն ստեղծվի, որ բանակը կարող է կրակել սեփական հայրենակիցների վրա, ուստի շատ դեպքում չեն ուզում գործեր հա-

րուցել սպանություն հոդվածով: Բանակում տիրող կոռուպցիան շատ բան է փչացնում: Էն, որ պաշտպանության նախարարը, կամ այլ պաշտոնյաներ հայտարարում են, որ բանակը հասարակության հայելին է, դա ճշմարտությանը մոտ է, քանի որ ողջ երկիրն է կոռուպցիայի մեջ թաղված եւ բանակը մեկուսի չէր կարող լինել այդ ամենից: Բանակում գործում է ժամացույցի նման աշխատող կոռուպցիոն մեխանիզմ: Ամեն ինչ գաղտնի է տեղի ունենում, ով է ապահովում խոզի մսի մատակարարումը բանակ: Ես գիտեմ, որ զինդատախազության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն է կանգնած այդ գործի թիկունքին:

**-Մատաղիսի դատավարությունը բարեհաջող կերպով ավարտվեց մեղադրյալների համար, իսկ զինվորների սպանության իրական մեղավորները ձեր կարծիքով կպատժվե՞ն:**

-Մենք հայտարարել ենք, որ երեք տղաների նկատմամբ իրականացված հետապնդումը պետք է դադարեցվի, դատավճիռը պետք է վերջնական ուժի մեջ մտնի եւ դրանից հետո նոր կանցնենք տուժողների իրավունքների պաշտպանության հարցին: Պետք է հետեւողական պայքար տարվի:

**-Մեր բանակն այսօր ավելի շատ ինչի՞ կարիք ունի, արդյո՞ք տարածաշրջանում ամենահզոր բանակն ունենք:**

-Ինձ ավելի շատ հետաքրքրում է այն, որ բանակն ապահովի մեր երկրի պաշտպանությունը: Ես համոզված եմ, որ այն բանակը, որտեղ կա հարգանք զինվորի նկատմամբ, մտահոգություն նրա առողջության հանդեպ, չի կարող այդպիսի բանակը մարտունակ չլինի: Ժողովրդավարական երկրների բանակներում եւս կան խնդիրներ, բայց այնտեղ կան մեխանիզմներ այդ խնդիրները լուծելու: Մենք ասացինք, որ պաշտպանական գերատեսչության ղեկավարը ԱԺ-ին տարեկան հաշվետվություն ներկայացնի բանակում կանոնադրական հարաբերությունների, մարդու իրավունքների վիճակի մասին, ասացինք, որպես անկախ մարմին ռազմական օմբուդսմեն ստեղծեք: Սակայն չհամաձայնեցին:

**-Արդյո՞ք բանակային խնդիրների մասին ԶԼՄ-ները պետք է լուսաբանեն:**

-Միանշանակ պետք է լուսաբանել եւ ոչ միայն, չի կարելի տուրք չտալ այն անգրագետ մոտեցումներին, որ որքան այդ խնդիրները լուսաբանվեն, այնքան մեր բանակի հեղինակությունը կընկնի: ԶՈւ հեղինակությունը գցում են այն հանցագործները, ովքեր բանակի ռեսուրսներից օգտվում են եւ այդ հանցագործությունները պետք է բացահայտվեն: Դրանց բացահայտման արդյունավետ տարրերակներից մեկն էլ այդ խնդիրների լուսաբանումն է: Իսկ ովքեր, որ մտահոգված են բանակի հեղինակության անկմամբ, իրենք պետք է ջանքեր գործադրեն, որ այդ հեղինակությունը գցող հանցագործությունները չկոծկվեն: Իսկ եթե իրենք դժգոհում են, թե ինչի համար են լուսաբանվում այդ հանցագործությունները, ուրեմն եւս մասնակից են այդ հանցագործություններին կամ շահագրգռված են դրանք կոծկելուն:

Անահիտ Սիմոնյան

Լուսանկարը՝ hcav.am-ի

# Հրանտ Բագրատյանը՝ բանակի բարեփոխման մասին

04 փետրվարի, 2013




«Բանակն իրաանում» քաղաքացիական նախաձեռնությունը հարցում էր հղել ՀՀ նախագահի բոլոր թեկնածուներին եւ ստացել է նախագահի թեկնածուներից Հրանտ Բագրատյանի պատասխանը՝ հայկական բանակի բարեփոխման իր պատկերացումներով.

-Ես ՀՀ զինված ուժերի բարեփոխումները դիտարկում եմ որպես երկրում սահմանադրական կարգի վերականգնման եւ երկրի արմատական բարեփոխումների կարեւոր մաս: Ուստի՝ իշխանափոխությունից հետո կկազմեմ փորձագիտական խումբ՝ քաղաքացիական հանրության ներկայացուցիչների ներգրավմամբ եւ կմշակեմ ու կիրականացնեմ ՀՀ զինված ուժերի բարեփոխումների արմատական ծրագիր, որը կնպաստի բանակի մարտունակության բարձրացմանը եւ զինծառայողների իրավունքների պաշտպանությանը:

«Բանակն իրականում» խմբի առաջադրած հարցերին մեր պատասխանները հետեւյալն են.

**1. Ինչպիսի՞ սկզբունքով պետք է համալրվի Զինված ուժերի շարքային կազմը. ա) զորակոչային,բ) պայմանագրային, դ) աշխարհազորային, գ/խառը:**

Զինված ուժերի բացառիկ գործառույթը պետք է լինի Հայրենիքի պաշտպանությունը: Հայրենիքի պաշտպանությունը չի կարող իրականացվել անվճար: Զինված ուժերի շարքային կազմը պետք է ձեւավորվի պայմանագրային սկզբունքով, իսկ մինչեւ դրան անցնելը՝ երեք տարվա ընթացքում, այն պետք է լինի խառը: Զինծառայությունը պետք է պարտադիր լինի արական սեռի բնակչության համար, բայց պետք է ստեղծել նաեւ պայմանագրային կանացի զորամասեր: Բոլո?ր զինծառայողները պետք է ստանան միջինից ոչ պակաս աշխատավարձ: Ավելին, կարծում եմ, որ նրանց վարձատրությունը մի 20%-ով բարձր պետք է լինի ՀՀ-ում միջին աշխատավարձից:

Ռազմական կրթարանները պետք է արմատական բարեփոխման ենթարկվեն: Սպայական կադրերը պետք է կրթվեն ըստ օրենքների եւ սահմանադրության: Զինված ուժերում ծառայության ընթացքում զինծառայողները պետք է ունենան (լրացուցիչ) մասնագիտություն ստանալու հնարավորություն:

Պահեստազորում գտնվող անձինք պետք է պարբերական ուսումնական ծրագրերի մասնակցեն, որի ընթացքում պետք է պահպանեն իրենց աշխատատեղը եւ աշխատավարձը, որի երաշխիքները պետք է ստեղծի պետությունը: Ակտիվ պահեստազորը պետք է լինի բարձր վճարովի, կամավոր, երկսեռ, անսահմանափակ ժամկետով. միակ սահմանափակումը զինծառայողի տարիքն է:

**2. Ինչպիսի՞ կառուցվածք եւ կազմ պետք է ունենան Զինված ուժերը:**

Ներկա պահին մենք տեսնում ենք զինված ուժերը՝ կազմավորված կորպուսներում, որոնք ներառում են բոլոր զորատեսակները: Միաժամանակ հեռանկարում հնարավոր ենք համարում դեսանտապարտիզանական բանակին բնորոշ լավ զինված եւ պատ-

րաստված մոբիլ զորամիավորումների կազմավորումը:
ՀՀ պաշտպանության նախարարությունը պետք է զբաղվի պաշտպանական ոլորտի քաղաքականությամբ, իսկ ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբը՝ զինված ուժերի կառավարմամբ:
Պաշտպանության նախարարությունը պետք է ստանձնի զինծառայողի իրավական եւ սոցիալական ապահովման խնդիրները՝ հանդերձավորումից մինչեւ կրթություն, իսկ գլխավոր շտաբը՝ զորքերի կառավարումը մարտական եւ ոչ մարտական իրավիճակներում:
Զինվորական ծառայությունը պետք է լինի պայմանագրային (վճարովի) պարտադիր ժամկետային ծառայության եւ պայմանագրային կամավոր՝ անժամկետ ծառայության համար:
**3. Ի՞նչ կազմակերպաիրավական երաշխիքներ պետք է սահմանվեն Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համար:**
Զինված ուժերում զինծառայողների իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացվի ճիշտ այնպես, ինչպես մյուս բոլոր քաղաքացիներինը: Նախ, բանակ զորակոչվելուց հետո զինվորը պետք է մնա քաղաքացի եւ իր մոտ պահի անձնագիրը: Նրա իրավական պաշտպանությունը պետք է լինի այն քաղաքացիական-իրավական հարթության մեջ՝ ինչպես բոլորինը: Բոլոր տեսակի զինվորական գերատեսչական քննչական, ոստիկանական ու դատախազական մարմինները պետք է լուծարվեն:
Զորակոչվածի բուժզննումը պետք է կատարվի քաղաքացիական բուժհաստատություններում:
Զինծառայողները պետք է լիարժեք օգտվեն իրավունքների պաշտպանության այն բոլոր մեխանիզմներից, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ քաղաքացիների համար:
**4. Ինչպիսի՞ն պետք է լինի Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համակարգը (սկզբունքներ, ինստիտուտներ, գործառույթներ, մեխանիզմներ, լծակներ):**
Ընդհանուր առմամբ, զինված ուժերի նկատմամբ իրավական վերահսկողությունը պետք է լինի ինչպես բոլոր քաղաքացիների համար: Բանակը պետք է մոտեցնել ու նույնացնել քաղաքացիական ինստիտուտներին:
Պաշտպանության նախարարը պետք է հաշվետու լինի խորհրդարանի առաջ եւ հանդես գա պարբերական հաշվետվությամբ՝ զինված ուժերում առկա վիճակի մասին:
Զինծառայողը պետք է մշտական կապ ունենա իր ընտանիքի հետ:
Իրավապաշտպան կազմակերպությունները պետք է հնարավորություն ունենան մշտական դիտարկման ենթարկելու մարդու իրավունքների վիճակը զինված ուժերում:
**5. Ինչպիսի՞ն պետք է լինի պաշտպանական բյուջեի ձեւավորման, կատարման, հսկողության–վերահսկողության համակարգը, այդ թվում՝ թափանցիկության ապահովման տեսակետից (սկզբունքներ, ինստիտուտներ, գործառույթներ, մեխանիզմներ, լծակներ):**
Բացարձակապես նույնը՝ ինչը մնացած բոլոր բյուջետային կառույցներինը:
**6. Որո՞նք են Զինված ուժերի գործունեության գաղտնիության ապահովման պարամետրները:**
Գաղտնիության ենթակա են միայն ԶՈՒ տեղաբաշխումը, կառուցվածքը, տեղեկությունները զենքերի քանակի ու որակի մասին:
**7. Ինչպե՞ս պետք է վերակազմակերպվեն զինված ուժերին առնչվող իրավապահ մարմինները՝ ՊՆ Ռազմական ոստիկանությունը, ՊՆ քննչական ծառայությունը, Զինվորական դատախազությունը:**
Այս երեք մարմիններն էլ պիտի վերանան:

Հ.Բագրատյանի լուսանկարը Ֆոտոլուր գործակալության

# Զինվոր բանակ չեն ուղարկում անշունչ դի ստանալու համար

20 մայիսի, 2013



Մայիսի 15-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Նոյեմբերյանում գտնվող ՊՆ N զորամասում ծառայակցի արձակած գնդակից զոհվել էր Մարտունիի Վերին Գետաշեն գյուղի բնակիչ, 1994թ. ծնված զինծառայող Լյուքս Ստեփանյանը: Գյուղապետի խոսքով՝ Լյուքսը գյուղի լավագույն երիտասարդներից էր. «Նա երեք տարի շարունակ սովորել է «Քվանտ» վարժարանում, բարձր առաջադիմությամբ: Այս ընթացքում նա գոհ էր իր զինծառայությունից եւ որպես լավագույն զինծառայող՝ պատրաստվում էին պատվոգիր ուղարկել»,- ասել է գյուղապետը լրագրողներին:

Ըստ նախաքննության, սպանությունը կատարել է նույն զորամասի պահակախմբի մուտքի դիտորդ, շարքային Դավիթ Ռաֆայելի Խաչատրյանը՝ իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի հրաձիգից: Կրակոցից նույն զորամասի ծառայող Հրաչյա Վաղինակի Սարգսյանը գլխի շրջանում ստացել է հրազենային վիրավորում եւ տեղափոխվել ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի վերակենդանացման բաժանմունք: Որոշում է կայացվել Դավիթ Խաչատրյանին ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով եւ ՀՀ քր. օր-ի 112 հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, ինչպես նաեւ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն դատարան ներկայացնելու մասին: Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով «սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով» հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:

Սպանված զինվոր Լյուքս Ստեփանյանի հայրը մայիսի 17-ին որոշել էր ի նշան բողոքի՝ որդու դին դագաղով բերել Երեւան եւ բողոքի միջոցառում անցկացնել Կառավարության շենքի դիմաց: Լրագրողների հետ զրույցում ծնողները նշել են, որ իրենց զայրույթի առիթն այն է, որ իրենք տեղեկություններ ունեն՝ իրենց որդին միջադեպում մեղք չի ունեցել. «Սեյրան Օհանյանից պահանջում ենք պատասխանատվության ենթարկել մարդասպանին: Սա դիտավորյալ





սպանություն է»:

Սեւան-Երեւանի ճանապարհին, զինվորի դին տեղափոխող գյուղացիները հանդիպել են ՊՆ մեքենաներին, ինչպես նաեւ ոստիկանության պատնեշին, ովքեր թույլ չեն տվել նրանց անցնել առաջ: Տեղի է ունեցել բախում, զինվորի հարազատների եւ ոստիկանների միջեւ հրմշտոց է սկսվել: Դեպքի վայր են շտապել ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանն ու պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ովքեր հարազատների հետ երկար բանակցություններից հետո կարողացել են համոզել Լյուքսի ծնողներին վերադառնալ գյուղ եւ հողին հանձնել զինվորի դին՝ խոստանալով գործին համապատասխան լուծում տալ: Զոհված զինվորի եղբայրը հարց է ուղղել Սեյրան Օհանյանին, թե դա դիտավորյալ սպանություն է: «Այո, սակայն նախաքննությունը ամեն ինչ ցույց կտա»,-պատասխանել է նախարարը ու լրագրողների եւ զոհվածի հարազատների ներկայությամբ խոստացել շատ արագ նախաքննություն իրականացնել, մեղավորներին պատժել՝ այդ մասին հրապարակավ հայտնելով հանրությանը: Լյուքսի մայրն էլ Սեյրան Օհանյանին ասել է, որ «մինչեւ մի քանիսին չգնդակահարեք, հարցի լուծում չի լինի»:

Զինվորի հուղարկավորությունից հետո մամուլը հեղեղվեց մեկնաբանություններով, որոնք պարզաբանում էին տղայի դիակը Երեւան բերելու շարժառիթները, հոր կտրուկ որոշման պատճառները: Ըստ որոշ հրապարակումների՝ ծնողներին այդ քայլին հրահրել են իրավապաշտպան որոշ կազմակերպությունների ներկայացուցիչներ. մասնավորապես մատնանշվում էին իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանի եւ ՀՔԱ վանաձորյան գրասենյակի տնօրեն Արթուր Սաքունցի անունները: Վերջինս HayNews.am-ի թղթակցին տված հարցազրույցում նշել է. «Ես երեկ ամբողջ օրը եղել եմ Ժաննա Ալեքսանյանի հետ, եւ մենք Վանաձորում ենք գտնվել, սպանված զինվորների հարազատների հետ հանդիպում չի եղել: Իսկ ով դա ասում ա, թող ինքն էլ ասի, թե որտեղից է նման ինֆորմացիա վերցնում: Դա ակնհայտ ապատեղեկատվություն է, որի նպատակն է ողջ պատասխանատվությունը ՊՆ ղեկավարությունից շեղել բոլորովին այլ ուղղությամբ եւ քավության նոխազներ գտնել, որը չի ստացվի»,- նշել է Արթուր Սաքունցը:

Իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանն էլ իր հերթին պարզաբանել է. «Ես այդ գյուղ չեմ այցելել, եւ դա ինձ հետ ընդհանրապես առնչություն չունի: Ես կարծում եմ, որ իմ անվան շուրջ շահարկումներ են սկսվում»:

ԱԺ նախկին պատգամավոր Ստյոպա Սաֆարյանը, անդրադառնալով այդ հարցին, ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Լսե՛ք, ստրկամիտներ, պատվեր կատարողներ: Ինձ չի հետաքրքրում, թե ով է հղացել կամ հուշել այդ միտքը: Այն չափազանց ադեկվատ է իրավիճակին, որի ստեղծողն այս իշխանություններն են իրենց հանցավոր անգործությամբ: Այդ բոյակային վայրահաչն ու վայնասունը նաեւ անեիք այն ժամանակ, երբ ՊՆ ղեկավարության գիտությամբ զինվորները բազմակի քվեարկության էին տարվում, երբ զին-

վորը ցույցերի ժամանակ հանվում էր սեփական ծնողի դեմ՝ կրակելու պատրաստ, երբ զինվորի համար բյուջետային հատկացումները մսխվում էին գայլերի կողմից, երբ բազմաթիվ զինվորների սպանություններ «չբացահայտված» ու անպատիժ մնացին: Ո՞ւր էիք, ողորմելիներ: Ինչո՞ւ կարելի է ձեր հղփացած լակոտների հարսանյաց շքախմբերը պտտացնեք Հանրապետության հրապարակում ու փողոցներում, իսկ սպանված զինվորի դին այնտեղ հասցնելը շռու՞ դարձավ: Ծնողը բանակին առողջ զավակ է տվել եւ նրա տուն առողջ զավակ պետք է գնա: Կառավարության մեղքով են սպանությունները շարունակվում բանակում, հետեւաբար, այո՛, երիտասարդի դիակը կարող էր բերվել եւ դրվել կառավարության դեմը: Ինչի՞ց եք ամաչում... Միթե՞ դուք ամոթ ունեք»:

Ավելի ուշ ՀՔԱ վանաձորյան գրասենյակի տնօրեն Արթուր Սաքունցն իր ֆեյսբուքյան էջում գրեց. «Տասներկու օրվա ընթացքում երեք զինվոր, երեք մարդ, երեք երիտասարդ մահացան... կորցրեցինք... Եւ այսքանից հետո ո՞վ ասաց, ու՞մ ասաց, ի՞նչ ասաց: Տո բա մա՞րդ ենք մենք, բա մենք իրավու՞նք ունենք մարդ կոչվելու, մարդաբերես դուրս գալու: ... Մարդկանց արեւածաղկի սերմի նման չրթում եք, ինչքան է պետք, որ հագենաք, ասեք էլի՝ իմանանք... Հրադադարի խախտման հազարավոր դեպքերից մահանում են տասից մեկը-երկուսը... Հիմա որտե՞ղ է ապահով՝ զինված ուժերի ներսու՞մ, թե՞ բաժանարար գծում: Հիմա հակառակորդը որտե՞ղ է, չեմ հասկանում. սահմանի մյուս կողմու՞մ, թե՞ սահմանից այս կողմ: Հաշվետու, վստահություն... դրանցով կյանքերը վերականգնվելու՞ են, մահերը դադարելու՞ են»:

Իսկ զինվորի մայրն իր որդուն հրաժեշտ տալիս ասել է.«Գոնե թշնամու գյուլլից զոհվեր, իմանայի հերոս մեռավ», իսկ հիմա ի?նչ՝ հայը հայի վրա է զենք բարձրացրել:

Հրաչ Հովհաննիսյան

Լուսանկարները՝ Ֆոտոլուր գործակալության

11 հունիսի, 2013

# «Սերժն է մեղավոր՝ ես հըմի ինչըղ ապրիմ»

## Զինվորական թոշակառուն նորմալ ապրել է ուզում




«Երկրորդ կարգի զինվորական թոշակառու եմ: 1993 թվականին ինձ ծեծելով բանակ են տարել: Ազգականիս տուն էի գնում տրոլեյբուսով, զինվորականները՝ ռազմական ոստիկանությունը, ծեծելով իջեցրին ու տարան բանակ: Ծառայել եմ Նոյեմբերյանի Բաղանիս գյուղում: Ոսկեպար, Կոթի՝ սահմանամերձ գյուղերն էին մեր պաշտպանական դիրքերը: Ինձ մի հատ էլ բանակում են ծեծել Նոյեմբերյանի տղաները, նրանք հետո դատվեցին: Եկել եմ այստեղ, նեւրոզների դիսպանսերում բուժում անցել: Ամիսներով պառկել եմ հիվանդանոցում: Հետո Երեւանում ինձ թոշակավորել են: Բժիշկն հայտարարեց, որ էրեխին ծեծել-ջարդել, ցավի տեր են դարձրել»,-պատմում է 38-ամյա Համլետ Նորսոյանը:

Այդ տարիներին ժամկետային զինծառայողները տարիուկես էին ծառայում, իրեն ծառայությունից ազատել են վեց ամիս անց: «Էդ թվերին անտերություն էր, իմ ծառայակիցներն էին, ապրում էին Նոյեմբերյանում: Խեղճությունս տեսնելով, կոտրեցին ինձ՝ հիվանդության տեր դարձրին: Տանկի ակումուլյատորը մեջքիս էին դրել ու տանջում էին: Ինչ է թե՝ կարոտում էի տանեցիներին, ծնողների փեշի տակ մեծացած էրեխու տեղ էին դրել: Ինձ իրավունք էլ չունեին զորակոչել՝ ես արդեն հիվանդ էի, ուղղակի հարուստի էրեխու տեղ, ում հերը տվել էր իրա տղին ծառայությունից ազատելու բաժին փողը, ինձ տարան բանակ»:

Պատմում է, որ Վազգեն Սարգսյանի պաշտպանության նախարար եղած ժամանակ՝ դեռ հնարավոր էր որոշակի զեղչերից եւ արտոնություններից օգտվել, այժմ դա անհնար է դարձել: Միայն կոմունալ ծախսերն ամբողջ թոշակը տանում են, իսկ հիմա էլ գազն ու լույսը թանկացել են՝ ապրելու ճար չի մնացել: Կին ունի, երկու երեխա, մայր, ով 62 տարեկան է ու դեռ մեկ տարի ունի, որպեսզի թոշակի անցնի:

Ստանում է 20 հազար դրամ. «Ընձնից զիբլի, ջրի, գազի, լույսի վարձը գուզեն՝ չհաշված հողահարկը, գույքահարկը, էլ տակը ի՞նչ կմնա որ ես կարողանամ ընտանիքիս մասին հոգամ: Հիվանդ տղա եմ, չեմ կրնա ապրիմ, հըբը ու?ր մնաց, որ ծեր մորս կարողանամ պահել: Գուկան կխեղդեն ու վարձերը գուզեն: Երկու անչափահաս երեխա ունեմ՝ 6 ու 5 տարեկան՝ մանկապարտեզի վարձն էլ մյուս կողմից գուզեն: Թող մի քիչ բարձրացնեն թոշակս՝ ես էլ չգնամ՝ մուրացկանությամբ զբաղվեմ»:

Պաշտպանության նախարարությունից, մարզպետարանից ու քաղաքապետարանից ողորմություն խնդրողի է վերածվել, ասում է, հարց է տալիս՝ ինչու՞ պետք է այսպես լիներ.«Յարա չսաղցնող միջոցներով բավարարվեր»: Ֆիզիկական հնարավո-



րություն էլ չունի, որ աշխատի, մի կերպ ընտանիքի ապրուստը հայթայթի: «Իրանց մեղքով հիվնդցել եմ՝ իրանք էլ տեր չեն ուզե էղնի, ընձի կսեն՝ գնա, ինչըղ կրնաս ապրի: Սերժն է մեղավոր՝ ես հըմի ինչըղ ապրիմ»: Գոնե որպես ղեկավար, ասում է, կարողանար իր նմանների կոմունալ ծախսերի՝ նախկինում եղած զեղչերը վերականգնել:

Դիմել է ՀՀ ՊՆ, որտեղից ՁՍՊ վարչության պետ Ս.Հարությունյանի 06.04.2013 թվականի պատասխանն է ստացել, որում ասված է. «Դրամական օգնության խնդրանքով ՀՀ պաշտպանության նախարար Ս.Օհանյանին Ձեր հասցեագրված դիմումի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 255 որոշման պահանջներից ելնելով, ՀՀ պաշտպանության նախարարի 04.03.2008 թվականի թիվ 255 հրամանով հաստատված կարգի համաձայն՝ ֆինանսական միջոցներ լինելու դեպքում ձեզ կհատկացվի 10 հազար դրամ օգնություն, որը Դուք կստանաք փոստային բաժանմունքի միջոցով»:

Ասում է.«Էդ 10 հազար դրամը ի՞նչ փող է, դրանով ի՞նչ հարց կարող եմ լուծել»:

Տարիներ առաջ կոմունալ ծախսերը զեղչով էր մուծում. դա մատից փուշ հանելու պես մի բան էր, այժմ՝ այս թանկության պայմաններում բարդացել է վիճակը.«Գազը էն ժամանակ կեսով էի մուծում, հըմի դրել է 160 դրամ խորանարդը՝ ես ուրտեղի?ց տամ էդ փողը: Տրանսպորտից օգտվելու արտոնություններ ունեի, սաղ վերացրեց: Կոպեկըմ թոշակիս չի ավելցընե, ես ուրտից տա?մ: Գլխուղեղի տրավմա ունիմ, առողջությունս լավ չէ, գուզեմ աշխատիմ, օր ապրիմ, բայց չեմ կրնա աշխատիմ: Փորձել եմ՝ չի ստացվի»:

Բացի նրանից, որ հայկական բանակում ծառայելու ժամանակ ծեծի է ենթարկվել ու գլխուղեղի վնասվածք ստացել, դեռեւս հինգ տարեկան հասակում էլ տան երդիկից է ընկել գլխիվայր: Այնպես որ, բժշկական հանձնաժողովը իրեն իրավունք չուներ զորակոչել:

Համլետ Նորսոյանը, ով թոշակավորվել է դեռ 1998 թվականից, եթե առողջական վիճակը թույլ տար, կգերադասեր գնալ արտերկիր՝ աշխատելու՝ ընտանիքի գոյատեւման խնդիրներն այնտեղ լուծելու, քան թե ողորմության սպասումով, ասել է թե՝ «շակալի բաժնով» ապրեր.«Էն էլ էս թանկության ժամանակներում»: Իր հիվանդության համար անհրաժեշտ դեղերից էլ է զրկված՝ վստահեցնում է Համլետը: «Ընձի կսեն, թե առողջապահության նախարարության ցանկով ինձ իրավունք չկա դեղերի հատկացում, կսեն՝ գնա, փող տուր, ինքդ առ: Ես էլ ասի՝ էդ 20 հազար դրամով դեղ առնի՞մ ընձի, թե՞ էրեխեքիս ուտելու բան: Ո՞ր մեկն էնեմ: Իմ բողոքս էն է, օր պետությունը ընձի նորմալ ապրելու թոշակ տա: Օր կարողանամ ապրիմ, մուրացկանի պես չապրիմ»:

Սամվել Հունանյան

# Արծրուն Հովհաննիսյան. «ՀՀ անվտանգության ապահովման համար մեր զորակոչը բավարարում է»

1 հուլիսի, 2013



Վերջերս որոշ քաղաքական ու ռազմական գործիչներ հայտարարեցին այն մասին, որ կանանց՝ Հայոց ազգային բանակում ծառայելը, ցանկալի կլիներ եւ դա անհրաժեշտություն է: Արցախյան ազատամարտի հերոս Արկադի Տեր-Թադեւոսյանն, անդրադառնալով Հայաստանի ռազմաուսումնական հաստատություններում աղջիկներին ընդունելու որոշմանը, ասել էր, որ Իսրայելում օրինակ, կանանց բանակում ծառայելը պարտադիր պայման է:

Այս հարցով զրուցեցինք ՀՀ պաշտպանության նախարարության մամլո խոսնակ, ռազմական փորձագետ Արծրուն Հովհաննիսյանի հետ, հարցնելով՝ եթե իսրայելական բանակում կանանց ծառայությունը պարտադիր պայման է, ապա հնարավո?ր է մեզ մոտ էլ նմանատիպ օրենք ընդունել: Ա.Հովհաննիսյանը նշեց, որ Հայոց բանակում կանանց ծառայելու անհրաժեշտությունը չկա: «Առաջիկայում այդպիսի բան չի էլ քննարկվում ընդհանրապես: Մենք մեր առանձին մտածելակերպն, արժեհամակարգը, խնդիրներն ու մարտահրավերներն ունենք, Իսրայելը՝ իր: Երկու դեպքում էլ մեր պետությունները 4 կողմից հակառակորդներով են շրջապատված, ուղղակի գոյության կռիվ են վարում, գրեթե անդադար»,-պարզաբանեց Ա.Հովհաննիսյանը:

Գուցե կանանց Հայոց բանակում ծառայելու հարցը քննարկվում է, քանի որ զինվորների պակա՞ս կա, հարցրեցի Ա.Հովհաննիսյանին:-Նման խնդիր չկա, խնդրում եմ այդ հարցը նույնիսկ մի էլ շոշափեք: ՀՀ անվտանգության ապահովման համար համապատասխան զորակոչը բավարարում է:- Ա.Հովհաննիսյանը նաեւ նշեց, որ Հայաստանն արդեն անցնում է պայմանագրային զինծառայության մեխանիզմին: «Սակայն լիովին անցնել պայմանագրային զինծառայության՝ դեռ նպատակահարմար չէ: Օրինակ, Իսրայելն էլ չի անցել պայմանագրային զինծառայության: Այն պետությունները, որոնք գոյապայքարի խնդիր ունեն, հնարավորություն չունեն լիովին պայմանագրային զինծառայության անցնել: Եթե Իսրայելը մշտական մեծ բանակ պահելու խնդիր չունենար, այդ պետությունը կարող էր իրեն թույլ տալ այդպիսի բան: Միաժամանակ, պետության հիմնական ծեռքբերումը արհեստավարժ պայմանագրային զինծառայող ունենալն է»,-նշեց զրուցակիցս:

Կանանց՝ Հայոց բանակում ծառայելու հարցը քննարկվել է նաեւ սոցիալական ցանցերում: Ֆեյսբուքում կանանց զինծառայության հարցին է անդրադարձել



tesankyun.am-ի գլխավոր խմբագիր Ոսկան Սարգսյանն, ով մեր հարցադրմանն ի պատասխան նշել էր հետեւյալը. «Նախ՝ կանայք հիմա էլ են ծառայում բանակում: Երկրորդ՝ ոչ թե պետք է կանանց զորահավաք անել, այլ ավելացնել բանակում կին զինծառայողների թիվը: Դա թույլ կտա տղամարդկանց ազատել թիկունքի գործերից, նրանց ուղղել զուտ մարտական խնդիրների լուծմանը: Երրորդ՝ եթե ճիշտ կազմակերպվի, կանանց ներկայությունը բանակում կավելացնի մարտական ոգին, զուսպ եւ քաջ կպահի տղամարդկանց: Պետք է հաշվարկել, թե մեր երկրի բյուջեն ինչքան զինծառայող կարող է պահել: Կռվում են ոչ թե քանակով՝ այլ որակով, զինծառայողների պատրաստվածությամբ եւ սպառազինությամբ: Դեռ մեր զորահավաքային ռեսուրսը բավարար է, որպեսզի բոլոր կանանց ժամկետային զինծառայության չկանչենք: Իհարկե, քանակը որակ է տալիս, բայց անհնար վիճակն է ծնում հնար: Խնդիրն աղջիկներին բանակ զորակոչելու մեջ չէ, խնդիրը երկրում բարոյահոգեբանական ծանր, ես կասեի՝ խեղդող մթնոլորտը փոխելու մեջ է, որպեսզի հայերը չարտագաղթեն: Խորհրդային հզոր երկիրը քայքայվեց կեղծիքից, հիմա Հայաստանում կեղծիքն ավելի շատ է, քան սովետի օրոք էր»,-ասում է Ո.Սարգսյանը:

Նշենք, որ ցանկացած երկրի համար բնակչության թվաքանակի աճը ռազմավարական տեսանկյունից կարեւոր նշանակություն ունի: Որքան շատ մարդ, այնքան շատ հարկատու, այդ պարագայում բյուջեի եկամուտները եւս ավելանում են: Մարդկային ռեսուրսի աճը կարեւոր է նաեւ պատերազմների ժամանակ: Իսկ մեզ մոտ, արտագաղթի պայմաններում, տարիներ անց գուցե հայկական բանակում կանանց ծառայելու խնդիր առաջանա, եթե բանակը զինվորների պակաս ունենա: Սակայն, եթե վկայակոչում ենք Իսրայելը, որտեղ կանանց զինծառայությունը պարտադիր պայման է, ինքներս մեզ պետք է հարց տանք, թե արդյո՞ք մեր բյուջեն տալիս է այդ հնարավորությունները, որ կանանց էլ զորակոչեն բանակ: Պետք չէ դոգմատիկ մտածելակերպ դրսեւորել, մտածել, եթե Իսրայելում կանայք պարտադիր ծառայում են, մենք եւս կարող ենք նման օրենք ընդունել: Նախ Հայաստանն Իսրայել չէ: Այնտեղ ռազմական ծախսերի համար տարեկան մոտ 14,9 մլրդ դոլար գումար են հատկացնում (սա, ըստ 2009 թվականի տվյալների)՝ չհաշված ամեն տարի այս երկրին ԱՄՆ-ի ցուցաբերած ֆինանսական օժանդակությունը, որը եւս նպատակաուղղված է Իսրայելի ռազմական ոլորտի հզորացմանը: Բացի այդ, Իսրայելի բնակչության թիվը հասնում է մոտ 7 մլն-ի: Իսկ մեր ռազմական բյուջեն տարեկան կազմում է 300 մլն դոլար, բնակչության թիվը եւս քիչ է, նման սուղ միջոցներն արդյո՞ք բավարարում են կանանց բանակ զորակոչելու համար, այն դեպքում, երբ զորակոչված տղաներին երբեմն ծնողներն են հագուստ եւ սնունդ հասցնում զորամաս:

Անահիտ Սիմոնյան

Արծրուն Հովհաննիսյանի լուսանկարը՝ իր ֆեյսբուքյան էջից

# Զորակոչիկների իրավունքների իրազեկում՝ բանակ գնալուց առաջ

29 մայիսի, 2013

2013թ. ապրիլից Եվրոպայի անվտանգության եւ Համագործակցության/ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ) ֆինանսական աջակցությամբ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը իրականացնում է «Զորակոչիկների եւ զինծառայողների իրազեկումը եւ նրանց ներգրավումը իրենց իրավունքների պաշտպանության մեջ» ծրագիրը: Հիմնական նպատակն է զորակոչիկներին իրազեկել իրենց իրավունքների մասին, նպաստել նրան, որ իրենք, անհրաժեշտության դեպքում, կարողանան պաշտպանել դրանք: Ինչպես նշում է ծրագրի եւ ՀՔԱ խաղաղասիրական բաժնի համակարգող Արմինե Սադիկյանը, այս պահին ընդամենը նախապատրաստական աշխատանքներ են ընթանում եւ իրավական ուղեցույց ու նյութեր են նախապատրաստվում զորակոչիկների համար, որոնցով պիտի իրականացվի ծրագիրը. «Այստեղ կարեւոր է նաեւ այն, թե ինչպես անեն, որ ապագա զինվորներն էլ կարողանան իրենց իրավունքները պաշտպանել զորակոչի ընթացքում՝ կցագրումից սկսած մինչեւ զուտ տեխնիկական խնդիրներ, բուժսպասարկում, հանձնաժողովներում այս կամ այն ընթացակարգ, փաստաթղթերի տրամարդում իրենց զինծառայության ընթացքում, իրավունքներ, պարտականություններ եւ այլն»:

Ծրագիրը անցկացվում է Լոռու մարզի չորս քաղաքներում՝ Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ: Հունիս ամսին կլինի սեմինարի առաջին շրջանը՝ ամեն քաղաքում 25-30 զորակոչիկների հետ, հետո արդեն հաջորդ ամիսներին երկրորդ շրջանը կլինի աշնանային զորակոչին բանակ մեկնողների համար. «Նմանատիպ ծրագրեր մենք բազմիցս արել ենք նաեւ ամբողջ հանրապետության մասշտաբով 2009-ին, որը շատ ավելի լայն ծրագիր էր: Երեք կազմակերպություն էինք այն ժամանակ, մենք հյուսիսային երեք մարզերում էինք իրականացնում»,-նշում է ծրագրի համակարգողն ու շտապում հիշեցնել՝ չնայած հնարավորություն եղավ միայն Լոռու մարզում իրականացնել, բայց գործունեությունը թույլ է տալիս տարածվել մյուս մարզերում գրքույկի միջոցով, որը կտարածվի 500 այլ զորակոչիկների շրջանում:

Զրուցակցիս խոսքով՝ այս պահին ակտիվություն չկա, պատրաստվում են ինֆորմացիան տարածել դպրոցներում, զինկոմիսարիատներում, նաեւ հայտարարությունների միջոցով իրենց կայքում. «Այս սեմինարի համար դեռ արձագանքներ չկան, բայց շատ զորակոչիկներ իրենց իրավունքների պաշտպանության համար մեզ արդեն իսկ դիմում են: Ցանկացողները պետք է գրանցվեն՝ նախապես դիմելով, որ իմանան տեղը, ժամը ու կարողանան մասնակցել»:



Համեմատելով նախորդ մի քանի ծրագրերը՝ Արմինե Սադիկյանը հետաքրքրվածության ու իրազեկվածության աճ է նկատում այն առումով, որ եթե այն ժամանակ ամբողջ զորակոչի ընթացքում դիմում էին երկու-երեք զորակոչիկներ, ապա հիմա այդ թիվն անհամեմատ աճել է. «Դա մի քանի պատճառ ունի. նախ՝ մշտապես հանրությունն իրազեկվել է այդ մասին, կան նաեւ ոգեւորող, հաջողության հասած պատմություններ. օրինակի վրա իրենք հասկանում են, որ եթե տեղյակ ես եւ ուզում ես, կարող ես հասնել հաջողության»:

Հարցին՝ չարժեր նման մի սեմինար էլ կազմակերպել հրամանատարական կազմի համար՝ իրենց իրավունքների ու պարտականությունների ճիշտ կատարման եւ չչարաշահման առնչությամբ, ծրագրի համակարգողը պատասխանում է.«Հրամանատարները, եթե արդեն հրամանատար են, պիտի իմանան իրենց իրավունքները, ինչը, դժբախտաբար, ոչ միշտ է այդպես, բայց, քանի որ մշտապես զբաղվում ենք այդ հարցով, արդեն պաշտպանական գերատեսչությունը տեղյակ է նման նախաձեռնություններին: Մենք մշտապես տարբեր զեկույցներով ենք հանդես գալիս Զինված ուժերում այս կամ այն խնդրի վերաբերյալ: Իրենք տեղեկացված են մեր գործունեությունից»:

«Իրազեկվածությունը ինքնանպատակ չպիտի լինի, զորակոչիկը չպետք է վախենա իր իրավունքը պաշտպանելուց: Շատ դեպքերում գալիս, ասում են՝ բա որ դրա մասին գրություն գրենք, հրապարակայնացնենք, բա երեխու համար վատ չի? Լինի: Պիտի ասեմ՝ ոչ, վատ չի լինի, եթե իրավունքդ կարողանում ես պաշտպանել, եթե ունես առողջական խնդիրներ եւ քեզ բանակ են զորակոչում՝ առանց բուժելու, դա արդեն իրավունքի խախտում է: Եթե մարդն ունի բուժվելու իրավունք, հետո նոր զորակոչվելու, դա միանգամայն նորմալ է»,-ասում է Արմինե Սադիկյանն ու ի հավելումն նշում՝ պետք է դա կիրառել պրակտիկայում ու չվախենալ, պետք է պահանջել բժշկական հանձնաժողովից բժշկական եզրակացությունը տրամադրել, ինչը տեղի չի ունենում.«Ընդհանրապես, երբ հարազատն ուզում է ծանոթանալ այդ փաստաթղթերին, դրանք չեն տրամադրվում: Օրենքով կարգավորված չէ, որ պիտի տան, դա կատարվում է միայն դիմելու դեպքում: Մենք քանիցս արձանագրել ենք, որ եթե նույնիսկ դիմում ենք, չեն տալիս: Հիմա արդեն հասել ենք նրան, որ այդ բժշկական փաստաթղթերը ուղարկվում են զինկոմիսարիատ, տրամադրվում զորակոչիկներին»:

Հրաչ Հովհաննիսյան

# Մեր բանակը կայացած է, թեեւ անելիքներ էլ դեռ շատ կան»

28 հունվարի, 2013



«Կանոնավոր բանակի հիմնադրումը կայացել է կամավորական ջոկատներից: Այն ջոկատներից, որոնք ձեւավորվել են ղարաբաղյան ազատագրական պայքարի բովում»,- այսպիսի գնահատական տվեցին զրուցակիցներս՝ կադրային սպաներ, ազատամարտիկներ, որոնց հետ հանդիպեցի Հայոց բանակի տոնի նախօրյակին:

Բանակի կազմավորումը Շուշվա ազատագրումից հետո տեղի ունեցավ: Բանակաշինության ակունքները այնտեղից եւ ավելի վաղ են սկսվում, երբ սկիզբ առավ ղարաբաղյան շարժումը, կարծում են զրուցակիցներս:

-Ամեն ինչ սկսվեց փետրվար ամսին, երբ տեղեկություն առանք, որ ադրբեջանական Սումգայիթ քաղաքում հայ բնակչության նկատմամբ ջարդեր են իրագործվում,-պատմում է ազատամարտիկ Արագեղեցիկ Հայրիկյանը,- մենք էլ կառավարության շենքի առջեւ հավաքվելով, պահանջեցինք, որպեսզի մեզ զինեին, ղարաբաղյան հողում մեր հայրենակիցներին պաշտպանենք՝ թույլ չտանք մի նոր կոտորած անզեն բնակչության նկատմամբ: Չպետք է մոռանալ, որ խորհրդային կայսրությունում այդ հրապարակային ցույցերից ամեն ինչ սկսվեց: Հետագայում արդեն, մարդիկ հայրենասիրական մղումներով՝ զենքը ձեռքերին պաշտպանեցին հայրենի հողի եզերքը:

Ազատամարտիկն ասում է, թե այսօր հանիրավի մոռացվել կամ ստվերում են մնացել այն մարդկանց անունները, ովքեր մեծ ավանդ ունեն բանակաշինության գործում, ու նրանց անունները համարյա չեն հիշատակվում: Ա.Հայրիկյանը հիշում է գյումրեցի 16 մարտիկներով հավաքագրված առաջին ջոկատը, որի հրամանատարությունը ստանձնեց Միքայել Վարդանյանը:

-Բոլորիս շարք կանգնեցրեց ու հարցրեց, թե ոնց է մարտական ոգին: Բոլորս միասին ասինք՝ լավ: Հետո մոտեցավ, մեր բակլաշկեքին նայեց ու հարցրեց, թե ջու?ր է ըդոնց մեջինը, ասինք՝ բա ոնց: Մոտեցավ, հատ-հատ նայեց, տեսավ ոչ մեկի մեջը ջուր չկա՝ տղաները օղի ու կոնյակ էին լցրել: Այ, էդ պահին էլ ըսավ՝ տղեք, ըսիկ իսկական «շտռաֆբատ» է, խո ջոկատ չէ: Էդ օրվանից էլ մեր ջոկատը ոչ պաշտոնապես կոչվեց էդ անունով: Հետո, պետք չէ մոռանալ, որ ՀԱԲ-ն էլ («Հայոց ազգային բանակ» անվանված ռազմական կամավորական միավորումը) շատ կարեւոր դեր ունեցավ ազատագրական պայքարում՝ Ռազմիկ Վասիլյանը համախմբեց տղաներին: Խելագարների մի ամբոխ էր, որ ամեն մեկը որսորդական հրացանով ելնում էր



տանկի դեմ: Մեր այսօրվա հաղթանակը հենց էդ տեսակի տղաների շնորհիվ ձեռք բերվեց: Ցավոք էսօրվա դրությամբ՝ ով կա, չի զոհվել, հազիվ ծայրը-ծայրին հասցնելով, կապրի:

Ազատամարտիկ Մնացական Մուրադյանը Հայոց բանակի օրը առաջնահերթորեն համարում է հայոց կամավորության տոնը եւ շնորհավորում է բոլոր մարտիկներին, ովքեր կռեցին հայոց հաղթանակը.-Չէ՞ որ նրանց ուսերի վրա կառուցվեց մեր հաղթանակը: Նրանցից շատերն ընկան պատերազմի դաշտում կամ պատերազմից հետո: Մասնակցել եմ Շուշվա առանձնակի՝ դաշնակցական գումարտակի մղած մարտերին՝ Սեֆիլյան Ժիրոյի հրամանատարությամբ: Ես մեծ դպրոց եմ անցել. կարգապահություն, ճշմարտախոսություն, լավ ռազմական պատրաստվածություն: Ջոկատում հիմնականում դաշնակցականներ էին, կային նաեւ ոչ դաշնակցականներ, ովքեր կամավորագրվել էին կռվելու համար: Ու ոչ ոք նրանց չէր տարբերակում ըստ կուսակցական ու ոչ կուսակցական հատկանիշների: Ասեմ, նրանց մեջ կային գիտնական տղաներ՝ համեստ մարդիկ, ովքեր երբեք չմատնանշեցին իրենց այդ առավելությունը: Մենք պատրաստ էինք բանակ ունենալու, մենք արդեն իսկ պատրաստի «հումք» էինք բանակի համար: Այդ բանակը չէր կարող չկազմավորվել. այն օդի ու ջրի պես անհրաժեշտություն էր դարձել: Հնարավոր չէր արդեն, որ ջոկատները առանձին-առանձին կարողանային ճակատային պատերազմ տալ: Մեզ համար բացառված է եղել նահանջի ճանապարհը: Դրանից հետո՝ կանոնավոր բանակ ունենալու շրջանում, ընդգրկվել եմ հինգերորդ բրիգադի կազմում: Նույն կռված ջոկատներն արդեն ներգրավվեցին բանակի կազմում: Այստեղ արդեն կային ժամկետային զինվորներ, որոնց մենք երբեք չենք թողել առաջնային գծում կռվել: Այսինքն՝ մենք իրավունք չենք վերապահել էդ երեխեքին առաջ հրելու եւ նրանց թիկունքում թաքնվելու: Մենք տեսել էինք, գիտեինք, թե ինչ է պատերազմը եւ դրան պատրաստ էինք: Եւ, իսկապես, մարտադաշտում մենք այնպիսի տղաներ կորցրեցինք, ովքեր մեր բանակի հիմնաքարն էին: Ու Արան ճշմարիտ է ասում, որ նրանցից շատերի անունը մոռացության են մատնել այսօր: Դա մեզ համար մեծ ցավ է:

Համբարձում Աթոյանը պահեստազորի կապիտան է: Այժմ հպարտանում է, որ եւ որդին, եւ դուստրը իր ուղիով են ընթանում, որդին վաշտի հրամանատար է, դուստրը՝ զինղեկ: -1992 թվականին ջոկատների գործողություններն ավելի արդյունավետ դարձնելու պահանջով ստեղծվեց բանակը, բռունցք էր պետք դառնալ թշնամու դեմ: Բանակի կազմավորման սկզբից ես զորակոչվել եմ Գյումրիում տեղակայված զորամասերից մեկը, եւ մինչեւ 1994 թվականը, մինչեւ հրադադարի հաստատումը, մասնակցել եմ մարտերին: Այն ժամանակ ենթասպա էի, հետո կապիտանի աստիճան եմ ստացել, 2006-ին ծառայությունս ավարտել եմ: Բայց հիմա էլ հակատանկային գնդում եմ աշխատում՝ քաղաքացիական մասնագիտությամբ: Օգտվելով

առիթից, սրտանց շնորհավորում եմ իմ բոլոր մարտական ընկերներին, իսկ ովքեր էլ այսօր մեզ հետ չեն, չապրեցին հաղթանակի բերկրալի օրերը, խոնարհվում եմ նրանց հիշատակին: Մենք այսօր պարտավոր ենք նրանց բոլորին հիշել:

Էդիկ Կարապետյանը նույնպես ենթասպայի աստիճանից է ծառայության մտել բանակ, ծառայության ընթացքում հասել է փոխգնդապետի աստիճանի, եղել գումարտակի հրամանատար: Չրուցում ես հետը, համեստորեն իր մասին չի էլ ուզում խոսել, ասում է միայն, թե կարոտում է իր զոհված ընկերներին: Եւ միայն մի մխիթարանք է մնացել՝ մտովի ետ բերել նրանց: Ասում է, թե երեւի դա էլ քիչ չէ՝ հիշողության մեջ պահպանվել են նրանց բոլորի դեմքերը:

Կամո Յովակիմյանը ավարտել է Սանկտ-Պետերբուրգի ռազմական ուսումնարանը՝ կադրային սպա է, պահեստազորի փոխգնդապետ: Ազատագրական շարժման ժամանակ ծառայել է ռուսական բանակում: 1992 թվականին դիմում է գրել ու ծառայության անցել հայոց բանակում: Դասակի հրամանատարից զորամասի հրետանու պետի պաշտոնի է հասել, մարտական գործողությունների ժամանակ եղել է դիվիզիոնի շտաբի պետ, հետագայում՝ դիվիզիոնի հրամանատար: «Մարտական գործողությունների ժամանակ թշնամու բավականաչափ զինտեխնիկա ենք վնասազերծել: Մեր դիվիզիոնի սպաները «Մարտական խաչ» շքանշանով են պարգեւատրվել»: Կամո Յովակիմյանը պատմում է, որ բանակի կազմավորման ժամանակ ռազմական որակյալ կրթություն ստացած կադրերի պակաս կար: Շատ հայ սպաներ, ովքեր ծառայում էին խորհրդային բանակում, եկան, համալրեցին ազգային բանակը եւ իրենց փորձը փոխանցեցին այն մարտիկներին, ովքեր ռազմական կրթություն չէին ստացել:

-Մեծ դեր ուներ նաեւ մեր կադրային սպաների մասնակցությունը աֆղանական պատերազմում,-ասում է Յամբարձում Աթոյանը,-նրանք իրենց պատերազմական փորձն ու հմտությունները փոխանցեցին հայ մարտիկներին: Մեր հակատանկային հրետանային գունդը, օրինակ, 27 միավոր ռազմական տեխնիկա է ոչնչացրել: Դա հրամանատար Ապրիյամովի գունդն էր: Նա վիրահայ է, այժմ էլ նախարարության գլխավոր շտաբի պետի տեղակալն է: Պատերազմի ժամանակ հիմնականում դրսից եկած սպաներին էր վստահվում զորամիավորումների հրամանատարությունը: Նրանք խորհրդային գործող բանակի սպաներ էին եղել: Յիմա ես վստահորեն կարող եմ ասել, որ մեր բանակը կայացած է, թեեւ անելիքներ էլ շատ կան դեռ: Յուսով եմ, որ հայոց ներկայիս բանակի սպաներն էլ այնքան արժանավոր կլինեն, որ կշարունակեն նախորդների ստեղծած գործը: Այսինքն՝ մեր հայրենիքի սահմանները կլինեն ամուր եւ թշնամու ցանկացած ոտնձգությունների դեպքում բանակը պատրաստ կլինի ջախջախիչ հարված հասցնել:

Սամվել Յունանյան

# Բանակային մահացությունները նվազեցնելու եւ բանակային բարեփոխումների համար առաջարկությունների փաթեթ 2013

## Բանակային մահացությունները նվազեցնելու եւ բանակային բարեփոխումների համար առաջարկությունների փաթեթ 2013

Փաթեթը մշակվել է ոլորտի խնդիրներով զբաղվող մեկ տասնյակից ավելի փորձագետների, իրավաբանների եւ լրագրողների հետ խորհրդակցությունների արդյունքում: Խորհրդակցություններին մասնակցել են Արթուր Սաքունցը (Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ), Ժաննա Ալեքսանյանը (լրագրող, «Հանուն մարդու իրավունքների» ՀԿ), Արմինե Սադիկյան, Արայիկ Զալյան (ՀՔԱՎԳ), Ծովինար Նազարյան (լրագրող, «Բանակն իրականում» խումբ), Սոնա Այվազյան («Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոն), Լալա Ասլիկյան (փաստաբան), Զարուհի Հովհաննիսյան («Բանակն իրականում» խումբ), Արտաշես Սերգոյան («Խաղաղության երկխոսություն» ՀԿ), Էդգար Խաչատրյան («Խաղաղության երկխոսություն» ՀԿ), ՀՀ ԱԺ պատգամավոր Հրանտ Բագրատյան եւ ուրիշներ:

### Զորակոչային

1. Հանրակրթական համակարգում հատուկ դասաժամեր հատկացնել ապագա զինծառայողների իրազեկմանը, ուսուցմանը, իրավունքների ճանաչմանը ու պաշտպանության համակարգի ծանոթացմանը:

2. Զորակոչված զինծառայողներին տեղաբաշխել ըստ զորամասերի՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, վիճակահանության սկզբունքը դարձնել պարտադիր:

### Ծառայության ընթացքում

3. Հատուկ եւ լրացուցիչ ջանքեր ներդնել սպայական անձնակազմի կրթության եւ մասնագիտացման համար:

4. Բոլոր զորամասերում բացել ժամկետային զինծառայողների կարիքները բավարարող ապրանքների եւ պարենամթերքի խանութներ, ինչը կիջեցնի դասալքության մակարդակը: Հարկ է, որ զորամասերի խանութներում արգելվի ալկոհոլային խմիչքների վաճառքը, ինչպես նաեւ՝ խիստ վերահսկվի, խանութները փակ լինեն զինվորականների քնի ժամին, ինչը կօգնի խուսափել անկարգություններից:

5. ՀՀ բանակում բարձրացնել իրավագիտակցությունը, որպեսզի որեւէ զինվորի իրավունքների պաշտպանությունը մյուս զինվորների կողմից բացասական չդիտվի:

6. Ներդնել ծնողի եւ զորակոչված զինվորի միջեւ ավելի ակտիվ կապի համակարգ, ինչի արդյունքում կնվազեն կապի հայթայթման կոռուպցիոն դրսեւորումները:

**Հայեցակարգային**

7. Ներդնել պետության կողմից զինվորականներին կյանքի եւ առողջության ապահովագրման համակարգ:

8. 5 տարվա ժամանակահատվածում ծրագրել պրոֆեսիոնալ բանակի համակարգի ներդրումը՝ Հայաստանում:

9. Աղջիկներին զորակոչել բանակ՝ 6-12 ամսյա ժամկետով:

10. ՀՀ քաղաքացիներին չզորակոչել զինծառայության ԼՂՀ, քանի որ այս դեպքում՝ օրենքի եւ օրինականության տեսակետից, բազմաթիվ խոչընդոտներ են առաջանում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս զինծառայողները, մեկնելով ԼՂՀ, ծառայում են ոչ թե ՀՀ բանակում, այլ ԼՂՀ ՊԲ զորամասերում, այսինքն՝ այլ պետության բանակում, կամ անգամ ԼՂՀ տարածքում ծառայելիս, ՀՀ քաղաքացին օրենքով համարվի ՀՀ բանակի զինծառայող:

11. Զորամասերում ունենալ հոգեբաններ, ինչը կնպաստի հատկապես ինքնասպանությունների նվազեցմանը: Գուցե արժե, որ նրանք փոխարինեն հոգեւորականներին: Զորամասերում ՀԱԵ հոգեւորականների առկայությամբ որոշակիորեն սահմանափակվում է այլ կրոնական համոզմունքներ ունեցող զինծառայողների խղճի եւ դավանանքի ազատության իրավունքը:

12. Բանակը ապաքաղաքականացնել, բացառել բանակի զորաշարժերը քաղաքական նպատակներով, բացառել բանակի օգտագործումը քաղաքական ուժերի, հասարակական կամ քաղաքացիական շարժումների եւ գործունեության դեմ:

13. Ընտրական

13.1. Բանակում ՀՀ նախագահի եւ ԱԺ ընտրությունների քարոզարշավների ժամանակ ապահովել հավասար պայմաններ բոլոր թեկնածուների համար: Ունենալ քարոզչական վահանակ՝ բոլոր թեկնածուների քարոզչական նյութերով, զորամասերում ապահովել հանրային հեռուստատեսությամբ եւ հանրային ռադիոյով անվճար քարոզչական եթերաժամանակի ամբողջական դիտում եւ ունկնդրում:

13.2. Արգելել բանակում միակողմանի եւ/կամ անհավասար նախընտրական քարոզարշավի իրականացումը:

13.3. Քվեարկության օրը, զինծառայողներին ոչ թե փոխադրել ընտրատեղամաս, այլ ազատ տալ երեք ժամով: Տեղամասերից երեք եւ ավելի կմ հեռավորությամբ տեղակայված զորամասերի զինծառայողներին չորս հերթով տեղափոխել տեղամասի տեղադրության համայնք, տեղամասից առնվազն մեկ կմ հեռավորության վրա եւ ազատ տալ երեք ժամով, այսպիսով բացառել ընտրություններին վերջիններիս մասնակցության վերահսկողությունը:

13.4. Կամ՝ ժամկետային զինծառայողներին օրենքով արգելել՝ մասնակցել ընտրություններին:

14. Հարկավոր է ներդնել ԱԺ-ի կողմից խորհրդարանական վերահսկողության իրականացման համակարգ՝ բանակի ու բանակային հանցագործությունների դեպքերի նկատմամբ: Խորհրդարանական վերսիսկողական մարմնի/հանձնաժողովի կազ-

մում ընդգրկել հավասար թվով պատգամավորների՝ խորհրդարանական մեծամասնությունից եւ ընդդիմությունից, ներգրավելով այնտեղ բոլոր ընդդիմադիր կուսակցություններից առնվազն մեկական պատգամավորի:

15. Պաշտպանության նախարարը պետք է հաշվետու լինի խորհրդարանի առաջ եւ հանդես գա պարբերական հաշվետվությամբ՝ զինված ուժերում առկա վիճակի մասին:

16. Բոլոր տեսակի զինվորական գերատեսչական քննչական, ոստիկանական ու դատախազական մարմինները պետք է լուծարվեն:

17. Բանակի բժշկական եւ բուժական ծառայությունը դարձնել մասնակի քաղաքացիական: Հարկ է, որ զինակոչման ժամանակ զինակոչիկի առողջության վիճակի մասին բժշկական եզրակացություն տան քաղաքացիական բժիշկները, դա չպետք է արվի զինվորական օղակներում, որովհետեւ այդ դեպքում ավելի մեծ է կոռուպցիայի հավանականությունը: Ակնհայտ շահերի բախում կա, երբ զինվորական բժիշկն է տալիս առողջության գնահատականը, որը, զինակոչիկների բավարար թվակազմն ապահովելու համար, ավելի է հակված անտեսել զինակոչիկների առողջական խնդիրները, քան քաղաքացիական բժիշկները:

18. Զինվորական գործերով դատաբժշկական կենտրոնները դարձնել անկախ:

**Մահացությունների դեպքերում**

19. Մահացության դեպքերում ընտանիքին միանվագ փոխհատուցումը սահմանել հանրապետությունում այդ պահին գործող, օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափի երկհարյուրապատիկի չափ:

20. Մահացության դեպքերում ընտանիքին փոխհատուցման ամսական նպաստը բարձրացնել՝ հասցնելով ամսական հանրապետությունում այդ պահին գործող, օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափի հնգապատիկին, իսկ ամսական թոշակը բարձրացնել, հասցնելով հանրապետությունում այդ պահին գործող նվազագույն աշխատավարձի քառապատիկին:

21. Փոխհատուցել, տրամադրել թոշակ եւ նպաստ ոչ միայն սպանությունների, այլ նաեւ ինքնասպանությունների դեպքերում, (կասկածներ կան, որ հաճախ սպանության դեպքը դիտավորյալ որակավորվում է որպես ինքնասպանություն եւ որպես հետեւանք չի տրամադրվում փոխհատուցում, թոշակ եւ նպաստ, ինչպես նաեւ քրեական գործ չի հարուցվում):

22. Պետք է իրականացվի մահացության դեպքերով պատշաճ քննություն:

23. Կազմել զինադադարի ամբողջ ընթացքում արձանագրված մահվան դեպքերի քարտեզ, իրականացնել դեպքերի վերլուծություն ըստ մահացածների զորակոչման վայրի, ըստ սոցիալական դրության, ըստ զինվորական կոչումների, մահվան ժամանակի, տարվա եղանակի, ծառայության ժամկետի, հոգեբանական նկարագրերի, բնակլիմայական պայմանների, առողջական վիճակների եւ այլն: Այս ուսումնասիրությունների եւ վերլուծությունների հիման վրա վերանայել զինծառայության պայմանները եւ այլն:

**Զորացրումից հետո**

24. Զորացրվելիս անցկացնել զորացրված զինվորների բուժզննում: Զինծառայության ընթացքում ի հայտ եկած հիվանդությունների բուժումը դնել պետության վրա, որպես պոզիտիվ պարտավորություն եւ բուժումն իրականացնել պետական պատվերի շրջանակներում:

**Թափանցիկություն**

25. Մանրամասնությամբ հրապարակային դարձնել ՊՆ հիմնադրամ(ներ)ի եկամուտները եւ ծախսերը:

26. Վերահսկողության խիստ եւ նոր համակարգ ներդնել մարտական դիրքերում ծառայություն կրող զինծառայողների, զենք-զինամթերքի հանձնման-ընդունման գործընթացում: Խստացնել զինծառայողների կողմից ստացված փամփուշտների քանակի վերահսկողությունը հերթափոխը ընդունելու եւ հանձնելու ժամանակ:

27. Գաղտնազերծել ՊՆ սպասարկման համար արվող բոլոր այն գնումները, որոնք չեն վերաբերվում զինտեխնիկային, զենքին, զինամթերքին, պաշտպանական ամրություններին, հաղորդակցության մեխանիզմներին: Հրապարակային դարձնել սննդի, համազգեստի, վառելիքի, գրենական պիտույքների, հիգիենիկ պարագաների գնումների մասին տեղեկությունները:

28. Զորամասերում ստեղծել ծնողների եւ քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի համար մատչելի տարածքներ կամ տիրույթներ, որտեղ վերոհիշյալ խմբերի ներկայացուցիչները կկարողանան այցելել պարզեցված թույլտվությամբ: Հնարավորություն ստեղծել քաղաքացիական հասարակության խմբերին պատահական ընտրանքով այցելել զորամասեր եւ ուսումնասիրել, ծանոթանալ տիրող իրավիճակին:

29. Հնարավորություն ընձեռել ծեւավորելու բանակում դիտարկումների անկախ դիտորդական խումբ, որը կկարգավորվի օրենքով սահմանված կարգով եւ չի լինի պաշտպանության նախարարությանը կից:

**Իրավունքների պաշտպանության միջոց ների զարգացում եւ ամրապնդում**

30. Ունենալ ռազմական գործերով Մարդու իրավունքների պաշտպան, կամ ՄԻՊ աշխատակազմում ունենալ հատուկ մասնագիտացված բաժին, որը կզբաղվի միայն զինվորականների իրավունքների հետ ծագած խնդիրներով: Գործող օմբուդսմենը զբաղվում է մարդու բոլոր ունիվերսալ իրավունքներով, ինչը խոչընդոտում է բանակային գործերին արդյունավետ արձագանքելուն:

31. Պաշտպանության նախարարության քննչական բաժինը հարկավոր է հանել ՊՆ ենթակայությունից: Իրական են համարվում ռիսկերն այն բանի, որ պաշտպանության նախարարության ենթակա  քննչական ծառայությունը չի կարող պաշտպանության նախարարության եւ/կամ ՊՆ համակարգի աշխատակիցների շահերի դեմ անաչառ քննություն վարել:

32. Զինվորական գործերով դատավորներին հայտնած բացարկները հարկ է, որ քննվեն այլ դատավորների կողմից:

33. Բանակում տեղի ունեցած հանցագործությունների գործերով հարկ է, որ առանց տուժողի ներկայության կամ գրավոր հրաժարման՝ դատական նիստեր չգումարվեն: Դատաքննության բոլոր փուլերում տուժողի ներկայությունն ապահովելու համար ներդնել բավարար պետական նյութական միջոցներ:

34. Հարկ է, որ նախաքննական մարմինը տուժողին ներկայացնի քրեական գործի պատճենը անկախ այն հանգամանքից՝ տուժողը դիմում ներկայացրել է, թե ոչ:

35. Զինվորական/բանակային մահվան գործերով ընդդատությունը սահմանել ըստ սպանվածի կամ մահացածի բնակության վայրի: Այս հարցը շատ էական է արդարադատության համար, հաշվի առնելով, որ ՀՀ-ն Ղարաբաղում նույնպես զորքեր ունի, եւ դա ոչ մի իրավապայմանագրային հիմքով չի կարգավորվում եւ անհասկանալի է, թե ով՝ ինչ իրավասության ներքո է քննում գործերը: Հայաստանի կենտրոնական եւ հյուսիսային մարզերից տուժող կողմի համար շատ դժվար է մասնակցել դատաքննություններին, եթե դա տեղի է ունենում հարավում կամ ԼՂՀ-ում:

36. Զինված ուժերում զինծառայողների իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացվի ճիշտ այնպես, ինչպես մյուս բոլոր քաղաքացիներինը:

Բանակում 1994թ. մայիսի 12-ից հետո մահացած զինվորականների տվյալների բազայի կազմման

## ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Համար ____, կազմող __________________, «___» __________, 2013

| | | |
|---|---|---|
| 1 | Մահացած զինվորի անուն-հայրանուն-ազգանունը | |
| 2 | Մահացած զինվորի ծննդյան տվյալներ եւ վայրը. | |
| 3 | Զորակոչվելիս առողջական վիճակը. | |
| 4 | Վերջին բնակության հասցեն՝ որտեղից զորակոչվել է. | |
| 5 | Զորակոչման վայրը՝ որտեղից զորակոչվել է. | |
| 6 | Զորակոչման ամիս-ամսաթիվ-տարի. | |
| 7 | Զորակոչման ժամանակ ընտանիքի կազմը եւ սոցիալական վիճակը, ծնողների զբաղվածություն. | |
| 8 | Կրթությունը՝ զորակոչի ժամանակ. | |
| 9 | Զորամաս(եր)ի անվանում(ներ)ը, համար(ներ)ը, եթե կա(ն). | |
| 10 | Մահվան վայրը. | |
| 11 | Մահվան ժամանակը. ժամ, օր, ամիս, տարի. | |
| 12 | Մահվան պաշտոնական պատճառը. | |
| 13 | Մահվան պատճառը, ըստ տեղեկություն հաղորդողների, եթե տարբերվում է պաշտոնական վարկածից. | |
| 14 | Քրեական/դատական գործի մանրամասներ, եթե կան. մեղադրանք, քր. հոդվածներ, դատապարտվածներ եւ այլն. | |
| 15 | Ա. Մահվան փաստով մեղադրյալներ պիտի լինեի՞ն, եթե այո, ապա՝ ովքեր. | |
| 16 | Բ. Եթե մեղադրյալներ կան/կային, ի՞նչ հոդվածով են դատվել/դատվում: | |
| 17 | Գ. Կասկածյալների/մեղադրյալների՝ ռազմական ոստիկանությունում պահման ժամկետները. | |
| 18 | Դ. Արդյո՞ք ճիշտ մարդիկ են մեղադրվել | |
| 19 | Ե. Արդյո՞ք մեղադրանքը արդարացի էր, եթե՝ ոչ, ապա ի՞նչ մեղադրանք պիտի լիներ. | |
| 20 | Զ. Ի՞նչ անօրինականություններ են եղել, եթե այդպիսիք եղել են նախաքննության եւ դատաքննության ընթացքում. | |
| 21 | Ովքե՞ր են որպես փաստաբաններ ներգրավվել | |
| 22 | Ովքե՞ր են/եղել քննիչները | |
| 23 | Ովքե՞ր են/եղել դատավորները | |
| 24 | Ովքե՞ր են/եղել մեղադրող/վերահսկող դատախազները | |
| 25 | Արդյո՞ք գործով կասկածյալները շարունակել են կամ շարունակում են ծառայել բանակում, եթե այո՝ ինչքա՞ն ժամանակ: | |
| 26 | Ի՞նչ փոխհատուցում է ստացել/ստանում զոհվածի ընտանիքը, չափը, տեւողությունը, ի՞նչ իրավական հիմքով է ստանում փոխտահուցումը: | |
| 27 | Կից նյութեր՝ պատճենված, եթե կան. | |
| 28 | Մահացածի կենդանի լուսանկարներ, քանակը. | |
| 29 | Մահացածի լուսանկարներ՝ մահացած վիճակում, քանակը. | |
| 30 | Մահվան դեպքի, քննության եւ դատավարության հետ կապված ԶԼՄ-հրապարակումների պատճեններ կամ համացանցային հասցեներ: | |
| 31 | Այլ տեղեկություններ, որ կուզեին հաղորդել տեղյակները: | |
| 32 | Տեղեկությունների աղբյուրները (եթե հրապարակային են). | |
| 33 | Տեղեկատվության աղբյուրների կոնտակտային տվյալները (եթե հրապարակային են). հեռախոս, հասցե, E-mail | |

# Ծրագրի բյուջեն

**Բյուջեի համառոտագիրը (ամերիկյան դոլարին համարժեք դրամ՝ ($),**

**12 ամսվա համար:**

1. 1320 ($)՝ 1 համակարգիչ, 3 պահարան, 1 սեղան:

2.1. 480 ($)՝ գրասենյակային ծախսեր-1. թուղթ, տպիչի եւ պատճենող սարքի քարթրիջ եւ այլն;

2.2. 2820 ($) գրասենյակային ծախսեր-2. վարձակալության մասհանում, էլեկտրաէներգիա, ջեռուցում, ջուր եւ այլն:

3. 8925 ($)՝ աշխատավարձեր. համակարգող, իրավաբան, իրավաբանի օգնական, լրագրող՝ 12-ական ամիս: Ծրագրի ղեկավարը, հաշվապահը, հանրային կապերի պատասխանատուն, խմբագիրը եւ իրավաբաններից մեկը կամավոր են ներդնում իրենց աշխատանքը ծրագրում:

4. 2588 ($)՝ եկամտահարկեր, սոցվճարներ, 2013 թվի հունվարի 1-ից՝ եկամտային հարկեր:

5. 1320 ($)՝ Կապ, ինտերնետ, փոստ:

6.1. 6240 ($)՝ Տրանսպորտային, ուղեւորություններ Արագածոտնի եւ Արմավիրի մարզի բնակավայրերի կեսից ավելին, Վանաձոր, Երեւան:

6.2. 500 ($)՝Տրանսպորտային ծախսեր քննարկումների եւ հեռուստատեսային քննարկումների մասնակիցների համար. Գյումրի-Արմավիր, Երեւան-Արրմավիր, Վանաձոր-Արմավիր, Երեւան-Գյումրի եւ այլն:

7. 1340 ($)՝ հեռուստատեսային երեք հաղորդում, հայտարարություններ մարզերում եւ արխիվացում:

8. Մոտ 890 ($)՝միջոցառումների կազմակերպում Շիրակի, Արմավիրի եւ Արագածոտնի մարզերում:

9. 3400 ($)՝ տպագրություն, հուշամատյան, առաջարկություններ

10. 120 ($)՝ բանկային ծախսեր

Ընդամենը 29.943 ամերիկյան դոլարին համարժեք դրամ:

Դրամաշնորհը՝ ընդամենը 29.943 ամերիկյան դոլարին համարժեք դրամ:

«Ասպարեզ» ակումբի սեփական ներդրումը ծրագրում դրամական արտահայտությամբ կազմում է մոտ երկու մլն դրամ (տեխնիկասարքավարումներ, կամավորական աշխատանք եւ այլն):

Բյուջեի մանրամասներին ծանոթանալու համար դիմեք levon@asparez.am հասցեով կամ +374 91 821 363 հեռախոսահամարով, առավելագույնը 7 օրում տեղեկությունները կուղարկվեն հետաքրքրվողներին:

# ԿՈՐՍՎԱԾ ՎԱՇՏԸ-2

**«Պաշտպանենք զինվորների իրավունքները-2» ծրագիր**
**Արմավիրի մարզ, Արագածոտնի մարզ**

Բանակում զինադադարից (1994 թ. մայիսի 12) հետո մահացած, սպանված կամ ինքնասպանություն գործած զինվորների մատյան:

Այս գրքի լույս ընծայումը հնարավոր է դարձել իրականացնել Ժողովրդավարության ազգային հիմնադրամի դրամաշնորհային օժանդակությամբ: Այստեղ արտահայտված տեսակետերը պատկանում են հեղինակներին եւ հնարավոր է, որ չհամընկնեն ԺԱՅ-ի եւ իրականացնող կազմակերպության տեսակետներին: «Պաշտպանենք զինվորների իրավունքները» ծրագիրն իրականացնում է «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը» հասարակական կազմակերպությունը:
Հասցե, Հայաստան-3102, Գյումրի, Պուշկինի փ., 96:
Հեռախոս. +37131260522:

This TV program was supported by a grant from the National Endowment for Democracy. Opinions expressed herein are those of the authors and do not necessarily reflect the views of NED and implementing organization. Implementing organization is Journalists' Club "Asparez".
Address: 96 Poushkin Street, Gyumri, Armenia-3102.
Phone: +37131260522:
www.asparez.am; levon@asparez.am
Address: 96 Poushkin Street, Gyumri, Armenia-3102.
Phone: +37131260522:

Թուղթ. օֆսեթ N1, ծավալը 20 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 1000:
«Քաղաքի գրատուն» ՍՊԸ տպարան